



Հ

8

ԽԱՐԱՊԱՆ

ԿԱՄ

ԲԵՐԴՐԵՄԻՑ ԽԱՅԱՏԵՎԵԼ

[Բարոյական թագրիկ. պղայուս Կրօնուան համար]
Հեռանա, 1850]

3947-57

1996-62 8

Ա Ն Զ Ի Ն Ք

ՊՐ . ԱՏՈՄ , աղնուական հողատէր մը :
ԽՈԽԵԲԷՆ , իր մեծ որդին 14 տարւան :
ՎԱՐԴԻ , պղտիկ որդին , 13 տարւան :
ԽՈԽՐՈՎ , աղնուականի տղայ մը , Ռուբենին տարիքով :
ՄԻՀՐԱՅ , իր եղբայրը , Վարդին տարեկից :
ՍԵՐԳԻՅ
ԳՐԻԳՈՐ } ՊՐ . Ատոմին կալուածապահին տղաքը :
ՀԲԱՉԵԱՅ
ՅՈՎՀԱՆՆԵՍ , ՊՐ . Ատոմին ծեր հաւատարիմ ծառան :
ԹԱՄԴԻՅՈՍ , տան ծառայ :

Տեսարաններ ՊՐ . Ատոմին դեղի տան մեծկակ մէկ խցին
մէջն է , որուն քովէն ալ գուռ կայ : Պատուհանները
տախտակէ փեղկ ալ ունին :

ԽՈՍՔԱՎ

ԿԱՄ

ԲԵՐՁՐԵՄԻՑ ԽԵԶՏԵՇԽԵՑ

ՏԵՍՈՒԼ Ը

ԹԱԴԻԷՈՍ : ԱԵՊՆԻ ՀԵ ՀՐԱՅ ՀԱՐԴՐԵՄԻ ԱՐԴՅՈՒՆԻ ԱՐՅԱՆՆԻՐ
ԱՆԻ, ԱՐԴԻՆԻ ՀԵ ՀԱՐԻԿ ԱՐ ՀԵ ՔԻՐԻԿ :

ՈՌՀԱՎԻ ՎԻՆԱՊԵՄ, ՈՌՀԱՎԻ ՀԱՄՐԵՄ, պարապ է .
ՄԻՉՄ պակաս է . միշտ պակաս . թագաւորն ու ձիւ-
աւոր մը չկայ : Պարոնը գալու ըլլայ նէ՝ ի՞նչ աղմուկ
պիտի փրթի . անշուշտ ամենուն կասկածն իմ վրաս
պիտի իյնայ . եւ թէ որ հացս չեմ կորսընցըներ նէ՝
շատ բան է : Ի՞նչ ընեմ, ուր վինապեմ, որու հար-
ցընեմ : Ի վերայ այսր ամենայնի ժամ մը յառաջ
ամբողջ եղած պիտ'որ ըլլան, որ Պարոնը կը խաղար :
Անկէ վերջն ով եկաւ . . . : Տղաք մտան ելան . բայց
ի՞նչպէս կրնայ ըլլալ որ իրենք առած ըլլան : Սակայն
մէյ մը հարցընեմ : (Դռուրս ելլելու վրայ՝ Պը . Արոնը
իւ առանէ, որն որ ներս իւ ճանէր :) Տէր Աստուած .
Պարոնը կու գայ :

ՏԵՍՈՒԼ Բ.

ՊՐ. ԱՏՈՄ ՔԵՆ ՀԵ ԹԱՄԴԻԿՈՒՆ ՆԱՅԵԼՈՒ, ԱՐ ԱՐ ԱՅԼԱՅԼՈՒ

ԱՆՀԱՐԴ ՀԵ ՔԵՆԱՅ :

Ի՞նչ բան կայ, ի՞նչո՞ւ այնպէս այլայլած, ապշած
կը կենաս :

ԹԱԴԻԷՈՍ ԱՆԵԼԵ ԱՅԼԱՅԼՈՒ :

Բան չկայ, Պարոն, չեմ այլայլած :

ՊՐ. ԱՏՈՄ

Ի՞նչպէս չես այլայլած . մէջ մը հայլին նայէ , եւ
րեսդ գոյն չկայ , բոլոր մարմնովդ կը դողդողաս : . . .
Ի՞նչ կ'ընէիր կոր :

ԹԱԴԵՈՍ Հայնալու ճ:

Ճարտրակին արձանները կը շտկէի :

ՊՐ. ԱՏՈՄ սէղնէն ուն երեալու ու նոյելու :

Աս ի՞նչ է . երկու արձան պակաս է :

ԹԱԴԵՈՍ

Ես ալ անոնք փնտռելու վրայ էի :

ՊՐ. ԱՏՈՄ

Ի՞նչպէս կրնայ ըլլալ . քիչ մը յառաջ ամբողջ էին :
Հոս ովկ եկաւ :

ԹԱԴԵՈՍ

ՊՐ. Ռուբէն եւ ՊՐ. Վարդ իրենց ընկերներով
մէկ երկու անգամ եկան գացին :

ՊՐ. ԱՏՈՄ

Քանի՞ անգամ ըստած էի որ հոս չխաղան : Բայց
ապահով ես որ իրենցմէ ուրիշ մարդ ներս չմտաւ :

ԹԱԴԵՈՍ

Հրամեր էք , տան մէջ իրենցմէ ու Յովհաննիսէն
ուրիշ մարդ չկար :

ՊՐ. ԱՏՈՄ

Հա՞ , Վարդը կու գայ :

ՏԵՍԻԼԻԳ.

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՎԱՐԴ

ՊՐ. ԱՏՈՄ

Իմ հոս չեղած ատենա՝ դուք հոս եկեր գացեր
էք , մէջերնէդ ճարտրակին արձանները խառնող եղան :

ՎԱՐԴ

Հրամեր էք , խոսրով ու Միհրան քիչ մը խաղացին :

ՊՐ. ԱՏՈՄ

Չեղի չէի՞ ապսալրած որ ճարտրակիս չդպչիք :

ՎԱՐԴ

Պատուերնիդ. իրենց զբուցեցինք, բայց բանի տեղ չդրին. հազիւ քիչ մը խաղալէն ետեւ կրցանկք զիւրենք համոզել որ հոսկից ելլեն, պարտէղ երթան :

ՊՐ. ԱՏՈՄ

Հետերնիդ չորսերնէդ զատ մարդ կա՞ր :

ՎԱՐԴ

Հրամեր էք, Սարդիսը, Գրիգորն ու Հրաչեան ալմէկտեղ էին. սակայն իրենք չխառնեցին : . . . Բայց ի՞նչ կայ որ, սիրելի հայր. բա՞ն մը եղեր է :

ՊՐ. ԱՏՈՄ

Թագաւորն ու ձիաւոր մը պակսեր է :

ՎԱՐԴ

Շատ բան. ովկ կրնայ առած ըլլալ : Գետինն ինկած կամ կահի մը տակ մնացած չըլլան :

ՊՐ. ԱՏՈՄ՝ Թագաւորին :

Մէջ մ'ալ աղէկ մը չօրս կողմը փնտուէ :

ԹԱԴԵՈՍ

Պարոն, խցին մէջ տեղ չմնաց որ չնայիմ, կահ չմնաց որ մէկ դի չառնեմ չփնտուեմ. անկարելի է որ բան մը մնացած ըլլայ :

ՊՐ. ԱՏՈՄ՝ Վարդին :

Դուն ընկերներուդ քովը գնա, եւ կերպով մը հարցու որ առնող կայ մի : Բայց քաղաքավարութեամբ ու խոհեմութեամբ : Ըսէ որ արդեօք մէջերնէն մէկը անմտադրութեամբ կամ սխալմամբ՝ ճարտրակի արձաններն առած : Է :

ՎԱՐԴ

Գլխուս վրայ, ամէն կերպով կը ջանամ :

ՊՐ. ԱՏՈՄ

Բանը քու վրադ առ. ըսէ որ եթէ չեն դըտնուիր նէ, հայրս ինծի կը սրդողի :

ՎԱՐԴ

Շատ աղէկ : (Կ'ԵՐԵՒՅ :

ՊՐ. ԱՏՈՄ

Թամադէոս, զնա Յովհաննէսն ինծի խաւրէ: (Թամադէոս կ'երթայ:)

ՏԵՍԻԼԻ Դ.

ՊՐ. ԱՏՈՄ Է-ԻՆ ՀԵ ԱՌԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍ

ՊՐ. ԱՏՈՄ Ի-ԻՆ ՀԵ ՀՊԱՅԻԼԻՆ ԻՊԻ-:

Կորսուած արձաններն ըստ ինքեան հոգս չէ. բայց
ովլ ըրած ըլլալը կ'ուղեմ իմանալ: Թէ որ որդւոյց
ընկերներէն մէկն է նէ, պէտք է որ քովերնէն հեռ-
ուացընեմ: ... Բայց ի՞նչպէս կրնայ ըլլալ: ... Ինչ որ
է նէ, Յովհաննէս անշուշա իր հնարագէտ ու ծաղ-
րասէր բնութեամբը գողն երեւան հանելու հնարք մը
կը գտնէ:

ՅՈՎՀԱՆՆԻՍ

Զի՞ս ուղեր էք, Պարոն:

ՊՐ. ԱՏՈՄ

Հա՛, եկուր նայիմ, ճարտրակիս արձաններէն եր-
կու հատը կորսուեր է:

ՅՈՎՀԱՆՆԻՍ

Ի՞նչ կ'ըսէք, Պարոն, ովլ կրնայ առած ըլլալ:

ՊՐ. ԱՏՈՄ

Ես ալ անոր համար զքեզ կանչեցի, որ նայինք
ու գողը կամ ըստ պատահման առնողը գտնենք:

ՅՈՎՀԱՆՆԻՍ

Մէկու մը վրայ կասկած ունիք:

ՊՐ. ԱՏՈՄ

Բան մը չեմ կրնար ըսել. տղաքմտեր ելեր, խա-
ղացեր են. բայց որո՞ւն վրայ կրնամ կասկածի եր-
թալ:

ՅՈՎՀԵԱՆՆԻՍ

ԱՌԴԵՈՔ Թաղեռու . . . : Բայց քանի որ տան մէջն է նէ, վրան ամենեւին անհաւատարմութեան նշան մը տեսնուած չէ : Ի վերայ այսր ամենայնի պէտք է որ քննութիւն ըլլայ . ես ալ յանձն կ'առնեմ որ քննութիւնն ինձմէ սկսի :

ՊՐ. ԱՏՈՄ

Չեմ ուզեր որ շատ շշուկ ելլէ . կը բաղձայի որ առանց այնպիսի քննութեան ու շփոթութեան բանը լըննայ :

ՅՈՎՀԵԱՆՆԻՍ ՀՐԱՒԵԼՈՒ:

Բաղձանիքնիդ կը կատարուի, Պարոն . միայն թէ տղաք բոլոր հոս ժողվին . թէ որ առնողն իրենցմէ մէկն է նէ՝ անշուշտ կը յայտնուի :

ՊՐ. ԱՏՈՄ

Աղէկ . բայց խոհեմութեամբ, չըլլայ որ իրենց ծնողացը հետ գլխու ցաւ մ'ունենամ : Անոր համար յառաջ մէյ մը գուրսը նայէ :

ՅՈՎՀԵԱՆՆԻՍ

Կինաք ապահով ըլլալ, Պարոն, որ ընելիքս ամենեւին մէկու մը պատուոյն վնաս չիհասցըներ . բացի գողցողէն, որն որ պէտք է յայտնուի եւ իր գործողութեան ամօթը կրէ : (Պուրս կ'ելլէ :)

ՏԵՍԻԼԵ.

ՊՐ. ԱՏՈՄ, ՌՈՒԻԲԵՆ

ՌՈՒԻԲԵՆ ՀՐԱՒԵԼՈՒ:

Աիրելի հայր, վարը տղոց մէջ մեծ շփոթութիւն մ'ելաւ : Ամէնքն ալ Վարդին հարցմունքին վրայ իրար անցան ու տրտմեցան . բոլորն ալ կ'ուզեն գալ հրամանոցը առջեւն իրենք զիրենք արդարացընել : Բայց ամենէն աւելի խորով շատ այլայլեցաւ, ըսելով որ իրեն մեծ նախատինք է որ զինքը գողի տեղ կը դնեն :

ՊՐ. ԱՏՈՄ

Չեմ կարծեր որ Վարդ անպատշաճ ու անխռչեմ
խօսք մ'ըսած ըլլայ:

ՈՌՈՒԲԷՆ

Չէ, որչափ որ կարելի է նէ զգուշութեամբ խօսեցաւ. բայց Խոսրով լսելուն պէս՝ շուտ մը բռնկեցաւ, եւ անմիջապէս կ'ուղէր ձգել երթալ. սակայն եղայրը զինքը մէկդի առնելով՝ համոզեց որ կենայ: Ի վերայ այսր ամենայնի չիհանդարտիր եւ կը սպառնայ որ հօրը զբուցէ:

ՊՐ. ԱՏՈՄ

Հայրը տունը չէ, ես զինքն արդէն յառաջագոյն պիտի տեսնեմ, բանը կը հասկըցընեմ:

ՈՌՈՒԲԷՆ

Ի՞նչ որ է նէ, ամէնքն ալ կ'ուղեն գալ իրենք զիրենք արդարացընել:

ՊՐ. ԱՏՈՄ

Արդարացընել հարկաւոր չէ. որովհետեւ ամենեւին մէկու մը վրայ կասկած չունիմ:

ՏԵՍԻԼ. Զ.

ՊՐ. ԱՏՈՄ. ՈՌՈՒԲԷՆ. ՎԱՐԴ. ԽՈՍՐՈՎ. ՄԻՀՐԱՅ. ՍԱՐԳԻՍ. ԳՐԻԳՈՐ. ՀՐԱԶԵԱՅ

ՊՐ. ԱՏՈՄ

Բարով եկաք, ոիրելիքս. ի՞նչպէս էք, աղէկ էք:
ՄԻՀՐԱՅ

Շատ աղէկ ենք եւ հրամանոցը ծառայելու պատրաստ:

ԽՈՍՐՈՎ

Պարոն, Վարդ զբուցեց որ հրամանոցը ճարտրակի արձաններէն երկու հատը պակսեր է: Ասոր վրայ շատ կը ցափնք. բայց կը յուսանք որ վրանիս կասկածի չէք երթար: Ես գոնէ ինձի ու եղբօրս երաշխաւոր կ'ըլլամ:

ՊՐ. ԱՏՈՄ

Աւստուած պահէ՛ : Ի՞նչպէս կրնայի ձեզի պէս բարեկիրժ երիտասարդներու վրայ կասկած ունենալ, Կը յուսամ միանդամայն որ Վարդ անքաղաքավարութիւն մ'ըրած չըլլայ:

ՄԻԶՐԱՅ

Չէ, ամենեւին . միայն ըսաւ որ երկու արձան պակսեր է եւ հարցուց որ արդեօք մէջերնէս մէկը տեղմը դրած կամ կողմ մը ձգած եւ կամ անմտադրութեամբ հետն առած է : Ես ամենեւին չեմ դիտեր:

ՊՐ. ԱՏՈՄ

Ասոր վրայ ապահով եմ: Բոլոր յանցանքն իմ որդիքներուս է, որ անոնցմով խաղալ տուին:

ՍԱՐԳԻՍ

Զմեղ կը ճանչնաք, Պարոն . դիտէք որ ես ու եղբարքս հոս եկած ատեննիս բանի մը չենք դպչիր:

ԳՐԻԳՈՐ

Թէ որ այնպէս բան մ'ըլնէինք նէ, աներնուագոնքն ներս մանելու չեինք:

ՀՐԱԶԵԱՑ

Կ'ուղէք նէ, Պարոն, ապահով ըլլալու համար վրանիս փնտուեցէք: Ես իմ կողմաննէս պատրաստ եմ:

ՊՐ. ԱՏՈՄ

Շատ աղէկ, զաւկըներս: Արդէն իմ միտքս յայտնեցի, որ մէջերնէդ ամենեւին մէկու վրայ կասկած չունիմ: Բայց չեմ ալ դիտեր որ ի՞նչ ըսեմ: Կորսուած բաները՝ ոչինչ բան մըն են. ի վերայ այսր ամենայնի ի՞նչ եղած ըլլալը կ'ուղէի իմանալ:

ԽՈՍՐՈՎ

Աւելի պղտիկ բան ալ ըլլար, չեինք յանդգներ առնելու: Բայց . . . երբ որ տան մը մէջ սպասաւոր կ'ըլլայ նէ, բան մը ապահով չէ: Օրինակի աղադաւ մեր տունը՝ որչափ բան կը պակսի. եւ ամէն անդամ կամ ծառայի մը կամ աղախնոյ մը քովէն կ'ելլէ:

ԱԼԱՐԴ

Սեր սպասաւորներուն վրայ ամենեւին ասանկ դեպք
մը պատահած չէ:

ՈՌՈՒԲԻԵՆ

Ես ամենուն համար ալ երաշխաւոր կ'ըլլամ:

ՊՐ. ԱՏՈՄ. ԽԱՆՐԱԴՅԱՆ:

Թեպէտ ես ալ սպասաւորներուս վրայ ապահով
եմ. բայց թէ որ հոս եղած ատենդ՝ մէկու մը վրայ
բան մը տեսած ես նէ, զըռոցէ:

ԽՈՍՔՈՎ

Չէ, չէ: . . . Ստոյգ է որ մենք պարտէզ երթալու
ատեն՝ թաղէոս ներս մտաւ:

ՊՐ. ԱՏՈՄ.

Անոր համար ես երաշխաւոր կ'ըլլամ. երկու տարի
է որ քովերնիս է, ամեն բան ձեռքն է, եւ շատ
անդամ առիթ ուներ առանց իմացուելու աւելի մե-
ծաղին բաներ դողնալու. եւ երբեք բան մը պակ-
սած չունի:

ԽՈՍՔՈՎ

Ով դիտէ մեր երթալէն ետեւ ուրիշ ով ներս
մտաւ:

ՊՐ. ԱՏՈՄ.

Կրնայ ըլլալ. անոր համար կ'ուզեմ աւելի ճշդիւ
քննել: Դուք քիչ մը ատեն հոս կրնաք զբօսնու-
խոսքով.

Հրաման տուէք, Պարոն, որ ես երթամ: (ՈՒԽ-
ԵՆՔՆԵՆ) Գիտես վերաբերուս ուր է:

ՈՌՈՒԲԻԵՆ

Յովհաննէս վերցուց. իրեն հարցընելու է:

ՄԻՃՐԱԿԱՆ

Հայրերնիս ըստ որ իրիկունը կու դայ զմեզ կ'առ-
նէ. ոտքով այնչափ տեղինչափ պիտօր երթանք:

ՊՐ. ԱՏՈՄ.

Չէ, հիմա երթալ չըլլար. օդը շատ տաք է:

Հայրդ խոստացաւ որ իրիկուան կերակուրը քովերնիս
կուտէ. պէտք է որ դուք ալ կենաք։ (Դուրս իւլիք։)

ՏԵՍԻԼԻ.

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐԸ Բաց և ՊՐ ԱՏՈՄԻՆ

ԽՈՍՔՈՎ՝ ՌԱՆՔԻՆԻ և ՎԱՐԴԻՆ։

Կատ կը զարմանամ որ ինչպէս հայրերնիդ մեր
վրայ (զի՞նին ու Եղբայրը իւ ցուցնէ) այնպիսի կաս-
կած կրնայ ունենալ։ Ինչպէս կրնայ ըլլալ որ մեզի
պէտ ազնուական տղաք բան գողնան։

ՎԱՐԴԻ

Ի՞նչ կ'ըսես, Խոսրով. ձեր վրայ ովկ կասկած ու-
նեցաւ։ Նայէ հոս քանի հոդի ենք. մէջերնէս մէկը,
ես ալ Եղբայրս ալ առանց մտադրութեան դրապան-
նիս կրնայինք դնել. հօրս ըսածն աս է։ Գողնալու
վրայ ամենեւին խօսք չկայ։

ԽՈՍՔՈՎ

Ինչո՞ւ պիտի չըլլայ։ Ստորին աստիճանի մարդկան
զաւակներ (Սարդին եւ անոր Եղբարցը իւ նայէ) կրնան
ասանկ բան ընել. բայց այնպիսի տղաք ալ մեր մէ-
ջը մտնելու արժանի չեն։

ՍԱՐԳԻՍ

Անտարակոյս խօսքը մեր վրայ է։ Նայուածքդ ան
կը ցուցընէ։ Բայց ես ալ քեզի յայտնի կը զրուցեմ
որ ստորին աստիճանի մարդիկներու մէջ շատ անգամ
ազնուամիտ անձինք կը դտնուին, եւ մարդս չէ թէ
միայն ծննդեամբ։ Հապա իր վարմունքովն ալ ազ-
նուական կ'ըլլայ։

ԽՈՍՔՈՎ

Ստուգիւ շատ աղուոր կը խօսիս. բայց քու բոլոր
Ճռուոմաքանութեամբդ եւ ազնուական վարմունքովդ՝
քաղաք գտնուած ատեննիս՝ մեր ընկերութեան մէջ
չէիր կրնար մտնել. հոս գեղն ուրիշ բան է։

ԱՌՈՒԲԻԷՆ

Թողութիւն կ'ընես, շատ անդամ հօրս մօրս բերանէն լսած եմ որ ասանկ (Երե+ Եղբար+ը իւ Սու-Զընէ) բարեկիրթ տղոց հետ տեսնուելնուս վրայ շատ դոհ են. եւ խիստ շատ անդամ մեզի ըսած են որ Երանի թէ քաղաքն ալ իրենց հետ մէկտեղ ըլլայիք:

ՎԱՐԴ

Ստոյգ այնպէս է. եւ ես փորձիւ կը տեսնեմ որ իրենք շատ աւելի աղեկ կրթուած են քան թէ քաղաքին մէջ ունեցած շատ ընկերներնիս:

ՄԻՀՐԱՅՆ՝ ԽԱՐԱՀՅԱ:

Այսօր չեմ գիտեր ինչ եղեր ես, միշտ անխոհիւմ ու անքաղաքավարական խօսքեր կը զբուցես:

ԽՈՍՐՈՎ

Դուն ալ չափէն աւելի խոհեմութեամբ ու քաղաքավարութեամբ կը խօսիս: Անտարակցյա գիտեմ որ դուն ալ ինծի պէս կը մտածես, բայց չես համարձակիր յայտնելու: Չես գիտեր, մայրերնիս միշտ ինչ կը զբուցէ. դուն ալ ինծի պէս շատ անդամ բերնէն լսած պիտ'որ ըլլաս, թէ Ստորին աստիճանի մարդիկ միշտ ստորին աստիճանի եւ անարդական գործքեր կրնան գործել:

ԱՌՈՒԲԻԷՆ

Ի՞նչ, ուրեմն կը կարծես որ աս իմ բարեկամներս կրնան ուրիշն բանն առնել, գողութիւն ընել:

ԳՐԻԳՈՐ

Բան մը գիտես, կամ մէջերնէս մէկուն ճարտրակին մօտիկնալը տեսար, համարձակ ըսէ:

ՃՐԱՉԵԱՑ

Իսկ ես տեսայ որ Խոսրով բոլոր արձանները մէկիկ մէկիկ առած կը զննէր:

ԽՈԽՐՈՎ. Իւ սոսունեւ Հրան վաղիւ ի՞սում. Հետաներն ու սոսունեւն ու շնուր իւ բանին:

Ի՞նչ ըսիր, հիմա զքեղ...:

ԱՌՈՒԲԻՔՆ

ԿԵցիր, դիտոցած ըլլաս որ իրեն դպչիս նէ՝ ինձի
հետ խօսք կ'ունենաս :

ՍԱՐԳԻՍ

Ես ալ հոս եմ. թէ որ պղտիկ եղբօրս բան մ'ը-
նես նէ, ստուգիւ կ'ըսեմ՞ ոչ աղնուականութիւն կը
նայիմ, ոչ մեծութիւն :

ԽՈՍՐՈՎ

Ինք զինքս անպատուած կը սեպէի՝ թէ որ ձեզի
պէս ստորին աստիճանի մարդկան հետ կոռի բըռ-
նուէի :

ՎԱՐԴ

Անշուշտ աւելի մեծ պատիւ մը չեր քեզի պղտիկ
տղայ մը ծեծելը :

ԽՈՍՐՈՎ

Չեմ կրնար համբերել որ ուրիշն իմ պատուցյս
նախատինք բերող խօսք ըսել :

ԱՌՈՒԲԻՔՆ

Խօսողը տղայ մըն է, որուն որ պէտք է ներել
ճշմարտութիւնն ըսելը :

ԽՈՍՐՈՎ

Ճշմարտութիւնն, ճշմարտութիւն. ի՞նչ կ'ուզես
ըսել :

ՎԱՐԴ

Աս կ'ուզէ ըսել որ արձանները զննեցիր :

ՏԵՍԻԼ:

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՒ ՊՐ. ԱՏՈՄ

ՊՐ. ԱՏՈՄ

Ի՞նչ բան կայ, զաւկըներս. ձայներնիդ չորս կողմը
բռներ է. վէճերնիդ ի՞նչ բանի վըայ է :

ԽՈՍՐՈՎ

Կը յուսամ, Պարսն, որ ձեր կալուածապահին

տղոց ինծի ըսած նախատական խօսքերն անպատճեցէք թողուր:

ՊՐ. ԱՏՈՄ

Ծատ կը զարմանամ ըսածիդ վրայ . իրենց բերանէն երեք մէկու մը գէմ նախատական խօսք լսած չեմ: Բայց ի՞նչ զբուցեցին:

ՌՈՒԲԵՆ

Խոսրովին իրենց վրայ ցուցուցած արհամարհանքը կրել չուզեցին . աս է բոլորը :

ՎԱՐԴԻ

Սիրոք կը նեղանայ որ մեր ընկերներն իրեն պէս աղնուականի տղաք չեն :

ՍԱՐԳԻՍ

Որովհետեւ կը զբուցէր որ մենք ստորին աստիճանի մարդկան զաւակ ըլլալովնիօ՝ աւելի մեր վրայ կրնայ կասկած ըլլալ, պատասխան տուի որ հասարակ մարդիկներու մէջ ալ շատ աղնուամիտ անձինք կը գտնուին:

ՊՐ. ԱՏՈՄ

Ասոր վրայ չեմ կարծեր որ տարակոյս ունենաս, Խոսրով:

ԽՈՍՔՈՎ

Չէ . Բայց սա պղտիկը կ'ուզէր ըսել որ յանցաւորն ես եմ:

ՀՐԱԶԵԱՑ

Ուրիշ բան չզբուցեցի բայց եթէ որ Խոսրով արձանները զննեց եւ նայեցաւ . եւ ինք ասոր վրայ ուղեց զիս ծեծել:

ՊՐ. ԱՏՈՄ

Պարապ խօսք պիտ'որ ըլլայ . ասանկ բան բարեխրատ երիտասարդի մը եւ ոչ մաքէն կրնայ անցնիլ:

ՏԵՍԻԼԻ ԹՎ.

ՅԱԽԱԾԱՑՄԱՑՔ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԵՍ

ՅՈՎՀԱԾԱՑՄԱՑՔ Ի ԴՐԱ ԽՈՊՈՒԹՈՒԹ ՊԻՎԱՂԱԼ Ի ՏԵՇԵ,
 ԱՐԱԿԱՆ ՀԱՐԱ ԱՐԱ Ի ՀԱՅԻՒԹՈՒԹ Ե:

Պարոն, ամենեւին բան մը չկրցայ դանել. տան
մէջի մարդիկներն անմեղ են: Ասիկա այնպէս ստոյգ
է, ինչպէս ստոյգ է որ աքաղաղս մարդարէ է:

ՊԲ. ԱՏՈՄ

Աքաղաղդ. աքաղաղն հոս ի՞նչ դործք ունի:

ՏՎԱՔ ԷՒԺԱՆԱԼԱՆ ԴՎՈՒՅՆԻ:

Աքաղաղ. աքաղաղ. կողովին մէջ տքաղաղ մը
կայ եղեր:

ՅՈՎՀԱԾԱՑՄԱՑՔ

Հրամեր էք, աքաղաղ: Նայեցէք: (Լոնը գիշ ճը
վեր իւ վերջնե եւ ստոյգալին ժլուիը իւ սրույընե:) Բայց
զարմանալի աքաղաղ մըն է, որն որ ամենեւին նմա-
նը չունի. ինծի անանի բաներ կը յայտնի որ մարդ
չիդիտեր: Երբ որ տան մէջ բան մը կորսուի, իմ
դործողութիւնս ընկերուս պէս՝ որո՛ւն քովին ըլլալը
շուտ մը ինծի կ'իմացընէ: Ով որ բան մը դողցած ու
պահած է, պէտք է որ դուրս հանէ, թէպէտ գետ-
նին տակ հարիւր կանգուն խորունի թաղուած ըլլայ:

ՎԱՐԴ

Առկից աղեկ բան կայ. ուրեմն կրնայ իմանալ որ
կորսուած արձաններն որո՛ւն քովին են:

ՅՈՎՀԱԾԱՑՄԱՑՔ

Ասոր վրայ տարակոյս չկայ: Անցածները ործանոցը
քթախոտի տուփս կորսուեցաւ. մէյ մ'ալ դայի ա-
քաղաղս բերի. ամենեւին մէկուն թող չտուի որ
դուրս ելլէ: Գործողութիւնս կատարեցի, եւ շուտ
մը դողն երեւան ելաւ:

ՀՐԱԶԵԱՑ

Ուրեմն աքաղաղդ կը խօսի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հապա՞ . . . ամէն աքաղաղները կը խօսին եւ
իրար կը հասկրնան . բանն ան է որ մարդիկ ալ ա-
նոնց լեզուն հասկրնան :

ԱԱՐԴ

Նայինք սա բոլոր ճարտարութեամբ արձաններն
երեւան կրնա՞ս մի հանել :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ամէն բանէն յառաջ պէտք է որ սենեալը մութ-
բլայ:

ՌՈՒԻՔԵՆ

Ծուտ մը փեղկերը կրնանք դոցել: (Տղոցմէ աման+
պատուանաները ի՞երեւան եւ փեղկերը կը դոցեն, աման+ ալ
կողովն ծածկոց էիլ մը կը բանան կը նային . Թայն խսու-
րով ուելլ կը իշուայ եւ էիլ մը այլայլունիւն կը ցուցը-
նէ: Յովհաննէս դուրս ի՞ելլէ:)

ՄԻՀՐԱՅ

Ստուգիւ աս աքաղաղը տարբեր կերպարանք մ'ու-
նի . նայեցէք աչուրներն ի՞նչպէս սուր է:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ, կը հաւտաս որ Յովհաննիսին ըսածին պէս
բան մը կրնայ ընել: Ես չեմ հաւտար:

ՌՈՒԻՔԵՆ

Ես ալ չեմ հաւտար: Բայց նայինք Յովհաննէս
ի՞նչ պիտ'որ ընէ . անշուշտ ծիծաղելու բան մը պիտի
հանէ:

ԽՈՍՐՈՎ

Ուրեմն՝ դուն ալ չես հաւտար որ աքաղաղն այն-
պիսի զօրութիւն մ'ունենայ: Ան ծեր շատախօսին
վրայ ի՞նչչափ պիտի ծիծաղիմ: (Սէնեակը կը միւննայ:)

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Այսպէս աղէկ է: Ով որ մաքուր խիղճ ունի նէ
մօտ դայ . որուն որ խիղճն անմաքուր է նէ՝ խցէն
դուրս ելլէ եւ աքաղաղիս զօրութենէն դողայ: (Կո-

զովը ի՞ւստոնէ աԵնեալին ամենին մուլլ կողմը իւր պանի :) Հիմա դուք, Պարոնիկներ, մէկիկ մէկիկ եկեք, ձեռուրնիդ լաթին տակ խոթեցէք . աքաղաղը շօշափեցէք եւ շօշափած ձեռուրնիդ կոնակնիդ բոնելով՝ քովէ քով անշարժ կեցէք : Թէ որ կրոստած արձանները ձեզմէ մէկուն քովն է նէ, աքաղաղս իր ձայնովը զանիկա կ'իմացընէ : (Յովնաննէս անիմանալի խօսիեր իւ խօսի, եւ ողոց նշան իւնէ որ ըստու իսպարեն . բայց մէջերնէն մէին սկսիլ չուղեր :)

ՊՐ. ԱՏՈՄ

Աս ի՞նչ է . կարծես թէ մէջերնէդ ամենեւին մէկը մաքուր խիղճ չունի . հայ նայինք, սկսեցէք :

ՀԻՄՉԵԱՑ իւ Նար, Յերէւ լոնին դաւ իւ Խոնե եւ ագու շուտ իւ օշուին :

Հա՛, հա՛, չխօսի՛ս . ահաւասիկ, արձանները դողն ես եմ, զբուցէ նայիմ :

ՅՈՎՀԱՅԱՆԵԿԸ

Մարդու պէս շօշափեցէք . հա՛ սանկ . հիմա ձեռուրնիդ կոնակնիդ դրէք : Մէկ կողմը կեցէք :

ՌՈՒԲԻԷՆ նոյնպէս ի՞նէ եւ ՀՅԱԼԵԱՅԻՆ ժուկ իւ իւնայ :

Ես ալ չեմ եղեք :

ՎԱՐԴԻ նոյնպէս :

Չխօսի՛ս . մարդ ես նէ ըսէ որ դողցողն ես եմ :
ՄԻՀԻԱՆ

Չկան պէս լուռ կը կենայ : (Չեր+ը իւնակը չերներ :)
ՅՈՎՀԱՅԱՆԵԿԸ

Ձեռուրնիդ կոնակնիդ : (Սարդիս եւ Գրիգոր զլսուրով իւ հրամացնեն որ յառաջ երեայ : Խոսքով դժուռաբանիւն իւ սուցընէ :)

ՊՐ. ԱՏՈՄ

Խաղը մ'աւրեր . յառաջ եկուր :

ԽՈՍՐՈՈՎ

Տղոց հետ տղայ պէտք է ըլլալ : (Սարդիս եւ Գրիգոր ալ իւր մանակն :

ՅՈՎՀԵԱՆՆԻՍ

Չեռուրնիդ կոնսակնիդ : (Տղա + ամենուը մէկանց իւ ակնին բարյայայն շէծաղել :)

Պ. ԱՏՈՄ

Կամ արձաններն ասոնցմէ մէկուն քով չէ, կամ քու աքաղաղդ իր զօրութիւնը բոլորովին կորսունց ըցեր է :

ՅՈՎՀԵԱՆՆԻՍ

Չէ, չէ : (Տղա) Պարոնիկներ, անշարժ կեցէք . իմ աքաղաղս միշտ մի եւ նոյն զարմանալի աքաղն է : Չեռուրնիդ առջեւ մի բերեք : (Ոմանի որենինին իւ շարժին :) Տեղերնեդ մի շարժիք, բաի. ապա թէ ոչ՝ ամեն բան տակն ու վրայ կ'ըլլայ : (Պր. Արտօնին) Պէտք է որ ես երթամ լրյու բերեմ եւ արուեստա ուրիշ կերպով մը փորձեմ : (Գլուխը շարժելով :) Ասոր մէջ ծածուկ բան մը պիտ'որ ըլլայ : Ծնորհք բրեք, աղեկ միտ գրեք որ աս Պարոնիկները աեղերնին հանդարտ կենան ու կարգերնին չփոխեն : (Դուրս իւելէ :)

ԽՈԽԻՔԻՆ

Արդեօք ինչ պիտ'որ ընէ : Նայինք ինչպէս գլուխ պիտ'որ ելլէ :

ՀՐԱԶԵԱՑ

Պարոն, մէյ մը աքաղաղին կրնամ նայիլ :

ՊԲ. ԱՏՈՄ

Չէ, ամենեւին տեղերնեդ մի շարժիք :

ՍԱՐԳԻՍ

Քիչ մը չես կընար համբերել :

ՊԱՐԴ

Ես թող չեմ տար որ քովիններս տեղերնին շարժին :

ԽՈԽՐՈՎ

Բայց դիսէք աս անհամ խաղը համբերութիւնս կը հատցընէ :

ՊՐ • ԱՏՈՄ

Քիչ մ'ալ համբերեցէք, անշուշտ ալ շտա չիւ-
քշեր:

ՅՈՎՀԱՆՆԻՍ յերեւ ճրադավ ներս իւ հոնե եւ հրաշեն
օտիկնառըւ:

Չեռուլնիդ ասդին: Չէ, ան ձեռքը չէ: Կոնրիկ
ձեռուլնիդնայիմ: — Դուք չէք եղեր, մէկդի դացեք:
ՀԲԱՉԵԱՅ յերեւ իւ նայե եւ իւ սիս պորալ:

Տէր Աստուած, աս ինչ է ձեռքս խափշկի ձեռ-
քի պէս սեփ սեւ է եղեր: (Տղաւ կիբառըւն համբե-
րեւ՝ ամենին ալ մէկն կ'ուղղն յետուընին նայել:)

ՅՈՎՀԱՆՆԻՍ բարիանառըւ:

Չեղի հանդարտ կեցէք, ըսի: Բոլոր աշխատու-
թիւնս պարապ պիտի հանեք: (Տղաւ կը հանդարդին,
եւ մէկն մէկն իւ նայե:)

ԽՈՒԲԵՆ

Գարշ. իմ ձեռքս ալ սեւցեր է:

ՎԱՐԴ

Աղտուտ Յովհաննէս. իմ ձեռքս ալ, իմ ձեռքս ալ:
ՄԻՃՐԱՅ

Ան գարշելի աքաղաղին ես ինչ ըսեմ, բոլոր
զբեստիս թեւն ալ աղտուտեր է:

ՍԱՐԳԻՍ

Չեմ գիտեր ծիծաղիմ, չէ նէ բարկանամ:

ԳՐԻԳՈՐ

Նայինք սա աղտուտ խաղին ծայրն ուր պիտ'որ
երթայ:

ԽՈՍՔՈՎ բարիանառընեւայն իւ:

Իմ ձեռքս մաքուր է մնացեր:

ՅՈՎՀԱՆՆԻՍ մէկն պէտքին իւ բանե ու իւ խոնդ:

Ուրեմն գուք էք եղեր, արձանները ձեր քովին ես
եղեր: Ծուտով դուրս հանեցէք, չէ նէ՝ արտեստիս
զօրութեամբն երեսնիդ ու բոլոր մարմիննիդ անանկ կը
սեւցընեմ, որ կեանքերնուդ մէջ միշտ սեւ կը մնաք:

Ի՞նչ, եղբայրս սեւ :

ՅՈՎՃԱՆՆԵՍ

Համ, սեւ, ածխոյ կամ խափշկի մը պէս :

ՎԱՐԴԻ ԽԱՐԱՎՈՒՅՆ :

Թէ որ առած ես նէ, դուրս հանէ :

ՊՐ. ԱՏՈՄ՝ ՅՈՎՃԱՆՆԻՅՆ :

Ըրածիդ աղէկ միտ դիր :

ՅՈՎՃԱՆՆԵՍ

Աղէկ գիտեմ, Պարսն, որ իր քովի է, իմ առուեստո չիկրնար սխալիլ : Թէ որ դուրս չիհաներ նէ, պէտք է որ վրան քննութիւն ընեմ . բայց ան ատեն՝ վայ իրեն, ստուգիւ պէտք է որ սեւնայ :

ԽՈՍՔՈՎ՝ Քոյնը ներած եւ լիովնած :

ԱՌԴԵԶ առանց մտադրութեան . . . դուցէ սխալ մամբ քովս մնացած ըլլայ: (Գրդանները իւ նայի:) . . . Ստոյգ է . . . պէտք է խոստովանիմ որ ձեռքս առած կը խաղայի: (Իբրեւ նէ գրդաննեն ըստ պատման ժան գրանձի պէս:) Իրօք ալ քովս են եղեր: Որուն մտքէն կրնար անցնիլ: (Տղաւ երար իւնցնեն, շնորհած ինչ ըստլիւննեն չեն հետեր: Սորքէս եւ Գրէժոր իւլիւրը իւ բանան:)

ՊՐ. ԱՏՈՄ

ՅՆՎՀԱՆՆԻՍ, լոյսն ու աքաղաղը դուրս տար: (Կամաց:) Որուն քովը դանուածը ծառայք չիմանան:

ՅՈՎՃԱՆՆԵՍ

ԳԼԽՈՒՍ վրայ: (Գուրա իւլլէ:)

ՊՐ. ԱՏՈՄ

Զաւկրներս, դացէք վարը ձեռուընիդ աղէկ մը լուացէք, որ վրանիդ դլուխնիդ չաղտոտի: (Տղաւ դուր իւլլէն:) Խոսրով՝ քու ձեռքդ մաքուր է, դուն կրնաս հոս կենալ:

ՏԵՍԻԼ Ժ.

ՊՐ. ԱՏՈՄ, ԽՈՍՔՈՎ

ՊՐ. ԱՏՈՄ

Խոնարով, ըրածիդ վրայ չես ամրէնար։ Դուն՝ ոք քիչ մը յառաջ ընկերներուդ ազնուական չըլլալէն կ'ամրէնայիր, իրենց պէս տղոց հետ գտնուիդ քեզի նախատինք կը սեպէիր. աս ըրածդ կարծեմ քու ազնուականութեանդ պատիւ ըլլալու դործ մը չէ։

ԽՈԽՐՈՎՆ ՀՅՈՒՅԵՆ:

Թողութիւն տուեք, Պարոն ... ձեռքս առած ... կը խաղայի ... առանց միտ գնելու ... չդիանալով ... չեմ դիտեր ի՞նչպէս եղեր է։

ՊՐ. ԱՏՈՄ

Ասոնք բոլոր պարապ, շինծու խօսքեր են։ Կարծեմ քեզի վրադ նայե ըստած ատեն՝ դրապաններուդ մէջ կրնայիր փնտուել։ Թա՛ որ նոյն ատեն քովէդ ելլէր նէ, անմտադրութեամբ եղած բան մը կը սեպուեր, ուստի եւ դիւրաւ թողութիւն կ'ընդունէիր։ Խակ հիմա։

ԽՈԽՐՈՎՆ:

Ստոյգ կ'ըսեմ, Պարոն։ Խսկղբան քովս մնացած ըլլալը չէի գիտեր։ Ետքը երբ որ իմացայ նէ՝ ամրէնցայ դուրս հանելու, որ չըլլայ թէ վրաս կասկածի երթըցուի։

ՊՐ. ԱՏՈՄ

Վարդին ձեռքովն անսանկ կերպով մը հարցընել տուի, որ կարծեմ ամրէնալու պատճառ մը չկար։

ԽՈԽՐՈՎՆ:

Նոյն ատեն մաքէս ելած էր։

ՊՐ. ԱՏՈՄ

Բայց գրապանիդ մէջ ըլլալնին գէթ ան ատեն կը յիշէիր՝ երբ որ աքաղաղին դպչելէն, ձեռքդ վրան քսելէն դպուշացար։

ԽՈՍՔՈՎ

Ո՞վ ըստ որ չդպայ, ձեռքս վրան չքսեցի: Ատու-
գիւ . . . :

ՊԲ. ԱՏՈՄ

Բաւական է. ձայնդ քաշէ. գողովթեանդ վրայ
սուտզբուցութիւն ալ մ'աւելցրներ: Գիտցած ըլլաս
որ մոլովթիւնը միշտ կաղ է. մարդս որչափ որ ծա-
ծուկ պահելու ջանայ, միշտ կը յայտնուի եւ յան-
ցաւորը խայտառակ կ'ընէ: Բայց նայէ, անով բռնուե-
ցար՝ որով որ կ'ուզէիր յանցանքդ ծածկել: Թէ որ
ձեռքդ աքաղաղին վրայ քսած ըլլայիր, քու ձեռքդ
ալ սեւցած կ'ըլլար: Բայց որովհետեւ կը տարա-
կուսէիր որ գուցէ Յովհաննիսին ըրածն իրօք կա-
խարդութիւն է, անոր համար աքաղաղին ձեռք
չդպցուցիր. Եւ ասով ամենուն առջեւը խաղը ու
խայտառակ եղար: Սակայն չարիքին՝ իսկզբան դար-
ման տանելու է. անոր համար առ իրիկուն հայրդ ե-
կած տաեն՝ ամեն բան իրեն կը պատմեմ:

ԽՈՍՔՈՎ որով ի՞նչնայ:

Կ'աղաշեմ, Աստուած սիրէք նէ, հօրս մի զրու-
ցէք. վրաս ինչ պատիժ կը դնէք նէ, սիրով կը կա-
տարեմ, միայն հայրս չիմանայ:

ՊԲ. ԱՏՈՄ

Չէ, պէտք է որ ըսեմ. աւելի աղէկ է որ հիմա
իմանայ ու դարման տանի, քան թէ այնպէս մեծ-
նալով՝ իր անուան նախատինք ըլլաս:

ԽՈՍՔՈՎ

Կը խոստանամ, կ'երդնում որ մեջ մ'ալ ասանկ
բան չիպատահիր:

ՊԲ. ԱՏՈՄ

Գուցէ մինչեւ հիմա հաղար անդամ ասանկ խոս-
տումներ ըրած ես: Այսօրուան գործողութեանդ ա-
մեն պարագաներն ինծի գուշակել կու տան որ ա-
սիկա առջի գողովթիւնդ չէ:

ԽՈՍՔՈՎ.

Չե, ստուգիւ առջի անդամն է եւ վերջին անդամը պիտ'որ ըլլայ: Առած ատենս՝ կը կարծեի որ արձանները պարզապէս խաղալիկ մըն են: ... Ո՛չ, կ'աղաչեմ, աս անդամ միայն հօրս մ'ըտեք: Ուրիշ անդամ վրաս ասանկ բան մը տեսնելու կամ լսելու ըլլաք: ...: (Լովին ու նեծեժանէն յայնը կը կրի:)

ՊՐ. ԱՏՈՄ

Թէ որ ես չզրուցելու ալ ըլլամ, ի՞նչպէս կրնամ արդելուլ որ ուրիշները չիմացընեն. որովհետեւ Յովհաննէս եւ բոլոր ընկերներդ գիտեն: Քանի որ միտքս կու գայ նէ, ես կ'ամրէնամ: Բայց ըսէ տեսնեմ. աս առած արձաններդ ի՞նչ պիտի ընէիր. ամենուն առջեւը չէիր կրնար խաղալ. գուցէ կ'ուզէիր ծախել կամ ուրիշն պարդեւ տալ:

ԽՈՍՔՈՎ

Ես ալ չեմ գիտեր: Աչքիս աղուոր երեւցան, առի գրպանս դրի, միայն առնելու համար:

ՊՐ. ԱՏՈՄ

Խոսրով, Խոսրով. Հաւտա ինծի, մեծ վտանգի մէջ ես: Այսպէս առանց ընելիքդ գիտնալու ուրիշներուն բանն առնել: Բայց ստոյգ ըսէ. ասիկա առջի անդամն է:

ԽՈՍՔՈՎ ստոյգի լալու:

Չ... չէ. ընկերներէս շատ անդամ պղտիկ մղտիկ խաղալիկներ առած եմ... եւ որովհետեւ երբեք չյայտնուեցան, անոր համար այսօր ալ կարծեցի թէ չ'իմացուիր:

ՊՐ. ԱՏՈՄ

Ասիկա զիս աւելի կը վախցընէ: Բայց ըսենք թէ մարդիկ չիմանան. Աստուած ալ չ'իմանար: Սակայն եղածն եղած է. եւ գուցէ այսօրուան գէպքը քեզի օդտակար կ'ըլլայ, թէ որ ինչպէս որ պէտք է նէ պատժուիս:

ԽՈՍՔՈՎ

զարոն, դարձեալ կ'աղաչեմ։ Աստուծոյ սիրոյն համար՝ միայն հօրս մ'ըսէք։ Ուրիշ ի՞նչ պատիժ ըւլայ նէ՝ սիրով կը կատարեմ։ Որու որ կ'ուզէք նէ՝ ըսէք. մօրս ըսէք. դաստիարակիս ըսէք. ստոգիւ խիստ մարդ է, բայց աւելի կ'ուզեմ որ ինք իմանայ՝ քան թէ հայրս :

ՊԲ. ԱՏՈՄ

Լաւ. աս անգամ հօրդ բան մը չեմ ըսեր. բայց աւելի հօրդ համար, որպէս զի չայլայի, քան թէ քեզի համար։ Միայն թէ աս օրերս անգամ մը պէտք է որ դաստիարակիդ հետ ինծի դաս, եւ քիչ մը յառաջ ըրած խոստմունքո՛ անոր առջեւն ալ ընեւ Ես ալ իրեն կ'աղաչեմ որ վրադ աղէկ զգուշութիւն ընէ, եւ աս տեսակ փոքր բան մ'ալ տեսածին պէս՝ այսօրուան դէպքը չէ թէ միայն հօրդ, հապա հրապարակաւ ամենուն պատմէ։ Ասոր կը հաւանի՞ս :

ԽՈՍՔՈՎ

Հրամեր էք, ամենայն սիրով։ Ինչպէս ըսի, ի՞նչ պատիժ կ'ուզէք նէ՝ տուէք, ի՞նչ թէութիւն կ'ուզէք նէ՝ դրէք. պատրաստ եմ ամէնն ալ կատարելու։ Բայց ի՞նչպէս ընեմ, թէ որ ձեր որդիքը, մէկալ ընկերներս, կամ ծառաներնէդ մէկն ըսելու ըւլայ նէ։

ՊԲ. ԱՏՈՄ

Կը տեսնե՞ս, ո՞րդեակս. նայէ մէկ յանցանք մը ի՞նչչափ անհանդստութիւն, ո՞րչափ անձկութիւն կը պատճառէ. մարդս պակսութիւն մ'ըրած ատեն մեծութիւնը չիմանչնար. բայց ետքը չարաչար կը զգայ։ Ինչ որ է նէ՝ կը ջանամ որ ծածուկ մնայ. բայց . . .

ԽՈՍՔՈՎ

Ճնորհակալ եմ. բոլոր կենացս մէջ ձեզի երախտագէտ կ'ըլլամ. երբեք աւ ըրած շնորհքնիդ չեմ մոռնար :

ՊՐ. ԱՏՈՄ

Բայց մէկ թէութիւն մ'ալ կը դնեմ։ Պէտք է որ
որդւոց ընկերներէն՝ զիրենք արհամարհելուդ եւ կաս-
կածելի ընել ջանալուդ համար՝ թողութիւն խնդրես։
ԽՈՍՔՈՎ

ԳԼԽՈՒՍ վրայ . կը ճանչնամ որ պատժոյ արժանի եմ։
ՊՐ. ԱՏՈՄ

Յանցաւոր ու պատժոյ արժանի ըլլալդ խոստովա-
նիլը բաւական չէ . պէտք է որ ինք զինքդ ուղղելու
ջանաս : Մէյ մը մտածէ որ բարձրամտութեանդ եւ
ուրիշներն արհամարհելուդ համար՝ հիմա ինչչափ
պէտք է որ արհամարհուիս : Առ տեսնես հիմա հա-
սարակ մարդու զաւկըներն իրենց վարմունքովը քեզ-
մէ որչափ վեր են :

ԽՈՍՔՈՎ

Իրաւունք ունիք :

ՊՐ. ԱՏՈՄ.

Թէ որ քու ուղղութեանդ չբաղձայի, մէյ մ'ալ
թող չէի տար որ տունս ոտք կոխես : Սակայն կու-
զեմ իմանալ որ խօսք կը բռնես : Բայց այսչափս
բաւական է, ընկերներդ կու դան :

ՏԵՍԻՆ ԺԱ.

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐԸ, ՄԻՀՐԱՆ, ՌՈՒԲԵԿՆ, ՎԱՐԴԻ,
ՍԵՐԳԻՄ, ԳՐԻԳՈՐ, ՀՐԱԶԵԱՅ

ՄԻՀՐԱՆ ԵՐԵՎԱՆ ՀՐԱՅՐ :

Ի՞նչ ըրիր, անամօթ . հայրս իմանալու ըլլայ նէս
ի՞նչ պիտօր ըսէ :

ՊՐ. ԱՏՈՄ

Անմտադրութիւն՝ ըսեմ, թեթեւամտութիւն՝ ը-
սեմ, ես ալ չեմ գիտեր, բան մըն է ըրեր է . ետ-
քը ամբւցեր է խոստովանելու : Ի՞նչ եւ իցէ, եղածն
եղած է : Պէտք է մոռնալ : Բայց զձեղ արհամար-

ՀԵԼՆ (ԵՐԵ+ ԾՊԱՐ ՊՊԸ) Եւ յանցանկը ձեր վրայ ձգել
ուղելը՝ չեմ կրնար այնպէս դիւրաւ ներել:

ՍԱՐԳԻՍ

Պարոն, իր տեղը ես հրամանոցմէ թողութիւն կը¹
խնդրեմ: Ընկերութեան մէջ ասանկ դէպքեր յաճախ
կը պատահին, այսպիսի բաներուն ամենեւին միտ
դնելու չե:

ՊՐ. ԱՏՈՄ

Խոսրով, ահաւասիկ՝ ազնուամտութիւն սորվէ:

ԳՐԻԳՈՐ

Ասիկա խօսք ընելու բան մը չե: Եղածն ալ մար-
դու մը չենք ըսեր: Անանկ չե՞ մի, Հրաշեայ, դուն
ալ մէկու մը չես զրուցեր:

ՀԲԱՋԵԱՑ

Ստուգիւ չե: ապա թէ ոչ՝ թէ որ եղածին հա-
մար խոսրով յանդիմանութիւն կամ պատիժ մառ-
նելու ըլլար նէ՝ ստուգիւ շատ կը տրտմէի:

ԽՈՍՐՈՎ՝ ԷՇԻՆ ԻՇ ԹԵՇԻՆ ԱՇ ՅԵՇԻՆ ԻՇ ԲՐԱՆԿ:

ՈՌՃԱՓԻ զիս կ'ամրէցընէք, որչափ կը խոնարհեցը-
նէք: Աս ձեր ազնուական վարմունքն՝ ինծի ամէն
պատժէն աւելի սաստիկ պատիժ է: Ուրեմն այսօ-
րուան իմ դէշ վարմունքիս վրայ մէկու մը բան չե՞ք
ըսեր:

ՍԱՐԳԻՍ

Կրնաս բոլորովին ապահով ըլլալ:

ԽՈՍՐՈՎ

Հաղիւ կրնամ համարձակիլ ձեղի աղաշելու որ
ասկէ վերջը միշտ բարեկամ մնանք:

ԳՐԻԳՈՐ

Քու բարեկամութիւնդ մեղի միշտ բաղձալի է:

ՄԻՀՐԱՑ

Բայց, Խոսրով, դիանաս որ ամէնքը լոելու ալ
ըլլան, ես չեմ ըսեր: Այսպէս ամենուն առջեւը
խայտառակ ըլլալ:

ՊՐ. ԱՏՈՄ

Չեմ կարծեր որ անանկ բան ընես . թէ որ մենք
ամէնքս իրեն ներեցինք , դուն ալ պէտք է որ ըրա-
ծը մոռնաս : Բայց ուրիշ աւելի օգտակար եւ եղ-
բայրական սիրոյ աւելի համաձայն բան մը կրնաս ը-
նել : Դուն իրեն վրայ տեսուչ եղիր . եւ երբ որ ու-
րիշ անգամ ասանկ յանցանքի մը մէջ իյնալու ըլ-
լայ նէ , ինծի ըսէ . ան ատեն այսօրուան ըրած յան-
ցանքին պատիժն ալ կ'ընդունի : Բայց կը յուսամ
որ խօսք կը բռնէ , եւ մէյ մ'ալ ասանկ բան չ'ըներ :

ԽՈՍՔՈՎ

Ստուգիւ կը բռնեմ . այսպիսի բան անշուշտ մէյ
մ'ալ չիպատահիր :

ՊՐ. ԱՏՈՄ

Նայէ որ խօսքդ բռնես . եւ որպէս զի բռնես՝ այս-
օրուան դէպքը միշտ աչքիդ առջեւն ըլլայ :

ՀՐԱԶԵԱՑ

Խօսքդ բռնէ , հա՞ . չէ նէ՝ Յովհաննէս զքեզ
ատուգիւ սեփ սեւ կ'ընէ :

Ա Խ Ա Ր Ե Վ Ե Լ

Տ Ե Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա

Ա Խ Ա Ր Ե Վ Ե Լ Ա Խ Ա Ր Ե Վ Ե Լ

Ա Խ Ա Ր Ե Վ Ե Լ

Ա Խ Ա Ր Ե Վ Ե Լ Ա Խ Ա Ր Ե Վ Ե Լ Ա Խ Ա Ր Ե Վ Ե Լ

Ա Խ Ա Ր Ե Վ Ե Լ

Կ Ա Մ

Ա Խ Ա Ր Ե Վ Ե Լ Ա Խ Ա Ր Ե Վ Ե Լ

Ա Ն Զ Ի Ն Ք

ՊՐ . ՀԵԹՈՒԽՄ :

ՍԵՊՈՒՀ $\left\{ \begin{array}{l} իր որդիկը : \\ ՄԵՍՐՈՎ \end{array} \right.$

ԿԻՐԱԿՈՍ , ՏԵՐ աղքատ մը :

ՊՐ . ԲԱՐԴԱՐ $\left\{ \begin{array}{l} զր . ՀԵՂԾՈՎՈՂԻՆ բարեկամները : \\ ՊՐ . ՆԵՐՍԵՆ \end{array} \right.$

ՏԵՐԱԲՈՒՅՆԸ ամաբանոցի մը սրահին մէջն է :

ՍԵՊՈՒՀ

ԿԱՄ

ՍՈՒՏՈՅ. ՐՈՅՑՑ ԶԴՅԱՑԵԸՆ.

ՏԵՍԻԼ Ե.

ՊՐ. ՀԵԹՈՒՄ, ՍԵՊՈՒՀ, ՄԵՍՐՈՊ

ՊՐ. ՀԵԹՈՒՄ ՍԵՊՈՒՀ ՄԵՍՐՈՊ:

Աիրելի զաւակս, քու վրադ շատ գոհ եմ. մեր
առջի ծառան՝ կիրակոսին ըսածներէն իմացայ որ
դուն վրան մեծ հօդ ունիս եւ իրեն ամէն կերպով
կ'օգնես եղեր: “Հրեշտակ մըն է, որ իմ երջանկու-
թեանս վրայ կը հսկէ, ըսաւ. բայց չեմ կրնար ա-
նունն ըսել, դադանի պահելու խօսք եմ տուեր,,:
Տարակցս չունիմ, սիրելի Սեպուհս, որ ան ըսած
հրեշտակը դուն ես: Այսպէս քու զբօսանացդ հա-
մար տուած ստակս աղքատներուն օգնելու համար
գործածելից շատ մեծ ուրախութիւն պատճառեց ին-
ձի. Աստուած ալ աղքատներուն տուածդ հարիւրա-
պատիկ կը հատուցանէ քեզի:

ՄԵՊՈՒՀ

Աս բանիս մէջ կը ջանամ ձեռքէս եկածին շափ
հրամանոցը գեղեցիկ օրինակին հետեւիլ, սիրելի հայր:

ՄԵՍՐՈՊ ինքն իրին:

Ի՞նչ, Սեպուհ թող պիտի տայ որ հայրս կարծէ
թէ....:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ ՄԵՍՐՈՊԻՆ:

Դուն ալ, տղաս, ան լուռ ու ծածուկ բնութիւնդ
մէկդի ձգէ. մեծ եղբօրդ պէս դուն ալ անկեղծաւոր
եղեր, բաց սիրա ունեցիր, վերջապէս ամէն բանի մէջ
իրեն նմանէ. ան ատեն աշխարհքիս վրայ ինծմէ եր-
ջանիկ հայր չեղտնուիր:

Հայիր . . . :

ՊՐ . ՀԵԹՈՒՄ Խօսուց կորելով:

Սուտղրուցութիւնն անանկ մոլութիւն մըն է, որ կամաց կամաց մարդը վերջին աստիճանի գէշութեան կը տանի: Երբ որ մէկը նոյն մոլութեան գէմ իսկրզան անդ չխպատերազմիր, ինք զինքն իր ձեռօքը դժբախտութեան մէջ կը ձգէ, մարդ նախ առանց միտ զնելու սուտ կը զրուցէ, ետքը սուտղրուցութիւնն իրեն սովորութիւն կ'ընէ, անանկ որ զրեթէ անկարելի կ'ըլլայ մէկդի ձգելը, եւ այսպէս բալոր կեանքին մէջ նոյն դարշելի մոլութիւնը վրան կը մնայ: Ամէնքը սուտղրուցէն կը փախչին. անոր խօսած ատենը՝ ամէն մարդ իր քովինին՝ “Մի հաւտար, սուտ կը խօսին, կ'ըսէ: Մարդուս ասկից աւելի նախատական բան կրնայ ըլլալ: Ամենամեծ ճշմարտութիւնն ալ ըսէ, հաւտացող չ'ըլլար:

ՄԵՍՐՈՊԻ պաղպահութէ:

Հայիր, հաւտացողէք, սուտղրուցութիւնը վերջինն աստիճանի կ'ատեմ, երբէք սուտ խօսած չունիմ:

ՊՐ . ՀԵԹՈՒՄ

Ո՞րշափի անդամ առիմժ ունեցեր եմ աս գարշելի մոլութեանդ համար զքեղ յանդիմանելու. բայց գեռժամանակ կայ, նայէ որ շակուիս . . . : (Ժամանակաց նայելով:) Պարտիզանս ինձի կը սպասէ, պէտք է որ երթառ: (Պառար կ'ելլէ:)

ՏԵՍԻԼԻ

ՄԵՍՐՈՊԻ ՍԵՊՈՒՀ

ՄԵՍՐՈՊԻ ՔԵ առէն ըստ ինալին երեւ:

Ո՞հ, եղայր. այսպէս միշտ թողլ պիտի տաս, որ հայրս վրաս առանկ գէշ կարծիք ունենայ, եւ զիս ամենեւին պիտի չարդարացընեն: Կայէ, սիրելի

եղբայրս . սիրտս ցաւով եւ հեծութեամբ լեցուն է . հօրս բոլոր սէրը դուն քեզի կը յափշտակես եւ թող կու տաս որ ես այնպէս ամէն անդամ յանդիւ մանութիւն լսեմ : Ստուգիւ կը զրուցեմ , թէ որ անդամ մը միայն լսէի որ զիս չըրած մէկ բարի գործքիս համար կը գովեն , բերնովս չյայտնէի ալ նէ՝ գոնէ այլայլութեամբս եւ ամընալովս կը ցուցընէի որ նոյն գովութեան արժանի չեմ : Ինծի անանկ կ'երեւայ որ չեմ կրնար երբեք իմս չեղածն ինծի սեպհականել :

ՍԵՊՈՒՀ

Ուրեմն զիս գովի տեղ կը դնեա : Չեմ հասկընար ինչ ըսել կ'ուզես , քիչ մը բացայայտ խօսէ :

ՄԵՍՐՈՊ

Նայէ , Սեպուհ . հայրս քեզի այնչափ սէր ցուցուց այսօր , զքեղ գովեց ու գգուեց՝ կարծելով որ Կիրակոսին բարերարութիւն ընողը դուն ես : Բայց ինծի անանկ կ'երեւայ որ դուն ան խեղճին ամենեւին օգնութիւն ըրած չես , ասանկ բան մը մաքեդ ալ անցած չունի . այնպէս չէ մի : Ուրեմն հօրերնուա՝ զքեղ անոր բարերարը կարծելով՝ քեզի ցուցըցած սէրը քուկդ չէր , ուրիշնն էր , եւ դուն ուրիշն բանը քեզի սեպհականեցիր :

ՍԵՊՈՒՀ

Ըսածդ ստոյգ է : Բայց Կիրակոսին զըռուցած հրեշտակն ով է :

ՄԵՍՐՈՊ

Ինչու կ'ուզես զիս ստիպէլ անանկ բան մը յայտնելու , որն որ պէտք է գաղտուկ մնալ :

ՍԵՊՈՒՀ

Ուրեմն դուն ես . . . : Ո՛վ սիրելի եղբայրս , հիմա ստուգիւ ըրածիս վրայ կը ցաւիմ . թողութիւնս տուր . ալ իմ չարաչար պակութիւնս սրտանց կ'ատեմ : Եկուր , եկուր , երթանք անմիջապէս ամէն բան հօ-

բերնուս յայտնենք : Պէտք է որ քեզի հասուցում
ընեմ . պէտք է որ քեզի պատճառած նախատինքս
ու ցաւս՝ իմ ամօթովս քաւեմ . եկուր , եկուր :

ՄԵՍՐՈՊ

Չէ , չեմ երթար , Ա՞պուհ . Հայրելնիս արտաքոյ
կարգի մեծ ցաւ կ'ունենայ թէ որ զինքը խաբած
ըլլարդ իմանալու ըլլայ : Միայն կ'աղաչեմ ասկէ վեր-
ջը զգուշացիր որ ուրիշ անդամ չինաս նոյն պակ-
սութեան մէջ՝ որն որ վերջապէս գլուխդ մեծամեծ
նեղութիւններ ու վշտեր կրնայ բերել : Որպէս զի
աւելի դիւրութեամբ յաղթես , երբոր առիթ մը կը
պատահի եւ կ'իմանաս որ իյնալու վրայ ես , երեսս
նայէ . ես ան տաեն քեզի անանկ կերպարանք մը
կ'ընեմ , որ զրուցելու սուտդ բերնէդ հանելու չես
համարձակիր : Ըսէ , Եղբայր , աս դաշնադրութիւնն
յանձն կ'առնես :

ՄԵՊՈՒՀ

Ի՞նչ ըսել է յանձն կ'առնես : Աիրով եւ շնոր-
հակալութեամբ կ'ընդունիմ աս առաջարկութիւնդ ,
որն որ քու բարի սրտիդ եւ ինձի ունեցած մեծ
սիրոցդ յայտնի նշանն է . միայն աս քու սերդ բաւա-
կան է խելքս գրուիս բերելու : Ա՛հ , Եղբայր , երանի
թէ ես ալ քեզի նմանէի :

ՏԵՍԻԼԻ Գ.

ՄԵՍՐՈՊ , ՄԵՊՈՒՀ , ՊԲ . ՀԵԹՈՒՄ

ՊԲ . ՀԵԹՈՒՄ բարիտոն :

Ասիկա շտեսնուած , շլսուած բան է , անանկ բար-
կացած եմ որ . . . : Պարտէզս այնպէս ապականէլ :

ՄԵՍՐՈՊ ին + էրէն :

Ի՞նչ եղեր է արդեօք . . . :

ՊԲ . ՀԵԹՈՒՄ

Իմանալու ըլլայի թէ ով է իմ գեղեցիկ նարնջե-
նիս այնպէս ծաղկաթափ տերեւընկեց ընողը . . . :

ՍԵՊՈՒՀ ինչ իրմէ :

Տէր Ասառուած, թէ որ իմանայ որ ես եմ:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Հոս եկէք նայիմ: Ուրիշը չիլրնար ըլլալ՝ բայց եթէ դուք, դրսէն մարդ եկած չէ. կամ երկուքնիդ մէկտեղ կամ մէջերնէդ մէկը՝ այնչափ անգամ արգելել բանի տեղ չդնելով՝ իմ սիրուն ծառս ճղակտուր էք հաներ: Մօտ եկէք:

ՍԵՊՈՒՀ պարագաներն իւրուարանուն:

ՈՇ, հայր, ես չեմ, կը հաստատեմ որ ես չըրի:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Ուրեմն, Մեսրոպ, ստուգիւ դուն ըրած պիտ'որ ըլլաս:

ՄԵՍՐՈՊ

Հայր, քանի օր է որ պարաիզին ան կողմը գայած չունիմ:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Զայնդ քաշէ, սա սովորական ստերդ մի սկսիր:

ՄԵՍՐՈՊ, Սեպուհին ծանուան նշաններ ի՛ւնէ, բայց անիւս ամենեւին եղբօրն երեսը վիճակիր:

ԱԵՊՈՒՀ, Եղբայր:

ՍԵՊՈՒՀ՝ առանց Մեսրոպին նոյելու:

Ես չեմ, հայր,

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Ո՛վ ըլլան անշոշտ կ'իմանամ, եւ վայ յանցաւուրին. թէ որ խոստովանելու ըլլաք, կը ներեմ: (Քիւ ճը իւնալին վերջը:) Որովհետեւ չէք ուզեր ըսել՝ դուրս ելք:

ՄԵՍՐՈՊ իւ սիւ երեալ, եւ ուստիւնը որ եղբայրը աւովն չեւըրժիր՝ նեւեն իւ բանէ իւ ժաշկ:

Եկուր, Եղբայր, Երթանք: (Դաստիա իւլլին:)

ՏԵՍԻԼ Դ.

ՊՐ. ՀԵԹՈՒՄ առանցքն :

Մեսրոպն է, տարակոյս չկայ, այլայլութենէն, եւ ըեսներուն կարմրելէն յայտնի կը տեսնուի: Կ'երեւայ որ սուտզրուցութեան մէջ սիրտը խստացեր է. ի՞նչ պէս կրնամ արդեօք աս մոլութիւնն ուղղել: Մէջ մ'ալ առանձին հարցընեմ: Աստուած տայ որ չհաստատուիմ կարծեայս մէջ թէ որդիս աս պզտիկ հասակէն անսանկ գարշելի մոլութեան մէջ այնչափ յառաջ է դացեր: (Կը իսկնէն:) Մեսրոպ, ներս եկուր:

ՏԵՍԻԼ Ե.

ՊՐ. ՀԵԹՈՒՄ, ՄԵՍՐՈՊ

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Կայէ, Մեսրոպ, իմ կեանքս բռնած ճամբովդ կը դառնացընես. կը յուսայի որ խրատներս ու յանդիմանութիւններս զքեզ ճամբու կը բերեն. բայց հիմա տրտմութեամբ կը տեսնեմ որ հասակիդ մէջ յառաջ երթալուդ չափ՝ մոլութեանդ մէջ ալ կը հաստատուիս: Սակայն ըստ արժանւոյն պատիմ տալէն յառաջ ուղեցի վերջին փորձ մ'ալ ընել: Յանցանքդ խոստովանէ, Մեսրոպ, ստոյգն ըսէ. ասովմիայն կրնաս ներողամտութեան արժանի ըլլալ:

ՄԵՍՐՈՊ

Ապահով եղէք, սիրելի հայր, որ եթէ ըսած յանցանքնիդ դործած ըլլայի, անմիջապէս ոտուընիդ իյնալով՝ թողութիւն կը խնդրէի:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Միշտ մի եւ նոյն շըջանները կ'ուղես բանեցընել. գոնէ ասկէ ետեւ ալ ան խաբէական միջոցները թողտուր: Քեզմէ պարզ խոստովանութիւն մը կ'ուղեմ:

ՄԵՍՐՈՊ

Արնամ մի սուտ զբուցելով ինք զինքս ամբաստանել:

ՊՐ . ՀԵԹՈՒՄ

Միայն ինք զինքդ ջատագովելու համար սուտ կը բաս զրոյել, անանկ չէ մի: Թէ որ ծառս ապականողը դուն չես նէ՝ գոնէ ընողը դիտես:

ՄԵՍՐՈՊ

Հայր: (Ին+ իրեն:) Ի՞նչ ընեմ, տէր Աստուած:

ՊՐ . ՀԵԹՈՒՄ

Ըստ ապատախան տուր: Յանցաւորը կը ճանչնաս, թէ չէ:

ՄԵՍՐՈՊ

Հրամեր էք, կը ճանչնամ:

ՊՐ . ՀԵԹՈՒՄ

Ուրեմն ըսէ:

ՄԵՍՐՈՊ

Չեմ կրնար:

ՊՐ . ՀԵԹՈՒՄ

Այսպէս կամացս դէմ անհնազանդ կ'ըլլաս:

ՄԵՍՐՈՊ՝ աւագներն արցուանուլ:

Հայր, ի՞նչ խեղճ վիճակի մէջ կը դնէք զիս: Իմ սէրս ու յարդութիւնս հրամանոցը ցուցընելէն աւելի բանի մը չեմ բաղձար. ի վերայ այսր ամենայնի կամ պէտք է որ անհնազանդ ըլլամ, կամ սուտ խօսիմ եւ կամ ուրիշին յանցանքն յայտնեմ:

ՊՐ . ՀԵԹՈՒՄ

Թշուառ տղայ: Ո՛վ կրնար երեւակայել որ աս պղափիկ հասակէդ ասանկ խարէութիւններ ու կեղծաւորութիւններ սորված ըլլաս: Գոնէ եղբօրդ օրինակը վրադ աղդեցութիւն ընէ: Տես, ինք ի՞նչ կերպով կը վարուի, բոլոր իր ընթացքին մէջ ի՞նչ պարզմտութիւն եւ անկեղծութիւն կը ցուցընէ: Ի՞նչ կ'ըլլար՝ դուն ալ իրեն նմանէիր: . . . Ուրեմն չես ուղեր խօսիլ:

ՄԵՍՐՈՊ

Որչափ կը ցաւիմ, սիրելի հայր, որ հրամանոցը որտնեղութեան պատճառ կ'ըլլամ:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Անուղղայ տղայ. դուրս ելիր: Ա՛Լ բաւական համ-
բերեցի. պէտք է որ ասկէ ետեւ հետդ ուրիշ կեր-
պով վարութիմ: Ստախօսութիւնդ ու կեղծաւորու-
թիւնդ ան աստիճանի հասաւ, որ ալ հարկ է որ
հետդ խստութեամբ երթամ: Գնա, աս իրիկուն
կամքս կ'իմանաս: (Մէսրոջ լուսվ դուրս է՛ւլէ:)

ՏԵՍԻԼ. Օ.

ՊՐ. ՀԵԹՈՒՄ, առանցին:

Ի՞նչ բնութիւն, ի՞նչ յամառութիւն: Թէ որ փո-
խուելու ըլլար եւ բնական ձիրքերն աղէկի գործա-
ծէր, սքանչելի տղայ մը կ'ըլլար. ուր որ հիմա կե-
նացս ամենամեծ վիշտը կ'ըլլայ: Բայց ի՞նչ որ է նէ
պէտք է որ աս բանս ճշգիւ իմանամ, սրտիս հան-
դարտութիւնն ու երջանկութիւնս ասկից կախուած
է: Պէտք է որ պարտիզպանը քննեմ. գուցէ կրնայ
տեղեկութիւն մը տալ:... Հա, Կիրակոսը կու դայ.
նայինք ի՞նչ լուր է բերեր:

ՏԵՍԻԼ. Է.

ՊՐ. ՀԵԹՈՒՄ, ԿԻՐԱԿՈՍ

ԿԻՐԱԿՈՍ ՔԻՆ Ի՛Ն ՇՔԱՅԻՆ:

Թաղութիւն տուէք, Պարոն, հրամանոցը գլխու-
ցաւ տալու եկայ:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Թէ որ ուղելու բան մ'ունիս նէ, համարձակ զըու-
ցէ. ձեռքէս եկածն ընելու պատրաստ եմ:

ԿԻՐԱԿՈՍ ԲԻԴԻՆ ԷՐԵՆ:

Ի՞նչպէս ըսեմ: (Չայնիւ:) Ճնորհակալ եմ հրամա-
նոցը բարի սրտին, Պարոն. ինդրելու բան մը չու-
նիմ. բայց ի՞նչ ընեմ, ալ չեմ կրնար դիմանալ,

պէտք է որ երախտաղիտութիւնս յայտնեմ։ Հրամանոցը որդիքներուն մէկէն ամէն օր ընդունած բարիքներս մինչեւ հիմա լուելուս վրայ շատ կը ցաւիմ։ Գուցէ չէք դիտեր որ հիմակուան վայելած դիւրութիւնս որմէ է։

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Ձէ, ամենայն ինչ դիտեմ։ Սեպուհս ամէն բան զրուցեց, եւ արդէն իմ գոհ ըլլալս տեսնելով՝ ինք իր հատուցումն առած կը սեպէ։ բայց ես միտքս դրած եմ որ ուրիշ կերպով ալ իր բարեսրտութիւնը վարձատըեմ։

ԿԻՐԱԿՈՍ

Ի՞նչ կ'ըսէք, Պարոն։ կարելի բան է։ Ուրեմն կասկածս պարապ չէ եղեր։ Հիմա աւելի եւս պարտքս է որ ամէն բան յայտնեմ։ Ուստի դիանաք որ ինծի օգնութիւն ընողը ՊՐ. Սեպուհը չէ, հապա ՊՐ. Մեսրոպն է։ Աստուած զինքն օրհնէ, Աստուած՝ իր ինծի ըրած մէկ բարիքն հարիւրապատիկ հատուցանէ։ ինք զինքը կը զրկէ, իր զքօսանաց համար տուածստակներնէդ եւ ոչ դանկ մ'իրեն համար գործածելով՝ ամէնն ալ ինծի կու տայ……

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

ԱՄՌԵԴ կ'ըսէս. զարմանքս . . . :

ԿԻՐԱԿՈՍ

Դեռ ամէնը չզրուցեցի։ Լոեցէք ու զարմացէք։ Բարեսիրտ Պարոնիկն ինծի կրկին կրկին ապսպրածէր որ ասոր վրայ հրամանոցը բերան չբանամ, ես ալ կէս մը խօսք տուած եւ մինչեւ հիմա խօսքս հաւատարմութեամբ բռնած էի։ Բայց աս առտումոմտուքը զիս առաւ։ ՊՐ. Մեսրոպ մէկէն վազելով հիւզս եկաւ, երեսը սաստիկ տրտմութիւն նկարուածէր եւ աճապարելով աս խօսքս ըսաւ։ Ակիրակոս, հիմա գաղտնիքնիս ամէն ատենէն աւելի ծածուկ պահելու ենք։ ապա թէ ոչ խեղճ եղորս շատ մեծ

Նախատինք կը պատճառիս : Աս լուս, եւ շուտ մը
դուրս ելաւ աներեւոյթ եղաւ : Բայց ես սկսայ սաս-
տիկ անհանգիստ ըլլալ եւ կասկածելով որ ասոր
տակը բան մը չըլայ, ինձի պարտք սեպեցի գալ
հրամանոցն իմացընել :

ՊՐ . ՀԵԹՈՒՄ

Շատ աղէկ ըրիր : Ո՞չ, ի՞նչ մեծ անիրաւութիւն
կ'ընեմ եղեր :

ԿԻՐԱԿՈՍ

Պարոն, թողութիւն տուէք համարձակութեանս .
Ես թէպէտ աղքատ ողորմելի մարդ մըն եմ, բայց
գորովալից սիրտ ունիմ . քիչ մը ժամանակէ վեր բա-
նին էութիւնը կէս մը գուշակած ըլլալով՝ շատ կը
ցաւէի . եւ երբ որ աս առտու Պարոնիկը տեսայ,
տարակոյսներս սասականալով՝ ուզեցի ծառաներնեղ՝
աւելի եւս տեղեկանալ : Ուստի քիչ մը առաջ քա-
նի մը հոգւոյ հետ խօսելով՝ իմացայ որ իմ բարե-
րարս միշտ իր եղբօրն ըրած յանցանքներուն համար
յանդիմանութիւն կ'առնէ եղեր, եւ Պր . Սեպուհ
իմ բարերարիս լուութենէն առիթ առնելով՝ անոր
ըրած բարիքներուն համար գովութիւն ու սէր կ'ըն-
դունի եղեր : Դարձեալ ներումն կը խնդրեմ, Պա-
րոն, ասանկ համարձակութեամբ խօսելուս համար .
բայց ի՞նչ ընեմ՝ աս բանս սրտիս վրայ քարի պէս
նստած՝ կը ճնշէր . եւ ստուգիւ ցաւէս կը մեռնէի,
թէ որ ամէն բան եկած հրամանոցն առջեւը յայտ-
նած չըլայի :

ՊՐ . ՀԵԹՈՒՄ

Ի՞նչ թողութիւն, ի՞նչ ներում . թէ որ ծածուկ
պահած ըլլայիր, ան ատեն պէտք էիր թողութիւն
խնդրել : Ծնորհակալ եմ որ աշուըներս բացիր : Ա-
պահով ալ կրնաս ըլլալ որ Մեսրոպա՝ իրեն մինչեւ
հիմա եղած անիրաւութեան համար՝ շատ չ'անցնիր՝
հասաւցում կ'ընդունի :

ԿԻՐԱԿՈՍ

Փա՛ռք Աստուծոյ, սիրտս հանդչեցաւ: Ծառայ
եմ, Պարսն. Աստուած որդիքնիդ անփորձ պահէ:
ինծի ըրած բարիքներնուգ համար տներնուդ մէջէն
օրհնութիւնը չպակսի: Մնա՞ք բարով: (Կ'ԵՐԵՄՅ:)

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Երթաս բարով, բարեկամ. դարձեալ շնորհա-
կալ եմ:

ՏԵՍԻԼ. Բ.

ՊՐ. ՀԵԹՈՒՄ առաջին:

ԵՇ, իմ սիրելի Մեսրոպս. այսպէս ուրեմն հօր
մը անիրաւութեան եւ քու եղբայրական սիրոյդ զնչ
եղած ես եղեր: Ինչչափ յանցաւոր եմ եղեր: Բայց
ստուգիւ ընդունած հատուցումդ կրած անիրաւու-
թեանդ չափ մեծ պէտք է որ ըլլայ. պէտք է որ
յանցանքս շտկեմ: Կոյր սէր, որ իմ զաւկիս առա-
քինութիւններն ինծմէ կը ծածկէ եղեր. ինչպէս
այսչափ ժամանակ խաբուեր եմ:

ՏԵՍԻԼ. Թ.

ՊՐ. ՀԵԹՈՒՄ, ՊՐ. ՆԵՐՍԵԶ, ՊՐ. ԲԱՐԴԱՄ

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Բարել, բարեկամք, բարով եկաք. շնորհակալ եմ
որ ճաշի հրաւերս ընդունելին զատ՝ ժամանակին յա-
ռաջ ալ եկաք, որ քիչ մ'աւելի տեսնուինք: Հրա-
մայեցէք, նստեցէք:

ՊՐ. ԲԱՐԴԱՄ

Հոս տեղս ինչ շնորհակալ ըլլալու բան կայ. քու
եւ սիրելի զաւկըներուդ քաղցր ընկերութիւնը վայ-
ելելը՝ մեզի մեծ ուրախութիւն կը պատճառէ: Անոր
համար ալ աւելի մենք քու հրաւիրիդ շնորհակալ
ըլլալու ենք:

ՊՐ. ՆԵՐՍԵՀ

Զաւկըներդ ուր են, ինչու չեն տեսնուիր:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Հիմայ կու դան:

ՊՐ. ԲԱՐՂԱՄ

Բայց, բարեկամ, կ'երեւայ որ դուն մտածմունք
մ'ունիս: Մեսրոպդ գարձեալ տրտմութեան պատ-
ճանու մը տուա:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Չէ, ան չէ:

ՊՐ. ՆԵՐՆԵՀ

Համ. ահաւասիկ կու դան:

S E U T I. Ժ.

ՊՐ. ՀԵԹՈՒՄ, ՊՐ. ՆԵՐՆԵՀ, ՊՐ. ԲԱՐՂԱՄ,
ՄԵՍՐՈՊ, ՍԵՊՈՒՀ

ՍԵՊՈՒՀ՝ ահաւասիկը ներս իւ մրնէ և երիսո օդաբախան-
ներուն բարեւ իւս դայ:

Բարսվ եք եկեր, Պարոնայք. ինչ մեծ ուրախու-
թիւն է այսօր մեղի՝ որ հօրերնուս երկու սիրելի բա-
րեկամները քովերնիս են:

ՄԵՍՐՈՊ՝ Հանրութեամբ եւ իբրեւ նե վախուլը իւ բայց
+աղլաւումութեամբ բարեւ իւս դայ:

Եղբօրս ըսածները՝ իբրեւ իմ կողմանէս ըսուած-
ընդունեցէք, Պարոններ:

ՊՐ. ՆԵՐՆԵՀ

Բարսվ տեսանք, սիրելի զաւկըներս:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ՝ Հանը իբրութեամբ իւ:

ՄԵՍՐՈՊ, սիրելի զաւակս, զքեղի մեծ հատուցում
մ'ընելու, զքեղ ամենուն առջեւն արդարացընելու
պարտաւոր եմ, որ ըսած խօսքերուդ, թափած ար-
շունքներուդ միտ չդնելով՝ զքեղ մինչեւ հիմա կեղ-

ծաւորի, սուտղուցի տեղ դրի: ԱԵպուհին առեւբեւոյթ անկեղծութենէն խաբուելով՝ զինքը մինչեւ հիմա անմեղ կը կարծէի, եւ զքեզ խաբերայ եւ յանցաւոր սեպելով՝ հետդ անիրաւութեամբ կը վարուէի: Թողութիւն առւր, սիրելի որդեակս, քու վրադ անանկ գէշ համարում ունենալուս, քեզի չհաւտալուս համար:

ՄԵՍՐՈՊԻ ԱՊՈՒՀԻ ԱՅԼԱՅԼՆԻ:

Հրամանոցը թողութիւն տալ. ինչ կ'ըսէք, սիրելի հայր:

ՄԵՊՈՒՀԻ ԲԿ ԷՐԵՒ:

Ուրեմն ամենայն ինչ գիտէ ... ինչպէս իմացեր է: Այս դլառուս:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ

Կիրակոս ամէն բան պատմեց: ԱԵպուհ, գէթ ըրած յանցանքիդ մեծութիւնը ճանչնայիր. ամօթնախատանաց:

ՄԵՊՈՒՀԻ հօրն առջեւը ի՞նչնայ:

Թողութիւն, թողութիւն տուէք, հայր:

։ ՊՐ. ՀԵԹՈՒՄ ԽԱՊՈՒՄՆԵԼՆԻ:

Գնա, աչքս մ'երեւար, քարասսիրտ տղայ. սիրտդ ինչպէս կրցաւ մինչեւ հիմա եղբօրդ արցունքներուն դիմանալ. անոր մեծանձնական եղբայրսիրութեան քով քու խստարատութիւնդ աւելի եւս յայտնի կ'երեւայ: Գնա, դուրս ելիր, ընկերութեան մէջ մնալու արժանի չես:

ՄԵՍՐՈՊԻ ՍԵՊՈՒՀԻ ԴՕՐ ՀՕՐՆ ԱՐՋԵՆ ԻՆ ԻՆ ԲՈՐ ՅԵՐԵՒՆԻ ԲՈՒՆԵԼՆԻ:

Թողութիւն տուէք. սիրելի հայր. ցուցրցած զըղձման, թափած արցունքներուն նայեցէք. իրեն համար ես երաշխաւոր կ'ըլլամ որ ասկէ վերջը ուրիշ կերպ կը վարուի: Շնորհաք ըրէք, սիրելի հայր, թողութիւն տուէք: Եւ որովհետեւ կը կարծէք որ ինձի հատուցում մը տալու էք, ուրիշ հատուցում չեմ

ուղեր՝ բայց եթէ եղբօրս թողութիւնը . թէ որ ան շնորհքն ինծի ընէք նէ , այսօր կենացս ամենէն երաշանիկ օրը կը սեպեմ:

ՊՐ. ՆԵՐՍԵՎ

Ի՞նչ աղնիւ սիրտ :

ՊՐ. ՀԵԹՈՒՄ ԱՔՐԻ ԵԼԱՅ :

Ելիր , սիրելի՛ Մեսրոպս : Դուն ալ ելիր , Աբգուհ , եւ գիտցիր որ ասկէ ետեւ իմ քեզի հետ ինչպէս վարուելիքս՝ քու բռնելու ընթացքէդ կախում ունի :

ՍԵՊՈՒՀ

Ո՛հ , ալ հիմա սուտը ստուգիւ սրտանց կ'ատեմ . աս մոլութիւնս ինծի այնչափ ցու , այնչափ նախատինք պատճառեց , որ ասկէ ետեւ բոլոր զօրութեամբ կը զգուշանամ : Կենացս մէջ մէջ մ'ալ սուտ չեմ զրուցեր : Իսկ դուն , ամենասիրելի՛ եղբայրս , որ ինծի համար այնչափ նեղութիւն կրեցիր , քեզի բրածներս երբեք մոքեդ կրնան ելել :

ՄԵՄՐՈՊ

Սիրելի՛ Մեպուհս , գիտցիր որ ամենայն ինչ արգեն մոռցուած է , միայն քեզի ունեցած սէրս կը յիշեմ :

ՍԵՊՈՒՀ ՀՕՐԸ :

Ամենէն մեծ փոյթս ասկէ վերջն ան պիտօր ըլլայ որ հրամանոցը հասցուցած նեղութիւնս՝ իմ վարձունքովս մոռցընել տամ : (ԶՄԵԿՐՈՊ ՍՊԵՇՆԵԼՎ :) Ահաւասիկ իմ օրինակս , առաջնորդս . իրեն հետեւելով՝ ստուգիւ բարի որդի կ'ըլլամ :

ՄԵՄՐՈՊ

Երկուքնիս մէկաեղ կ'աշխատինք որ տրտմութիւնն հոսկից հալածուի , եւ նոր ուրախական կեանք մը մտնէ տներնուս մէջ :

ՍԵՊՈՒՀ

Հիմա կ'իմանամ որ հրամանոցը երջանկութեան եւ խաղաղութեան մինչեւ հիմա արգելք ըլլողն ես եմ եղեր : Բայց ալ ասկէ ետեւ բոլոր իմ պարտ

քերս ճշգիւ կատարելու ետեւէ իյնալով՝ ձեռքէս
եկածը կ'ընեմ որ երջանկութիւննիդ կատարեալը լլայ:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ այլայլունիւնը հանիւլ սովելու:

Աը տեսնենք. ժամանակը պիտի ցուցընէ որ աս
խօսքերդ որչափ ստոգութիւն ունին: (Ինտ իրեն:)
Մարդս ինչպէս մեծ սխալմանց մէջ կ'իյնայ եղեր
զաւկըներէն մէկառն՝ մէկալէն աւելի սէր ունենալով:

ՊՐ. ԲԱՐԴԱՐ

Բարեկամ, հիմակուընէ կատարեալ թողութիւն
առւր. ես զքեզ ապահով կ'ընեմ որ Սեպուհին զըղ-
ջումը սրտանց եւ հաստատուն է:

ՍԵՊՈՒՀ

Զէ, հայր, արժանի չեմ որ հետս այնչափ դժու-
թեամբ վարուիք, եւ ոչ ալ եղորս այնպիսի սիրոյն:
Սպասեցէք որ յանցանացս մեծութիւնը ճանչնալս եւ
անսնց տեղը լեցընել ուղելս՝ վարքովս ցուցընեմ:

ՄԵՄՐՈՊ

Սիրելի հայր, թէ որ Սեպուհին հետ կատարեալ
չէք հաշտուիր նէ, զիս ալ իրեն չափ դժբախտ կ'ը-
նէք: Ստոգիւ իր տրտմութիւնը, վշտերն ու զօրկ-
մունքները՝ բոլոր ինձի ալ տրտմութեան, վշտաց
ու զրկմանց պատճառ կ'ըլլան:

ՊՐ. ՀԵԹՈՒՄ աւ-ները վշտուկը:

Ա՛Լ չեմ կընար դիմանալ: Աստուած երկուքնիդ
ալ օրհնէ, սիրելի զաւկըներս, մէջերնիդ եղած սի-
րոյ կապն օրէ օր աւելի զօրացընէ, եւ իմ սրտանց
շնորհակալութիւնս ընդունի, որ այնպէս շուտով այն-
պիսի մեծ միսիթարութիւնն մը տուաւ ինձի, անանկ
մէկ ատեն՝ որն որ կենացս ամենէն դժբախտ ժա-
մանակը կը համարէի:

ԳԵՐԵԶՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՎՐԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԻՐ

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԻՐ

ՎՐԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԻՐ

ԳԵՐԵԶՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԻՐ

Կ Ա Մ

ՀԵՅՐԵՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԻՐ

Ա Ն Զ Ի Ն Ք

ՊՐ . ԲԱԲԿԻՆ , վաճառական մ՛լ :
ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ , վաճառական մ՛լ :
ԳԵՂԱՄ , ՊՐ . Բարենին որդին՝ 17 տարւան :
ԳՐԻԳՈՐԻՍ , նոյնպէս ՊՐ . Բարենին որդին՝ զատ մօրէ ,
14 տարւան :
ՊԱՃՈՅԾ , ՊՐ . Հմայեակին որդին՝ 16 տարւան :
ՍԱՀԱԿ , Պաճոյձին եղբայրը՝ 15 տարւան :
ՊՐ . ՆԵՐՍԼԻՍ , Գրիգորիսին դաստիարակը :

Առաջին արարուածը ՊՐ . Բարենին տան մէկ խցին
մէջն է . երկրորդ արարուածը՝ ՊՐ . Հմայեակին առանց
ձեռական գլաւառունը :

ԳԵՂԱՄ ՈՒ ԳՐԻԳՈՐԻՍ

ԿԱՄ

ՀԵՅՐԵՆԻՔ ՈՐԴԻՏՔ

ԵՐԵՐՈՒԹԵՅ Ե.

ՏԵՍԻԼ Ե.

ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐԻՍ

ԳԵՂԱՄ ԽԱՀՈՒԵ Է ԸՆՉԵՆԻ:

Խահուեդ լեցուցի, սիրելիս, առ նայիմ. Բնչ կը
մտածես:

ԳՐԻԳՈՐԻՍ

Ճնորհակալ եմ: . . . Բայց ըսէ մէջ մը, հայրեր-
նիս բնչ ունի: Առանց բերանը բան մը դնելու՝ շուտ
մը հագուեցաւ, եւ աճապարելով դուրս ելաւ գնաց:
Քովը գայցի, բարի լոյս ըսի: Գիտես հասարակօրեն
նախաճաշի ատեն հետերնիս որչափ կը խօսի, որ-
չափ սէր կը ցուցընէ, բնչպէս ըլլանիս կը հարցընէ:
Այսօր բոլորովին լուռ կը կենար. քանի մը անդամ
ես խօռք բացի, բայց պարապ տեղ, բերնէն հաղիւ
մէկ երկու բառ. հանեց. միանգամայն տիսրութեամբ
մը երեսս կը նայէր:

ԳԵՂԱՄ

Զհարցուցի՞ր որ բան մը ունի, չըլլայ որ հիւանդ-
ըլլայ:

ԳՐԻԳՈՐԻՍ

Ինչպէս չհարցուցի: Սակայն ուրիշ պատասխան
չընդունեցայ, բայց եթէ որ՝ Դժբախտութեամբ շու-
տով պիտի իմանաք:

ԳԵՂԱՄ

Պէտք է որ սրտին մէջ բան մ'ունենայ: Աերջին

գիշերները քանի մը անդամ արթընցայ, եւ միշտ
կը լսէի որ կը հեծեծէր, կարծեմ նաեւ կու լար ալ:
Անդամ մ'ալ՝ երբ որ մասնաւոր խորունկ քնանալ
կը ձեւացընէի, քանի մը հեղ յայտնապէս աս խօս-
քերն ըստ. Ո՛չ, իմ խեղճ զաւկըներս :

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Ինչո՞ւ խեղճ պիտ'որ ըլլանք եղեր: Իրեն պէս հայր
մ'ունենալնէս ետեւ՝ ինչպէս կրնանք խեղճ ըլլալ:
Ստոյդ է աւելի երջանիկ կ'ըլլայինք, թէ որ մայրս
կենդա . . . թէ որ մայր ունենայինք :

ԳԵՂԱՄ

Բայց հիմակուան արտմութեան պատճառն ասիւ-
կա չեկրնար ըլլալ: Պէտք է որ մօտերս գլուխը մեծ
դժբախտութիւն մ'եկած ըլլայ, կամ մեծ դժբախ-
տութենէ մը վախ ունենայ, որ այնպէս կը հառա-
չէ եւ մեր վրայ կը ցաւի:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Մէջ մը ինչ ըլլան իմանայինք, գուցէ կրնայինք
քիչ մը հանդարտեցընել կամ գէթ մխիթարել:

ԳԵՂԱՄ

Մենք ինչ կրնանք ընել, ձեռուըներնէս ինչ կու
դայ . . . : Բայց միտքս կասկած մը կ'իմայ. քանի
մը անդամ տեսայ որ նամակ առած ատեն՝ այլայ-
լութեամբ ու աճապարելով մը բացաւ, սկսաւ կար-
դալ եւ գլուխը շարժելով՝ աս խօսքերն ըստ. “Գէշ,
գէշ, ասկից ալ յոյս չկայ, աս ակնկալութիւնս ալ
պարապ ելաւ,,,: Արդեօք վաճառականութեան դործ-
քերուն մէջ դժբախտութեան մը պատահեցաւ:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Աղէկ ըսիր. ես ալ հիմա կը յիշեմ որ անցած-
ները երբ որ Պարոյրեանց տան մնանկանալուն լուրն
առաւ, արտաքս կարդի այլայլելով, “Կորուստ կորրս-
տեան վրայ, պոռաց, թէ որ ասանկ յառաջ եր-
թայ նէ չեմ գիտեր վախճանս ինչ պիտ'որ ըլլայու:

ԳԵՂԱՄ

Սիս դրամն ես, քանի որ է որ դրատունք պարապ կեցած չունի. մէկալն օր ըստ պատահման հոն դացած էի, մէջ մ'ալ ծառայ մը եկաւ, իր տիրոջմէ բարեւ բերաւ եւ հարցուց որ վճարմունքն ի՞նչպէս պիտ' որ ըլլայ: Հայրս ինծի աչք ըրաւ որ դուրս ելեմ. բայց հոս գալու ատենա՝ ներսէն բարձրածայն աղաղակներ լսեցի:

ԳՐԻԳՈՐԻՅ

Անշուշտ կասկածդ անհիմն չէ. ստուդիւ վճարմունք պիտ' որ ունենայ եւ չիկրնար վճարել:

ԳԵՂԱՄ

Հաւանտկան է որ այնպէս ըլլայ. բայց ստուդիւ իր յանցանքովը պիտի չըլլայ. տռանց կարծեաց առդին անդին մեծամեծ կորուստներ ընելով, կամ գուցէ ալ մէկուն մէկալին օգնել ուզելով՝ վերջապէս ինքն ալ նեղ մտեր է:

ԳՐԻԳՈՐԻՅ

Զինքն ամեն կերպով ստիպելու ենք որ տրտմութեան պատճառն յայտնէ: Երբ որ զինքը տրտում կը տեսնեմ, աչքիս ամենեւին բան մը չ'երեւար: Թէ որ ուրիշ բան չենք կրնար ընել նէ, դէմ իր ցաւսցը մասնակից կըլլանք:

ԳԵՂԱՄ

Աստուած տայ որ կերպով մը կարենանք իրեն օդնել: Բայց ես հաստատութեամբ միաքս դրած եմ որ դալուն պէս՝ ետեւէն իյնամ՝ որ զըուցէ: Միայն կը վախնամ որ չսրդողի:

ԳՐԻԳՈՐԻՅ

Հայրս որդողել . . . : Բայց լուռ. սանդղէն վեր մէկը կու դայ. թէ որ չեմ սխալիր նէ՝ իր քալուածքն է:

ՏԵՍԻԼԸ.

ԳԵՂԱՄ, ԳՐԻԳՈՐԻԱՆ, ՊՐ. ԲԱԲԿԻՆ, ո՞ր բարձրավիճ շնորհած ներս էը մրգե և առանց խօսութեալու վ'երթոյ էը նորդ : Տղադ կախառութեալ ո՞ւ վ'է էը հոդինան : Գիղամ ո՞վ չեւուը էը բանե, իսէ Գրիգորիս՝ Յանի Յետք էը պահնիք, զբո՞ն որ հոյրը ժիշ ո՞ւ ալսութեառան առջեւը բանելին երդեւ՝ Գրիգորիսին յեւուը էը բանե և սաստիք պրահանունիւմբ զատիշներուն երեսը էը նոյն :

ԳԵՂԱՄ

Աիրելի՛ հայր, ի՞նչ ունիք :

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Ըսելք, հայրիկ, հիւանդ էք, անհանգիստ էք :

ԳԵՂԱՄ

Կ'աղաւեմ, հայր, խօսեցէք . ձեր տրտմութիւնը տեսնելով՝ վերջին աստիճանի ցաւերու մէջ կ'իյնանք :

ԳՐԻԳՈՐԻԱՆ լուսւ:

Հայրիկ, թափած արցունքներնուս ողորմեցէք :

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

ԱՇ, սիրելի՛ զաւկըներս . . . չեմ կրնար ըսել :

ԳԵՂԱՄ

Ինչու պիտի չկրնաք զբուցել . ըսելով գոնէ սըրտերնիդ կը թեթեւնայ :

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Բայց հրամանոցը խօսքերէն անանկ կ'երեւայ որ օր մը պէտք է որ իմանանք . եւ հիմակուան անստուգութիւնը . . . :

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Դժբախտութեամբ պէտք է որ իմանաք . . . պէտք է իմանաք . . . ա՛հ . . . որ ես . . . ձեզի համար . . . կորսուած եմ . . . դուք ալ ինձի համար :

ԳԵՂԱՄ

Աստուած չընէ :

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Ի՞նչպէս կրնայ ըլլալ, քանի որ Աստուած հրամանոցը կեանքը վրանիդ կը պահէ :

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Սիրելի զաւկըներս, քանի որ կը յիշեմ նէ՝ սիրտս
կտոր կտոր կ'ըլլայ . . . բայց պէտք է որ ասկից
. . . մէկ ժամէն . . . ձեզմէ . . . բաժնուիմ:

ԳԵՂԱՄ

Մեզմէ բաժնուիլ: Թէ որ հրամանքնիդ զմեղ թող
կու տաք նէ, մենք հրամանքնիդ չենք թողուր:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Ո՞ւր պիտ'որ երթաք, որ մենք հետերնիդ չկըր-
նանք դալ:

ՊՐ. ԲԱԲԿԻՆ ԵՐԵՒԱՆ ԳՐԱՒՅՆ:

Բանտ . սիրելի զաւկըներս :

ԳԵՂԱՄ

Բանտ . ի՞նչ կ'ըսէք, ամենասիրելի հայր . բանտ :

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Բայց ինչու մենք ալ հետերնիդ պիտի չկընանք
երթալ: Ո՞վ կրնայ արգելել՝ որ մէկտեղ չերթանք:
ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Ես: . . . Ո՞չ, սիրելի Գեղամն, սիրելի Գրիգորիսս:
Գլուխս եկած դժբախտութեան վրայ դլաւորաբար
ձեզի համար կը ցաւիմ: Ամեն բան սիրով յանձն
կ'առնեի եւ բանի տեղ չեի դներ. բոլոր ցաւերուս
պատճառք դուք էք, ինչպէս որ մինչեւ հիմա իմ
միակ ուրախութիւնս եիք:

ԳԵՂԱՄ

Զէ, չէ. ասկէ վերջն ալ հրամանոցն ուրախութեան
պատճառ կ'ուզենք ըլլալ: Բայց ըսէք, հայրիկ,
բանտ դնել տուողն ով է. չիկրնար ըլլալ որ բանտ-
արկութեան արժանի յանցանք մը դործած ըլլաք:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Ով ըլլայ նէ, կ'երթանք ոտքը կ'իյնանք, ձե-
ռուըները, ոտուըները կը պազնենք, կ'աղաւենք, կը
պաղատինք, կու լանք: Միայն ըսէք, ինչու բանտ
պիտ'որ երթաք:

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Պէտք է որ ալ ամենայն ինչ յայտնեմ։ Զեմ
գիտեր որ ուրիշ անդամ հետերնիդ կրնամ խօսիլ։
անոր համար ընելիքնիդ հիմակուընէ զսուցելու եմ։
ԳԵՂԱՄ

Աս ի՞նչ մեծ գժբախտութիւն է որ գլուխնիս ե-
կառ։ Բայց գուցէ չափէն աւելի կը կասկածիք։

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Անշուշտ այնպէս է. հրամանիքնիդ շատ անդամ
մեզի սորվեցուցած էք որ յոյսն Աստուծոյ վրայ գնազը
չ'ամըչնար։

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Անոր համար մենք ալ պէտք չէ որ յուսահատինք.
Եւ թէպէտ մարդկօրէն մտածելով՝ ամենեւին յոյս
մը չկայ, ի վերայ այսր ամենայնի ակնկալութիւննիս
Աստուծմէ կտրելու չենք։ . . . Արդ գիտյէք, սիրե-
լի զաւկըներս, . . . որ պարտքերս չեմ կրնար վճա-
րել։ . . . Բայց ասոր համար խեղճ հայրերնիդ մ'ա-
տէք . . . եւ զինքը ձեր գժբախտութեան պատ-
ճառը մ'անուանէք։

ԳԵՂԱՄ

Տէր Աստուած. ի՞նչ կ'ըսէք. ի՞նչպէս կրնանք մենք
հրամանիքնիդ ատել, մեր գժբախտութեան պատճա-
ռը կարծել։

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Արդէն գիտեք, սիրելի հայր, որ հրամանիքնիդ
կեանքերնէս աւելի կը սիրենք։

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Գիտեմ, գիտեմ, եւ անոր համար ցաւս այսչափ
սաստիկ է։ Ուստի գիտցէք, որդիքս, որ հետս կա-
պակցութիւն ունեցող քանի մը վաճառականու-
թեան տներու վրայ ետեւէ ետեւ մեծամեծ գժբախ-
տութիւններ գալով, չափէն աւելի վստահութիւն
ունենալով անանկ մարդիկներու վրայ՝ որոնք գուցէ

վոտահութեան արժանի չէին, քանի մը գործքերու ձեռք զարնելով՝ որոնք ակնկալութեանս դէմ անյաջող գացին, . . . ինչ մէկիկ մէկիկ համրեմ. այս ամենայն վրայէ վրայ գալով՝ քիչ ատենէ վեր սաստիկ նեղ մտած էի: Բայց ամենէն խիստ հարուածը վերջին օրերը մէկ բարեկամէս ընդունեցայ, որուն համար երաշխաւոր կեցած էի: Աեց ամսէ յառաջ պիտի վճարէր. ես մէջը մտնելով՝ մէկ երկու անգամ ժամանակն երկրնցուցի: Բայց իր պարտատէրն հիմայ ալ համբերել չուզելով՝ կը պահանջէ որ վճարեմ: Աերը ըսած պատճառներուս համար՝ չկրնալով վճարել, ասդին անդին բարեկամներուն ինկայ. բայց ամենեւին մէկը ձեռք բռնել չուզելով՝ պէտք է որ բանտ մտնեմ:

ԳԵՂԱՄ

Աս պարտատէրն այնչափ անգութ մարդ է, արեօք չիզիջանիր: Մէջ մը երթանք փորձենք:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Երթանք. այնչափ կ'աղաչենք, կը պաղատինք, մինչեւ որ սիրտը կակզանայ:

ՊՐ. ԲԱԲԿԵՆ

Չէ, պարագ բան է. զինքը շատոնց կը ճանչնամ որ անողոքելի մարդ մըն է: Արդէն ամենայն ինչ փորձեցի, աղաչեցի, քանի մը բարեկամներս ալ փորձեցին: Բայց անկարելի եղաւ: Հազիւ շատ աղաչելով այսչափս կրցայ ընդունիլ որ մէջ մ'ալ հետերնիդ տեսնուիմ եւ գոնէ հրապարակաւ ու խայտառակութեամբ բանտ տանիլ չտայ: Խօսք տուի որ ժամէ մը ես անձամբ բանտի տեղը կ'երթամ. արդէն ժամանակը կը մօտիկնայ. հետերնիդ մինակ մէկ երկու խօսք ալ ունիմ խօսելու:

ԳԵՂԱՄ

ԱՇ, սիրելի հայր, չէք կրնար արդեօք ապահով տեղ մը պահուըտիլ:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Կամ ուրիշ տեղ մը փախչել:
ՊՐ. ԲԱԲԿԵՆ

Ի՞նչ, կ'ուզեք որ խօսքիս դէմ ընելով՝ խաբերայ սեպուիմ, եւ անոնս հրապարակաւ նախատուի: Զէ, չէ, սիրելի զաւկըներս. լաւագոյն է որ մարդո իր պատուովն ու առանց յանցանքի վիշտ եւ նեղութիւն կրէ, քան թէ յանցանք գործէ, պատիւը կորարնացնէ եւ անպատիմ մնայ: Թող գըքերս քննեն. ամեն մարդ կը տեսնէ որ ամենեւին անիրաւութիւն, խաբեութիւն մ'ըրած չեմ: Գուցէ անմեղութիւնս տեսնելով՝ վրաս գութ կ'ունենան, եւ եթէ ես վիշտ կը կրեմ նէ, գոնէ զձեղ հանդարտ կը թողուն: Մի վախնաք, սիրելիքս, Աստուած զձեղ ձեռքէ թող չխտար:

ԳԵՂԱՄ

Զէ, հայր, հրամանոցմէ չենք բաժնուիր. պէտք է որ մենք ալ հետերնիդ բանտ դանք:

ՊՐ. ԲԱԲԿԵՆ

Պարապ բան է, չեն թողուր, կը մերժեն, գուցէ ալ գլուխնիդ բան մը կու դայ: Ան ատեն ալ ցաւերս ու վիշտերս վերջին աստիճանի կը համին: Պէտք է որ դուք հոս մնաք:

ԳԵՂԱՄ

Թէ որ կը պատուիրէք նէ, պէտք է որ կենանք: Բայց . . . :

ՊՐ. ԲԱԲԿԵՆ

Կորոնցընելու ժամանակ չունինք: Հիմա տէրութեան կողմանէ մարդիկ պիտի դան, բոլոր ունեցածներս կնքեն: Գնա, Գընդորիս, դաստիարակդ կամ չէ: . . . ԱՇ, ասկէ վերջը ալ երկայն ատեն քովդ պիտի չկրնայ մնալ . . . : Բայց գնա, շուտ ըրէ:

ԳՐԻԳՈՐԻԱՆ երիտալու ադէն:

Դժբախտութիւն գժբախտութեան վրայ:

ՏԵՍԻԼ Գ.

ՊՐ. ԲԱԲԿԻՆ. ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ

Ո՞Շ, առանց հօր մենք ի՞նչ պիտ'որ ըլլանք :

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

ԳԵՂԱՄ, աս՝ ժամանակէն յառաջ վրանիդ հասած վիշտը պէտք է որ ժամանակէն յառաջ ալ ձեր միտքն հասունացընէ : Վիշտերն աս աղէկութիւնն ունին որ մարդս աղէկ կը կրթեն, եւ շատ անդամ մէկու մը երիտասարդութեան ատեն ունեցած դժժաբախտութիւնը՝ բոլոր կենացը երջանկութեան պատճառ կ'ըլլայ : Փառք Աստուծոյ, Հիմա այնպիսի վիճակի մէջ ես որ մէկ կամ առ առաւելն երկու տարիէ կրնաս ինք զինքդ հոգալ : Հիմա նայէ որ գլխաւորիդ աղէկ հպատակ ըլլաս եւ գործքերդ ճշդիւ ու հաւատարմութեամբ կատարես : Հիմակու հիմա պէտք է որ եզրօրմէդ բաժնուիս . քենեկալիս հետ խօսեցայ եւ ինք սիրով յանձն առաւ որ զքեղ իր տանը մէջ պահէ . դիտեմ որ մօրաքոյրդ շատ կը սիրես, ինքն ալ զքեղ մօր պէս կը հոգայ :

ԳԵՂԱՄ

Քանի որ աս բաժանման վրայ կը մտածեմ, ինք զինքս կը կորսընցընեմ . երանի թէ ցամաք հաց ու տէի, մուրալով ապրէի, եւ հրամանոցմէ չբաժնուեի : . . . Բայց մօրաքեռս ընտանիքն աղքատ է . գրեթէ հրամանոցը բարերարութեամբը կ'ապրէին : Հիմա ես իրենց ծանրութիւն պիտ'որ ըլլամ :

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Չէ, որդեակ, դուն կարծածիդ չափ աղքատ չես : Մօրդ զարդերն ամբողջ կեցած են, եւ բոլոր քուկդ են : (Դէպէ է պատը ի՞երեմայ եւ դարձն մը իը բանայ :) Ահաւասիկ, աս արկղին մէջն է ամենայն ինչ : Պատուական քարերուն, ոսկւյն եւ արծաթին ներքին

գինը՝ 35,000 դահեկանէն աւելի է : Արդէն քենեւ կալիս ըստ եմ թէ ինչ կերպով կ'ուզեմ որ ծառ խուին . առնուած ստակն ինչ կերպով գործածելիքն ալ մեկնած եմ : Կը յուսամ որ եղբայրդ ալ չես մոռանար ինք ամենեւին բան մը չունի :

ԳԵՂԱՄ

Խեղճ եղբայրս, մինչեւ վերջին դանկս իրեն հետ կը բաժնեմ : . . . Բայց, սիրելի հայր, միտքս ու րիշ բան մը կու գայ : Ան ստրկով հիմակուան նեղութիւններնէդ չէք կրնար ազատիլ : . . . Կրնաք, այնպէս չէ . ես ան ստակը չեմ առներ :

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Պէտք է որ առնես : Ինչպէս զըուցեցի, ան զարդերը բոլորովին քուիդ են, եւ ես ամենեւին իրաւունք չունիմ զանոնք գործածելու : Թէ որ իմ սարկովս գնուած ըլլային, հարկ չկար որ դուն ըսէիր, պարտքս էր որ անոնցմով իմ պարտատէրներս գոհը ընէի :

ԳԵՂԱՄ

Թէ որ իմն են նէ, ես հրամանոյը կը պարգեւեմ, իմ ստացուածքս ուրիշն պարզեւելու իրաւունք, ունիմ, անանկ չէ մի :

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Չէ . վասն զի քեզի ամենէն մերձաւորը դուն ես . ան փոքր ստացուածքդ ձեռքէդ հանելով՝ ինք զինքդ ու եղբայրդ հոգալու միակ միջոյը կը կորսընցընես : Եղին ստակը բաւական է երկուքնիդ ալ այնչափ ատեն պահելու, մինչեւ որ քու յատուկ վաստակովդ ինք զինքդ ու եղբայրդ կարող ըլլասնայիլ : Ասկից ալ զատ՝ ան ստրկով պարտատէրներէս մէկը կամ երկուքը գոհը ընէի ալ նէ, մէկալները միշտ կը մնային :

ԳԵՂԱՄ

Բայց, կ'աղաչեմ . . . :

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Բաւական է, երկայն բարակ խօսելու ատեն չկայ. իմ պարտքս եւ խոհեմութիւնն այսպէս կը պահանձեն: Ահաւասիկ առ բալլիքը, քովդ պահէ: Հիմա գնա մէյ մը վարը նայէ որ կնքելու համար տէրութեան կողմանէ գալու մարդիկն եկած են:

ԳԵՂԱՄ ԴԱԿԱ ԵԼՅՈՒ ԱՐԴԻՆ:

ՏԵՇ Աստուած, աս օրուանս ալ պիտի հասնինք եղեր:

ՏԵՍԻԼ Դ.

ՊՐ. ԲԱԲԿԻՆ ԱՐԴԻՆՅԻՆ:

Ե՞ս պիտի ըլլայ եղեր ուրեմն իմ բոլոր աշխատութեանս ու հոգերուս պտուզը: Ի՞նչ յիմարութիւն կ'ընէ մարդ՝ երբ որ աշխարհքին համար կ'աշխատի: Հասարակօրէն վախճանն ի՞նչ կ'ըլլայ. նեղութիւն, վիշտ, գժբախտութիւն, ողորմելութիւն: Զաւկըներն ու սիրելիները՝ գժբախտութեան, ինք՝ արհամարհութեան մէջ կ'իյնայ, մանաւանդ թէ խաբերայի տեղ կը գրուի: . . . Խաբերայ սեպուիլ . . . : Ասիկա ամենէն աւելի ցաւ կ'ըլլայ ինձի. միակ միսիթարութիւնս ան է, որ գոնէ Աստուած կը ճանչնայ որ այնպէս չեմ, խիղճս կը վկայէ որ դործքերուս մէջ ամենեւին խաբէտութիւն չկայ: . . . Թէ որ ունեցածքիչ մը ստրկովս մէկդի քաշուած ապրէի, հիմա աս խեղճութիւնները գլուխս չեին գար: . . . (Քիչ ճը մորածելո՞ն եպեւ:) Բայց չէ. մարդս դատարկ եւ անդործ ապրելու համար ստեղծուած չէ. պէտք է որ իր նմաններուն՝ ձեռքէն եկածին չափ օդտակար ըլլալու ջանայ, իր աղդին, հայրենեացը համար աշխատի: . . . Որչափ որ է նէ՝ ուրիշներուն օդնելու ջանացած եմ. չեմ յիշեր որ մէկու մը թշուառութեան պատճառ եղած ըլլամ. եւ հիմա գժբախտութեան մէջ ինկած ատենս ալ կը յուսամ որ սւ-

բիշին վնաս մը չ'ըլլար . ունեցածս չունեցածս բոլոր
ծախուելով՝ կարծեմ թէ ամէն պարտքերս կրնան
հատուցուիլ : . . . Բայց զաւկըներս . . . : Չէ , եւ ոչ
իսկ զաւկըներս դժբախտ են . ով գիտէ հարստու-
թեան մէջ մնային նէ՝ ինչ կ'ըլլային : Կը յուսամ
որ առանց իրենց յանցանացը աս պատահած չարիքն
իրենց աւելի օգտակար կ'ըլլայ : Թշուառութիւնը
շատ անդամ առաքինութեան առիթ կ'ըլլայ : . . .
Հա՛ , Պր . Կերսէս :

ՏԵՍԻԼԵ.

ՊՐ . ԲԱԲԿԻՆ , ՊՐ . ՆԵՐՄԻՍ , ԳՐԻԳՈՐԻՍ

ՊՐ . ԲԱԲԿԻՆ դեղի է ՊՐ . ՆԵՐՄԻՆ ԵՐԵՎԱՆ:

Գրոցէ գլուխս եկածն արդէն լսած էք :

ՊՐ . ՆԵՐՄԻՍ

Հրամեր էք , Գրիգորիսնիս ամենայն ինչ պատմեց :
Ասոր վրայ ունեցած ցաւս հարկ չկայ որ խօսքով
բացատրելու ետեւէ . . . :

ՊՐ . ԲԱԲԿԻՆ

Գիտեմ արդէն , միշտ ինձի եւ իմիններուս մտե-
րիմ բարեկամն եղած էք : Տղոցս տուած աղէկ կըր-
թութիւններնուդ համար ի՞նչչափ շնորհակալ պէտք
է որ ըլլամ :

ՊՐ . ՆԵՐՄԻՍ

Իսկ ես հրամանոցը ինձի ցուցրած բարեկամու-
թեան ու սիրոյն , եւ աներնուդ մէջ վայելած ու-
րախութեանս համար ունեցած երախտագիտութիւնս
չեմ գիտեր ի՞նչպէս բացատրեմ : Իմ ըրածս պարտքս
էք . . . :

ՊՐ . ԲԱԲԿԻՆ

Իմ պարտքս ալ ան էք որ իմ որդիքներուս համար
կրած աշխատանքնիդ եւ իրենց ըրած բարիքնիդ ըստ
արժանաւոյն վարձատրեմ : Հիմա տրտմութեանս մէկ

պատճառն ալ ան է, որ աս բաղձանքս ալ չեմ կրնար կատարել: Ուստի եւ մինակ Անոր պէտք է թողում աս հոգը, որն որ կրնայ վարձատրել եւ ստուգիւ ալ կը վարձատրէ: Կը յուսամ որ զաւկըներս ալ. . . :

ՊՐ. ՆԵՐՍԻՍ

Ո՛Հ, իրենք արդէն իրենց փութաջանութեամբն ու անսացողութեամբը՝ իմ փոքր աշխատութիւնս չափէն աւելի պատկեցին, եւ կը յուսամ որ ասկէ եաեւ աւելի կընեն:

ԳՐԻԳՈՐԻՍ

Անշուշտ ձեռքէս եկածը կընեմ հրամանքնիդ ասկէ ետեւ ալ գոհ ընելու: Իմ միակ ջանքս միշտ ան պիտ'որ ըլլայ որ հրամանոցն արժանի աշկերտ ու առաքինի եւ հայրենեաց օգտակար մարդ ըլլամ:

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Կը յուսամ, սիրելիս, որ աս խօսքդ իրօք ալ կը կատարես: . . . Բայց, ՊՐ. ՆԵՐՍԻՍ, կը տեսնէք թէ բաներն ան աստիճանի հասած են, որ ասկէ վերջը ալ որդւոյս համար դաստիարակ մը չեմ կըրնար պահել:

ԳՐԻԳՈՐԻՍ

Աիրելի հօրմէս բաժնուիլս բաւական չէր, հրամանոցմէ ալ պիտի բաժնուիմ եղեր:

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Ո՛ՐԴԵԱԼ, իմ ալ ամենամեծ յաւս աս է, գիտեմ դաստիարակիդ պէս մարդ մը կորսընցընելով՝ ինչ մեծ գանձ կը կորսընցընես: Բայց ապահով եմ որ քեզմէ հեռու եղած ատենն ալ՝ զքեղ բոլորովին չիթողուր, միշտ իր իրատներովը քեղի կ'օգնէ:

ԳՐԻԳՈՐԻՍ

Աս բանս կընէք, անանկ չէ մի, իմ սիրելի երկրորդ հայրս:

ՊՐ. ՆԵՐՆԻՍ

Կրնաս ապահով ըլլալ, բարեկամիկս, որ քանի

որ շունչս վրաս է նէ, միշտ քեզի խրատտու, բարեկամ, հայր կըլլամ, ամէն ձեռքէս եկածը կ'ընեմ։
ՊԲ. ԲԱԲԿԻՆ

Չեղի պէս սիրտ ունեցողէ մը ասկից տարբեր վարանք մը չէր կընար սպասուիլ. հազար անգամ շնորհակալ եմ ձեր բարեկամութեան համար։ Սակայն հիմա պէտք է որ զբուցեմ թէ ի՞նչ որոշում ըրածեմ Գրիգորիսիս վրայ։ Մինչեւ Սեպտեմբերի սկիզբը դուք զինքը քովվերնիդ կը պահէք. կը յուսամ որ երկու երեք ամսուան համար հարկաւոր եղած ստակը պարտատէրներս չեն զլանար։

ՊԲ. ՆԵՐՍԻՍ

Ես ալ հրամանոցը կը զբուցեմ որ ասկից երկու տարիէն յառաջ զինքը քովվես չեմ բաժներ։

ԳՐԻԳՈՐԻՍ

Ի՞նչ կ'ըսէք։

ՊԲ. ՆԵՐՆԻՍ

Ինչ որ քեզի ունեցած սէրս, եւ հօրդ պարտական եղած երախտագիտութիւնս կը ցուցընէ։

ՊԲ. ԲԱԲԿԻՆ առաջին բետք բանելով։

Ի՞նչ մեծ միսիթարութիւն է մարդուն՝ իր դժբախտութեան ատեն ասանկ մեծանձն բարեկամ ունենալը։ Չեր կամքը՝ դործքի տեղ կ'ընդունիմ։ Բայց չեմ կընար հաւանիլ որ կատարէք։

ՊԲ. ՆԵՐՆԻՍ

Ամենեւին մի հոգաք։ Հրամանոցն առատաձեռնութեամբն ու իմ խնայողութեամբս, փառք Աստուծոյ, անանկ վիճակի մէջ կը դտնուիմ, որ առանց նեղ մտնելու՝ մէկ երկու տարի իմ սիրելի Գրիգորիսիս հետ կընամ ապրիլ։ Խուց մը կը վարձեմ, որուն մէջ մէկտեղ կը բնակինք. քանի մը ձեռադիրներ ունիմ, զորոնք աղէկ գնով կընամ ծախել։ Եւ որովհետեւ ինք փութաջան ըլլալով՝ հարկ չկայ որ վրան շատ երկայն ատեն կորսընցը.

նեմ, անսր համար միշտ կրնամ դրաւոր աշխատութիւններու զբաղել եւ երկուքներնուս պահպանութեան համար հարկաւոր եղածը դիւրութեամբ ճարել:

ԳՐԻԳՈՐԻՍ ՀԱՅԻ

ԱՇ, Ճշմարտապէս իմ երկրորդ հայրս, չեմ կրնամ խօսքով յայտնել սրաիս մէջ զգացածս:

ՊՐ. ԲԱԲԿԵՆ ՊԵՏԵՒՔ ԱՐԲԵԼԵՎ:

Երկուքներնուս ալ արցունքը՝ սրտերնուս մէջ զգացածնիս աւելի աղեկ կը բացատրեն, քանի թէ երկայն ճառեր խօսելու ըլլայինք: Ի վերայ այսր ամենայնի պէտք է որ սրոշմունքս յայտնեմ: Չորս շաբաթ է որ գլուխս գալու դժբախտութիւնն յայտնի տեսնելով՝ ասդին անդին ինկած ու հոգացած էի, որ Սեպտեմբերի սկիզբը Գրիգորիս վարժոց մը կարենայ մտնել: Բայց հիմա բանն ասանկ փոխուելով՝ ամենայն ինչ ձեր բարեկամութեանն ու խոհեմութեանը կը յանձնեմ:

ՊՐ. ՆԵՐՍԵՍ

Շատ աղեկ. սակայն . . . :

ՏԵՍԻԼ. Օ.

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ ՀԱՅԻ

ԱՇ, ամենասիրելի հայրս:

ՊՐ. ԲԱԲԿԵՆ

Ի՞նչ կայ . . . լաւ, ուրեմն եկած են, կը կնքեն: Պէտք է որ երթամ: Մի լար, որդեակ, սիրելի զաւակս, մի լար, եւ ցաւերս աւելի մի սաստկացըներ: Տես, Աստուած իմ տրտմութեանս մէջ ինձի որչափ միսիթարութիւն կու տայ: Աս բարեսիրտ, մեծանձն մարդը (ՊՐ. ՆԵՐՍԵՆԸ կը ցուցնէ:) եղբայրդքովը պիտ'որ առնէ. ուստի հիմակու հիմա երկուք-

նիդ ալ հողացուած էք : Աերջն ալ Աստուած զձեզ
թող չխտար : Մնաք բարով, Պր. Ներսէս, երկու
զաւելըներս ալ ձեզի կը յանձնեմ . Գեղամն, ձեր
առջի աշկերտն ալ մի մոռնաք, իր վտանգաւոր վի-
ճակին մէջ հսկեցողութիւննիդ ու խրատներնիդ
վրայէն անպակաս ըլլայ : Զեր բարեկամութիւնն ու
սէրը երբեք մտքէս չ'ելլեր :

ԳՐԻԳՈՐԻԱՆ հօրը ձնիւածները Քարենուած :

Այսպէս մեզմէ կը բաժնուիք . չէ, չեմ կընար թո-
ղուլ :

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Գեմ զնելը պարապ բան է, սիրելիս : Կը յու-
սամ որ երբեմն երբեմն կընամ զձեզ տեսնել . չեմ
կարծեր որ անդթութիւնն ան աստիճանի հասցը-
նեն, մինչեւ երբեմն ինծի դալու հրաման չտան :
Մնաք բարով, սիրելիք : (Զաւելները իւ ժրէեւ :)

ԳԵՂԱՄ

ԱՇ, բաժանումն այսպէս դառն է եղեր : (Զիրնար
ուրիշ բան ըստ, երեսը երկու յերածներովը դոցած ե-
ւեղանի մը իւնասած՝ անշարժ իւ իւնայ :)

ՊՐ. ԲԱԲԿԻՆ՝ Գրիգորիան, որն որ պինած բանած՝ լուսվը
բաժնուածլ :

Թա՞ղ տուր, սիրելի զաւակս, թո՞ղ: «Նայէ որ փու-
թաջանութեամբդ ու հպատակութեամբդ՝ մեծանձն
բարերարդ գոհ ընես : Աստուծոյ երկիխովը միշտ որո-
տիդ մէջ մնայ . ան ատեն ստուգիւ երջանիկ կ'ըլլաս :
(Բանաւելամբ իւ բաժնուի դուրս իւելլէ : Գրիգորէս
եպեւեն իւ վաղէ, Պր. Ներսէս ալ եպեւեներնէն իւելլէ :)

ՏԵՍԻԼԻ.

ԳԵՂԱՄ արանչին :

Ես ինչ կեցեր եմ, ես ալ երթամ : (Գեղի է դուռա-
յանով իւելնայ :) Բայց չէ . դուցէ ինք զինքս չեմ

կրնար բռնել, եւ հօրս ցաւն աւելի կը սաստկացը-
նեմ: (Լալով անուոէ ճը վրայ իը նոտի, եւ գլուխը յեւ-
ոն իը յեցընէ): Ի՞նչ դժբախտութիւն: . . . Մահը
ժամանակէն յառաջ մօրմէս բաժնեց. երկրորդ մայրս
ալ՝ նոյն անգութ մահն յափշտակեց. հիմա անա-
գորոյն մարդիկ հայրերնիս ալ բռնութեամբ մեզմէ
կը բաժնեն: Բայց . . . արդեօք կերպով մը հայրս
չէմ կրնար աղատել: Մէջ մը իմ գլխաւորիս զրու-
ցեմ. . . պարապ բան է. արդէն հայրս խօսեր է եւ
օգուտ մը չէ եղած: . . . Սակայն արդեօք ան մօրս
զարդերը ծախէի եւ նոյն ստրկով . . . : Թէպէտ
ըստ որ իմ ու եղբօրս պահպանութեան համար մինակ
անոնք կը մնան. բայց եղբայրս արդէն իր դաս-
տիարակին քովը պիտ'որ մնայ. ես ալ առած ստր-
կովս կրնամ ինք զինքս հոգալ: . . . Ըստ որ մի-
նակ մէկ երկու պարտատէր դոհ կը լլայ, եւ մէկալ-
ներն առնելիքնին կը պահանջեն: Բայց գուցէ մի-
նակ զմեզ հոգալուն համար՝ այնպէս զրուցեց: . . .
Ստուգիւ այնպէս եղած պիտ'որ ըլլայ: Մեր սիրոյն
համար մեռնին ալ աչքին բան մը չ'երեւար . . . :
Ես ալ իր սիրոյն համար ամէն բան պէտք է որ
փորձեմ: . . . Մուրանալ ալ հարկ ըլլայ, ասանկ
հօր մը համար՝ չեմ քաշուիր: . . .

ՏԵՍԻԼԻ.

ԳԵՂԱՄ, ԳՐԻԳՈՐԻՍ

ԳՐԻԳՈՐԻՍ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ԻՆ ՀՐԱՆՔ:

ԳՆԱՅ, ԳԵՂԱՄ. ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՐՆԻՍ ՊՆԱՅ:

ԳԵՂԱՄ

ԳՆԱՅ:

ԳՐԻԳՈՐԻՍ

Կը կարծէի որ բան մը չիկրնար զիս իրմէ բաժնել:
. . . Բայց հրամայեց. . . . ստիպողական կերպով մը

Հրամայեց որ կենամ։ Աղաչեց որ իր ցաւն աւելի չառեցընեմ. . . : Ի՞նչ կրնայի ընել. . . հարկ եղաւ որ հնազանդիմ։

ԳԵՂԱՄ

Վայ մեզի. հիմա կ'իմանամ թէ որք ըլլալն ի՞նչ է եղեր։ Պը. Ներսէսն ուր է։

ԳՐԻԳՈՐԻՍ

Այլայլութենէն ինք զինքը չկրնալով բռնել՝ խուցը քաշուեցաւ։

ԳԵՂԱՄ

Հայրս երթալու ատեն բան մը չզրուցեց։

ԳՐԻԳՈՐԻՍ

Վարը կնքելու համար եկող մարդիկներն արդէն գործքերնին լմնցուցած ըլլալով՝ ատեն թող չտուին։ Ինձի հրամայեց որ զինքը թող տամ, եւ երբ որ ես լալով ու գողալով ետ կը դառնայի, իբրեւ թէ տուած խիստ հրամանին վրայ զզջալով՝ նորէն կանչեց, դարձեալ պատաւ, ու աչուրներէն յորդ արցունք թափելով՝ աճապարեց դունէն դուրս ելաւ։

ԳԵՂԱՄ

Գիտես, Գրիգորիս, միտքս բան մ'եկաւ։ Թակէտ հայրս զրուցեց որ Պը. Հմայեակ խիստ մարդ մընէ, իբրեն աղաչելը պարագ բան է. բայց ես միշտ անանկ կը կարծեմ որ եթէ երթանք լանք, աղաչենք, պաղատինք նէ, չեկրնար գեմ դնել։

ԳՐԻԳՈՐԻՍ

Աղեկ ըսիր, երթանք. խիստ ըլլալով՝ ի՞նչ կրնայ ընել, առ առաւելն պիտի ծեծէ, կամ զմեղ ալ բանտ պիտի դնէ. հօրս սիրոյն համար ամէն բան սիրով յանձն կ'առնեմ։

ԳԵՂԱՄ

Ի՞նչ կ'ըսես, ծեծէլ, բանտ դնել. անանկ բան չըներ։ Բայց եթէ աղաչանքնիս չիլսեր նէ, ես գիտեմ ի՞նչ կ'ընեմ։ Իր Պաճոյճ որդին իմ բարեկամն

է, իրեն կ'երթամ կ'աղաւեմ որ հօրը միջնորդ ըլւ-
լայ: Խոկ եթէ աս ալ չեյաջողիք նէ, հօրս պարտքը
կը վճարեմ:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Կը վճարես. ինչով պիտի վճարես: Թէ որ այն-
շափ ստակ ունիս նէ՝ ինչու անմիջապէս չտուիր:

ԳԵՂԱՄ

Բանը վերջին բոպէն խմացայ. Եւ թէպէտ աղա-
ւեցի որ առնէ, բայց ամենեւին չուզեց:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Ուրեմն երթանք. հիմա կը յիշեմ որ Պը. Հմայ-
եակին պղտիկ տղուն հետ քանի մը անգամ տես-
նուած եմ: Չըլլար նէ՝ ես ալ իրեն կ'երթամ: Բայց
մէյ մը Պը. Ներսիսին զրուցեմ:

ԳԵՂԱՄ

Զէ, ան չ'ըլլար: Անտարակյս ինքն ալ հօրս պէս
պիտ'որ ըսէ որ պարապ բան է: Գիտես ամէն ան-
գամ իրեն իրաւունք կու տայ:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Ստոյդ է, բայց պէտք է որ դուրս երթալս եւ ուր
երթալս խմացընեմ:

ԳԵՂԱՄ

Ըսէ որ Պը. Հմայեկին որդւոցը պիտ'որ երթանք,
աղաւենք որ հօրերնուն մեր հօրը համար միջնորդ
ըլլան:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Աս աղէկ է եւ մէջը սուտ ալ չկայ: (Կ'երեայ:)

ԳԵՂԱՄ

Աստուած տայ որ սիրաը կակղի: Պէտք է որ ար-
կղիկն ալ մէկտեղ առնեմ: (Դարձնը իը բանայ եւ որ-
իշիը դուրս իը հանէ:)

ՎԵՐՋ Ա. ԱՐԱՐՈՒԵԾՈՅՆ

ԵՐԵՐՈՒՅԾ Բ.

ՏԵՍԻԼ Ա.

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ առանցին, ՔՐԱԿԵՂՋՆԻՆ առվել նորոշ՝ իւ գրեւ:

Հայ, ինչպէս որ պէտք է նէ խատութիւն պիտի բանեցընեմ. առջեւ չորս շաբաթը հացէն ու ջրէն ուրիշ բան կերցընել չեմ տար: . . . Զիս այսպէս 20,000 դահնեկանէս ընել: (Քէլ ճը մասձելէն եղեւ:) Ատոյդ է ինք յանցանք չունի . . . : Բայց ինչո՞ւ ուրիշն համար երաշխաւոր կ'ըլլայ: . . . Ես խաբուեցայ, ստակս կորսընցուցի, ան բաւական է. կ'ուզէ իր յանցանքովն ըլլայ, կ'ուզէ ուրիշն յանցանքովը: Պէտք է որ պատիժը կրէ: Գուցէ այնպիսի մէկն ալ կը գտնուի, որն որ իրեն համար երաշխաւոր ըլլայ: Անանկ բան մ'ըլլայ նէ, ալ աղէկ: (Գուցը իւ պահանձեմ:) Կարծեմ դուռը կը զարնեն: (Կ'եւէ գուցը իւ բանայ և դանէն դուռը իւ զբուցէ:) Հրամայեցէք, Պարոնիկ:

ՏԵՍԻԼ Բ.

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ, ԳԵՂԱՄ

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ

Հրամայեցէք, Պարոնիկս, ինչ բանով կրնամ ծառայել: (Գեղամ իսու լոյ եւ վիրնար իօսիլ:) Թողութիւն կ'ընէք ժամանակ չունիմ, ըսելիքնիդ շուտով ըսէք: (Ինչ իրեն:) Ո՞վ գիտէ ինչ զլխու ցաւ պիտի ըլլայ. գուցէ աս մաքուր զգեստներուն տակ մուրացիկ մըն է:

ԳԵՂԱՄ

Թողութիւն տուէք, Պարոն, Հրամանոցը գլութիւնն աղերսելու եկած եմ:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

ԳԹ-ՈՒԹԻՒՆ. ՀՈՍՏԵՂԱ ԳԹ-ՈՒԹԵԱՆ ՄԵՂ ՀԷ, ՀՈՍ
ԳՐԱՄՈՒՆ Է, ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՂ Է: ԲԱՅց ԻՆչ
Է, ՉՈւԹՈՎ Ըսէք. ԺԱՄԱՆԱԿԱ ԿԱՐՃ Է:

ԳԵՂԱՄ

ԱՇ, Հօրս կորստեան վրայ ունեցած կալիճռ . . . :
ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ Խօսէ Խրելու:

Հա՛, Հա՛, մէկէն ի մէկ չճանչցայ, ան փառաւոր
Բաբկէնին տղան ես՝ որն որ ինծի 20,000 դահեկա-
նէն աւելի ստակ կորսրնցընել տուաւ:

ԳԵՂԱՄ

Հայրս անշուշտ ձեր վեսաին պատճառ եղած ՀԷ:
ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ինծմէ աղէկի գիտես :

ԳԵՂԱՄ

Ուրեմն իր արդարասիրութիւնն, իր զգուշաւորու-
թիւնը չէք ճանչնար:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ո՛վ որ ուրիշին համար երաշխաւոր կ'ըլլայ՝ որ ա-
նոր տեղը վճարե, եւ չիվճարեր, ոչ արդարասէր է
եւ ոչ ալ զգուշաւոր :

ԳԵՂԱՄ

Բայց թէ որ սրտանց կը բաղճայ վճարել եւ չի-
կրնար :

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ան ատեն պէտք չէ որ խօսք տայ. ապա թէ ոչ՝
զգուշաւոր չէ. անխոհեմին, անմտին մէկն է:

ԳԵՂԱՄ

Կ'աղաչեմ, Հօրս այնպէս նախատական անուններ
մի տաք: Կրնայ խաբուած ըլլալ. բայց . . . :

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Բայց, բայց. ինչբայց . . . վիճելն օգուտ մը չու-
նի: Քեզի պէս տղայ մը զիս չիկրնար համոզել որ ի-
րաւունք չունիմ:

ԳԵՂԱՄ

Ես ալ անոր համար եկած չեմ որ վիճեմ եւ ի-
րաւունք չունենալնիդ յուցընեմ։ Միայն աղաչելու
եկայ որ գթութիւն ընէք . . . :

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Հա՛, հա՛. գթութիւն ընեմ, եւ տասը հազար
դահեկանս ծովը նետեմ։

ԳԵՂԱՄ

Չէ, ասիկա չեմ ուզեր. միայն հայրս աղատ թող
տուէք եւ քիչ մը ժամանակ համբերեցէք, կը տես-
նէք որ անշուշտ . . . :

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ի՞նչ համբերել, ի՞նչ տեսնել։ Համբերել, տեսնել
ըսելով՝ ձեռքէ փախցրնեմ, հա՛. Անանկ բան չ'ըլ-
լար. մինչեւ որ բոլոր պարտքը չիվճարեր նէ, բան-
տէն ելլելիք չունի։

ԳԵՂԱՄ

Հայրս անանկ անորդ ու խարեբայ մարդու տեղ
կը դնէք, որ պարտքէն աղատելու համար՝ ձգէ փախ-
չի. փախչիլ ուզեր նէ՝ մինչեւ հիմա շատոնց կրնար
փախչիլ։ Բայց իր պատիւն իրեն ամէն բանէն վեր
է։ Ինք պատուաւոր մարդ է։

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Իմ աչքիս առջեւը պատուաւոր մինակ ան է, որն
որ պարտքը կը վճարէ։ Թողինքն ալ վճարէ. ան ա-
տեն աշխարհքիս վրայ իրմէ պատուաւոր մարդ չ'ըլլար։

ԳԵՂԱՄ

Զինքն աղատ թողուցէք եւ ժամանակ տուէք,
գուցէ իրեն համար վճարող մը կը գտնուի։

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Արդէն ժամանակն երկու անգամ երկընցուցի, օ-
գուտ մը չըրաւ. . . : Բայց ի՞նչ կեցեր երկայն բա-
րակ վիճաբանութիւն կ'ընեմ. ալ գործքդ դնա, ես
պարապ տեղ կորսընցընելու ատեն չունիմ։

ԳԵՂԱՄ

Մտածեցէք մէյ մը հայրերնիս ի՞նչպէս ցաւ կը զգայ զմեղ առանց օդնականի, առանց մսիթարութեան թող տալուն համար . մտածեցէք մէյ մը , թէ որ հրամանոցը զաւկըները . . . :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Իմ զաւկըներս , անոնց համար հոգացած եմ: Աս կը տեսնե՞ս . (Աբիւ ճը իւ շուշընէ :) ես ուր կ'ուզեմ նէ՝ երթամ , իրենք անոր մէջ թէ օդնական , թէ մսիթարութիւն կը դանեն : Չեր հայրն ալ այնպէս ըրած ըլլար նէ , հիմա բաւական մսիթարութիւն կ'ունենայիք եւ օդնական ալ չէր պակսեր . ինք բանտի մէջ չէր գտնուեր , ես ալ ստակս առած կ'ըլլայի: . . . Բայց դուն խօսք չես հասկընար , ժամանակ չունիմ , ըսի . ալ զիս աւելի մի ձանձրացըներ :

ԳԵՂԱՄ առջեւը ցնիան վրայ ի՞նչոյ :

Վ'աղաշեմ , թափած արցունքիս ողորմեցէք :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ իւ սիսէ իցին մէլ լուր շորտ +ուլւ ապուրուլ:

Չէ , չէ . չ'ըլլար : Պուրս ելիր :

ԳԵՂԱՄ

Ողորմեցէք վրանիս , հայրերնիս մեղի դարձուցէք :

Աստուած հրամանքնիդ կը վարձատրէ :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ ավանդները հոգիլու՛ +ուլւը իւ լորունուիք :

Չ'ըլլար , ըսի , չ'ըլլար :

ԳԵՂԱՄ

Ուրեմն թէ որ բացարձակապէս չէք ուզեր նէ , մսիկ ըրէք :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Չէ , չէ . բան մը մտիկ չեմ ըներ , բան մը չեմ տեսներ :

ԳԵՂԱՄ

Հօրս պարտքը ես կը վճարեմ: . . . (ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ
+ուլւ դունէն աճաղաբելվ ուրիշ իսուց մը ի՞նիցնէ . Եւ

դուռը ի՞ւ գոյցէ:) Աշխարհքիս մէջ ի՞նչ խստասիրտ
մարդիկ կան եղեր: . . . Եւ ոչ հօրս տեղ վճարելս
կ'ուղէ ընդունիլ: . . . Մէջ մ'ալ որդւոյն ձեռքովը
փորձեմ: (Դուրս ի՞ւլէ:)

ՏԵՍԻԼԻ Բ.

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ ԴՈՒՐԸ ՔԻՆ Բահալը զժուշութեամբ է
հայե, իւ ԳԵՂՋԻ ԳՈՅՉ ՇԱԾԱԿ ՀՐԱՋ ՄՊԱՀՆԼ ՇԱԾԱԿ
ԵՐԵՎ ԴՈՒՐԸ ԻՒԼԷ:

Աս ի՞նչ յամառ տղայ է. զիս որչափ չարչարեց:
Թէ որ քիչ մ'ալ շարունակելու ըլլար, չեմ գի-
տեր որ գէմ գնելու զօրութիւն կ'ունենայի արդեօք.
սիրտս ի՞նչպէս կը շարժէր: . . . Անշուշտ սա Բար-
կէնն այնպէս գէշ մարդ պիտի չըլլայ, որ ասանկ
որդի մ'ունի, հայրն ի՞նչպէս կը սիրէ: . . . Թէ որ
իմ գլուխս ասանկ բան մը դալու ըլլար նէ, ստու-
զիւ զաւկըներս աս կերպով չէին վարուեր: . . .
Կ'ուղէի որ իրենցմէ մէկն աս տեսարանին ներկայ
գտնուեր: Զեմ գիտեր որ արդեօք գիշեր ցորեկ աշ-
խատելով իրենց ստակ ժողվելուս համար՝ այնչափ
երախտազիտութիւն ունին, որչափ որ ատ տղան իր
հօրն ունի՝ պարտքի տակ իյնալուն, ինք զինքն ու
որդիքը կործանելուն համար: Թէ որ 20,000 դաշե-
կանին տեղ 2000 կամ 3000 դաշեկան ըլլար նէ,
գուցէ իրեն համար . . . :

ՏԵՍԻԼԻ Գ.

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ ՍԱՀԱԿ

ՍԱՀԱԿ Բահարայոյն ձիւաղլը:

ԶԵս ըսեր, հայր, ծիծաղելու բան մը կայ:

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ

Ո՛վ գիտէ ի՞նչ պարապ բան է:

ՍԱՀԱԿ ՀԻՒԹՈՅ ՀԱՐՈՒՆԻԱԲԵԼ:

ՄԵՐ մը գիտնայիր, ի՞նչպէս ծիծաղաշարժ բան է ·
մորդ ծիծաղելէն կը ճամթի :

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ի՞նչ պիտ'որ ընեմ, ի՞նչ ըլլայ նէ՝ ըլլայ :

ՍԱՀԱԿ

Բայց լսես նէ՝ ստուգիւ պէտք է որ գուն ալ
ծիծաղիս : . . . կրնաս գիտնալ ով եկած է :

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Անմիտ տղայ, ի՞նչ վրաս պէտք է ով եկած ըլլ-
լալը, որ գիտնալու համար գլուխս յոդնեցընեմ :

ՍԱՀԱԿ

Չես կրնար գիտնալ՝ անկարելի է. անոր համար
կը զրուցեմ: Բաբկէնին պղտիկ տղան է: (Դարձեալ
բարձրայաց իը ծիծաղին :)

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Հա՛, հա՛. հիմա կ'իմանամ, մեծ որդին ալ ինծի
եկաւ: Անշուշտ կ'ուզէ որ ինծի միջնորդ ըլլաս որ
հայրն աղատեմ. բայց ես ալ քեզի կը զրուցեմ
թէ . . . :

ՍԱՀԱԿ

Անոր ալ ճամբան կայ: Ստուգիւ ըսածիդ պէս
կ'ուզէ որ քեզի միջնորդ ըլլամ. բայց (ծիծաղ) կը
խնդրէ որ աղաչեմ թէ զինքը հօրը տեղ բանտ
դնել տաս, հացէ ու ջրէ զատ բան չտաս, միայն թէ
հայրն աղատես:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ասիկա քու աչքիդ առջեւը ծիծաղական բան է :

ՍԱՀԱԿ

Հապա ի՞նչ է. հիմա իրմէ ով կ'ուզէ որ բանտ
մտնէ:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ուրեմն թէ որ քու հայրդ բանտ դրուեր, ամե-
նեւին հսդդ չեր ըլլար :

ՍԱՀԱԿ

Ինչե՞ր կը մտածես. ինչպէս կընայ ըլլալ որ դուն
բանտ մտնես : Այնչափ ստակ ունիս . եւ երբ որ
մէկը պարտքերը կը վճարէ նէ, զինքն ովլ բանտ
պիտի դնէ :

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ես ալ գիտեմ որ հիմա ստակ ունիմ: Բայց
դնենք թէ ստակս կերպով մը պակսի, գողցուի,
կամ մէկու մը երաշխաւոր ըլլամ: . . . Վաճառա-
կանը բոպէ մը իր ընչեց վրայ ապահովութիւն չունի.
պարտապանները կրնան չվճարել, անանկանալ, եւ
ինք նեղ մտնելով՝ չիկրնար իր պարտատէրները դոհ
ընել: Ուստի դնենք թէ իմ գլուխս ալ ասանկ բան
մը գայ, քու խօսքիդ նայելով՝ ամենեւին հոգդ
պիտի չըլլայ:

ՍԱՀԱԿ

Պարտքն ես չըրի, ըրած կորստիդ պատճառն ես
չեմ. ինչ ընեմ:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Բարկենին որդին ալ պարտքն ընողը չէ, ինքն ալ
հօրը կորստեան պատճառ եղած չէ:

ՍԱՀԱԿ

Անոր համար ալ ըրածը ծիծաղական բան է.
ասկէ ալ զատ՝ ովլ կ'ուզէ հօրը տեղ՝ անանկ տղայ
մ'առնել:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Խօսքն հիմա անոր վրայ չէ որ պարտատէրն ինչ
կ'ընէ կամ իրեն ինչ ընել կ'իյնայ. հապա՝ թէ
դուն ինչ կ'ընես: Դնենք ուրեմն որ ես պարտքի
համար բանտ մտած ըլլամ, եւ պարտատէրս հաճի
իմ տեղս զքեղ բանտարկելու, դուն յանձն կ'առ-
նես բանտ մտնել:

ՍԱՀԱԿ

Ասիկա զարմանալի հարցում մըն է: Մարդուն

Հոգին կը հանես : . . . Բայց իմ բանտ մտնելէս
քեզի ի՞նչ օգուտ կ'ըլլայ : Սակայն դնենք թէ քու-
տեղդ բանտ մտայ , ինձի ի՞նչ կ'ընեն :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Ան կ'ընեն , ինչ որ ես Բաբեկնին որդւոյն կ'ընէի .
այս ինքն՝ զիս թող կու տան եւ զքեզ բանտի մէջ
հացով ջրով կը պահեն , մինչուկ որ ես վճարեմ :

ՍԱՀԱԿ

Իսկ եթէ դուն վճարել չկրնաս կամ չուզէս :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Բոլոր կեանքդ բանտի մէջ կ'անցընես :

ՍԱՀԱԿ

Հա՛ , Հա՛ , շնորհակալեմ : Հօրս համար բոլոր կեան-
քիս մէջ բանտարկուած մնալ :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Սահակ , Սահակ , կը տեսնեմ որ թէպէտ ՊՐ .
Բաբեկն ինձի չափ ստակ չունի , բայց իր զաւկըները
ձեզմէ անհամեմատ աղէկ են :

ՍԱՀԱԿ

Թէ որ ինքն ալ տեղի ստակ ունենար , տեղի ա-
ղէկ հայր կ'ըլլար :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Անոր վրայ տարակոյս կայ . . . : Պղտիկը գեռ հոսէ :

ՍԱՀԱԿ

Հա՛ , Հոսէ : Չուզեցի մտիկ ընել , բայց այնչափ
աղաչեց , այնչափ լացաւ՝ որ վերջապէս յանձն առի
դալ միջնորդ ըլլալ որ (կը ժեծառէ :) զինքը հօրը
տեղ բանտարկես :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Ասոր վրայ մի ծիծաղիր , սիրտս կը նեղանայ : Մէյ
մը կ'ուզէի սա տղան տեսնել . Հօրն այնչափ սէր ու-
նենալը՝ կ'ախորժեմ : Գնա զինքը քիչ մը հանդար-
տեցուր , ուտեղու բան մը տուր եւ ետքը հետդ առ
ինձի բեր :

ՍԱՀԱԿ

Աղեկ գիտեմ որ ամենեւին բան մ'ուտել չ'ուզեր: Եւ կարծեմ աղեկ կ'ընես որ զինքը չտեսնես:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Գուն գնա բաածս ըրէ . թէ որ հօրն ու մեծ եղաբօրը ձեռքէն աղատեցայ նէ, իրմէ ալ իր պրծիմ: (Ամառի դուրս կ'ելլէ :)

ՏԵՍԻԼԵ.

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ առաջն:

Հիմա միաքս կու դայ, սա երկու տղոցմէ մէկը քովս կրնամ առնել . մինչեւ հիմա ունեցած պատանիներս բոլորն ալ անպիտան, ծոյլ բաներ էին . իսկ ասոնք երկուքն ալ աղեկ տղաք կ'երեւան: Իրենց հօրն այսչափ սաստիկ սէր ունեցող տղաք՝ չեն կրնար գէշ ըլլալ: Ասկից ալ զատ՝ յոյս ունենալով որ եթէ վրանին գոհ ըլլամ նէ՝ հայրերնին կ'աղատեմ, պէտք է որ ամէն պարտքերնին ճշդիւ կատարեն եւ աղեկ աշխատին: Ստոյդ է մեծը բանիս աւելի կը յարմարի, բայց անիկա արդէն հաստատուած է. մէկալը նայինք ինչպէս է :

ՏԵՍԻԼԵ. 9.

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ. ՊԱՃՈՅՃ

ՊԱՃՈՅՃ կուլուն ներս իւ հրնէ:

Եւքդ լոյս, հայր, ուրախալի լուր մ'ունիմ:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Արդեօք քու բերած ուրախալի լուրդ ալ՝ եղբօրդ բերած զուարձալի լոյն կը նմանի:

ՊԱՃՈՅՃ

Եղբօրս բերած լուրը չեմ գիտեր, բայց իմ բերածս անշուշտ ուրախական է: . . . ՊՐ. Բաբկէնին պարտքը վճարելու եկած եմ:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Չըսի՞ որ պարապ բան պիտ' որ ըլլայ: Հիմա ասանկ անհամ կատակներ մտիկ ընելու ատեն չունիմ:

ՊԱՇՈՅԱ

Կատակ չեմ ըներ, ըսածս բոլորովին ստոյդ է: Բայց չեմ վճարեր մինչեւ որ չես խոստանար որ ինձի ալ մաս մը կը հանես կամ դոնէ ոսկի շղթայ մը կու տաս:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Գնա, գնա, զիս մի նեղեր. արդէն կ'իմանայի որ հետեւութիւնն ասանկ բան մը պիտ' որ ըլլայ:

ՊԱՇՈՅԱ

Լաւ ուրեմն, թէ որ չես ուղեր նէ, բերածս կը տանիմ: Բայց մէջ մը պէտք է որ գէթ տեսնես: (Թւելին առաջին լուշինուին մէջ կանոնադաշտ արկանին չ'առնէ, իւ բանայ:)

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ա՛ս ի՞նչ է, ի՞նչ պիտ' որ ըլլայ. նայիմ մէջ մը: (Կ'ուղէ արկանին առնել:)

ՊԱՇՈՅԱ

Չէ, չէ, ես պիտի ցուցընեմ: (Արկանին իւ բանայ:)

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ համարիւմ էին մէջ մէջ իւ չնե մէջ առնել պարունակ:

Նայէ, նայէ, աս ի՞նչ սքանչելի քարեր, ի՞նչ մեծ մարդիտներ, ի՞նչ բարակ ու ազնիւ բանուածք: Հոս ստուգիւ 30—40,000 դահէկանի բան կայ: Ի՞նչ, առնեք բարկենին են, պարուին տեղ կ'ուղէ տալ: Բայց ես մէջէն միայն իմ առնելիքիս հաւասարող բան կ'առնեմ: . . . Նայէ մէջ մը սա խաբերային. թէ որ յառաջադյն բերած ըլլար նէ, բանս չէր մտներ. բայց ի՞նչ պիտ' որ ընես, մարդիկ ասանկ են, մինչեւ որ խստութիւն չես բանեցըներ նէ՝ խելքերնին դլուխնին չիդար: . . . Ա՛լ հիմա կրնայ բանտէն ելլել:

ՊԱՇՈՅԱ

Բայց սա ոսկի շղթան պէտք է որ ինձի տաս :
Ապա թէ ոչ՝ խեղճ տղուն ձեռքէն առնելուս վրայ
կը ցաւիմ :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ զարժանալով :

Խեղճ տղայ . խեղճ տղան ովկ է :

ՊԱՇՈՅԱ

Ո՛վ պիտ'որ ըլլայ . պարտապանիդ մեծ տղան :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Ի՞նչ, սա զարգերն ի՞նք տուաւ :

ՊԱՇՈՅԱ

Հա, ինք տուաւ . կը զրուցէ որ իրենն են, ժառանգութիւն մնացած են, պարզեւ առած է . ի՞նչ գիտնամ . բայց ուրախութեամբ ամէնն ալ կու տամ, կըսէ, միայն թէ ասով հայրս ազատի :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Ապրի , բարեսիրտ տղան :

ՊԱՇՈՅԱ

Աս բանս իրեն մեծ շնորհ.ք կը համարի, եւ իբրեւ շնորհ.ք կը խնդրէ : Բայց, սիրելի հայր, այնպէս չէ, սա շղթան ինձի կու տաս :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Թէ որ քեզի տալու ըլլամ, առնելիքս առած չեմ ըլլար : Չըլլար, չըլլար :

ՊԱՇՈՅԱ

Ան ատեն ստուդիւ կը ցաւիմ . խեղճ երիտասարդն ըստ որ հիմակու հիմա ասիկա իր ու եղբօրը միակ հարստութիւնն է : Թէ որ գիտնալու ըլլայի որ անկից ինձի մաս մը չելլեր . . . :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Աս վարմունքէդ կը տեսնեմ որ եթէ դուն իր տեղն ըլլայիր, հայրդ չէ թէ միայն բանտ՝ հապա շղթայի տակ ալ գտնուեր, հոգդ չեր ըլլար, եւ ազատելու համար գահեկան մը չէիր տար : Ինչպէս որ

քու պատուական եղբայրդ աւելի իր դիւրութիւնը կը սիրէ քան թէ իր ծնողքը, նոյնպէս դուն ալ քու զգեստներդ ու զարդերդ անոնցմէ աւելի կը սիրես: Ինչու ուրեմն ես այնչափ կ'աշխատիմ, հոգիս բերնէս կը հանեմ ձեզի պէս տղոց համար ստակ ժողվելու: Աս է եղեր ձեզմէ ընդունելու երախտագիտութիւնս: . . . գնա մէյ մը զինքն ինձի կանչէ: (Կ'ԵՐԵՄՅ:)

ՏԵՍԻԼ. Ե.

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ առանցին՝ ՔԵ ՀԵ ՀՐԱԺԵԼՅՆ ԻՐԻՆ:

Օ արմանալէն չեմ կրնար դադրիլ, եւ քանի որ Բաբենին աղոցը վարմունքն, իրենց հօրն ունեցած սէրերնին՝ իմիններուս հետ կը համեմատեմ, ինք իրմէս կ'ելլեմ: . . . Ի՞նչ զաւկըներ. մէկը կ'ուզէ իր հօրը տեղ բանտ մտնել, մէկան՝ ունեցածը չունեցածն ուրախութեամբ կ'ուզէ տալ, որպէս զի զինքն ազատեն: . . . Աս կ'ընեն՝ ինչպիսի հօր համար . . . : Անանկ հօր մը համար, որն որ զիրենք թշուառութեան մէջ կը ձգէ, պարտք կ'առնէ, խարեբայի մը համար երաշխաւոր կ'րլայ: Խոկ իմ զաւկըներս . . . : Հարատութեան մէջ կը լողան . . . : Ի վերայ այսր ամենայնի ինձի ամենեւին սէր չունին. մէկը՝ աղջկան պէս հագուիլ ձգուելն ուրիշ բան չեղիտեր. մէկան իր զբօսնաց ու զուարձութեան եաւելէ է: Ասանկ տղոց համար կ'աշխատիմ եղեր . . . : Բայց . . . (Դուռը կը բացուի եւ Գեղամ ներս կը մդնէ:)

ՏԵՍԻԼ. Բ.

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ. ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ

Օխղութիւն տուէք, Պարսն, որ դարձեալ կը համարձակիմ: . . . :

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Թառղութիւն խնդրելու բան մը չկայ, որովհետեւ
վճարել կ'ուզէք: Ինչո՞ւ իսկզբան չզրուցեցիք . զՃԵՂ
սիրով կ'ընդունէի, եւ հայրերնիդ շուտ մը կ'ազատէր:
ԳԵՎԱՄ

Ի՞նչ երջանկութիւն: Բայց յառաջադրոյն մտիկ ընել
չուզեցիք:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ի՞նչ ընեմ, լողէն ուրիշ բան չէիք ըներ:
ԳԵՎԱՄ

Իսկզբան ուզեցի հրամանքնիդ գթութեան շար-
ժել, որովհետեւ հայրս չէր ուզեր որ ան ազնիւ
զարդերը՝ որոնք իմ մօրմէս ինծի ժառանգութիւն
մնացած են, իր պարտքերը վճարելու գործածուին.
ինչու որ հիմակու հիմա ես եւ եղբայրս ապրելու հա-
մար ուրիշ միջոց մը չունինք:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ի վերայ այսր ամենայնի կ'ուզէք ամենն ալ տալ,
հայրերնիդ բանտէն ազատելու համար:

ԳԵՎԱՄ

Հրամեր էք, սիրով կու տամ, եւ կ'ազաչեմ, կը
պաղատիմ որ ընդունիք. եւ եթէ աս ալ բաւական
չէ նէ, ըսէք ի՞նչ որ կը հրամայէք, ամենն ալ սիրով
յանձն կ'առնեմ, միայն թէ հայրս ազատի:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ստուգիւ կը զարմանամ: Հօրերնուդ համար այս
ամենայն կ'ուզէք ընել:

ԳԵՎԱՄ

Պաման, զիս կ'ամրչցընէք, կամ գուցէ կ'ուզէք փոր-
ձել: Ի՞նչպէս կարելի է որ մէկը իր հօրը հետ այս-
պէս չվարուի:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ սիրով շարժած՝ վեր վեր իւ սիսէ պաշտէլ
եւ ինչ իրմէ իւ իսոնի

կենացս մէջ սիրտս այսպէս շարժած չունէր: . . .

Կարծես թէ մէկը ներսէս կը զըռոցէ որ նոյն աղնիւ
զարդերը չեմ կրնար ընդունիլ: (Գեղասին:) Քիչ մը
կեցէք, հիմա կու գամ: (Դուռը կ'եւլէ:)

ՏԵՍԻԼ Թ.

ԳԵՂԱՄ արտային:

Եւ հաստատութեամբ կը յուսամ որ կը յաջողի:
Կ'երեւայ որ սիրտը շարժած է: . . . Ամէն բան եր-
թայ, ամենեւին հոգս չէ. միայն հայրս աղատի:

ՏԵՍԻԼ Ժ.

ԳԵՂԱՄ, ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ, ԳՐԻԳՈՐԻՍ

ԳՐԻԳՈՐԻՍ ներս հոնելուն պէս եղբայրը ունելով:

Եկուր, եկուր, եղբայր, մէկտեղ աղաշենք որ հօրս
տեղ զիս բանտարկէ: Թէ հայրս եւ թէ դուն կրնաք
աշխատիլ եւ իր պարտքը վճարելու համար ստակ
ժողվել. իսկ ես բան մը չեմ կրնար ընել:

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ սէրու լորժան

Ի՞նչափ կը բաղձայի որ իմ զաւկըներս ըլլայիք:
ԳԵՂԱՄ

Թէ որ այնպէս ըլլար նէ, ստուգիւ հայրս բանտ
չէր մտներ: Այնչափ կ'աղաշեինք որ . . . :

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ

Իսկ թէ որ ես ձեր հօրը պարտապան ըլլայի, եւ
ինք զիս բանտարկել տալ ուզէր:

ԳՐԻԳՈՐԻՍ

Տարակոյս մ'ունենաք, թէ հրամանոցը համար մեր
հօրը կ'աղաշեինք որ անանկ բան չընէ:

ԳԵՂԱՄ

Անշուշտ հրամանոցը զաւկըներն ալ հրամանքնիդ
այնպէս կը սիրեն, ինչպէս որ մենք մերինը կը սի-
րենք, եւ մեր ունեցած ցաւէն կ'իմանանք որ անոնք

ալ ի՞նչ մեծ կակիծ կ'ունենային հրամանոցը բանտարկութեան վրայ: Ուստի գոնէ իրենց համար . . . :

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Անոր երաշխաւոր չեմ կրնար ըլլալ: . . . Բայց ստուգիւ սրտանց կ'ուղես հօրդ տեղ բանտ մանել:

ԳՐԻԳՈՐԻՍ

Հրամմեր եք, որտանց եւ ուրախութեամբ:

ԳԵՂԱՄ

Հարկաւոր չեմ որ բանտ մանես, ՊՐ. Հմայեակ իմ վճարածս կ'ընդունի, այնպէս չեմ մը: (Նոյն մշտցին Սահակ ներս մտնելով՝ հօրն ականջն ի վար բան մը իւ ուռուցէ: ՊՐ. Հմայեցի կ'ուղեւ դուրս ելլել:)

ԳՐԻԳՈՐԻՍ

Թուղ չեմ տար որ դուրս ելլեք: Անմիջապէս զիս հօրս տեղը բանտ խրկեցէք:

ԳԵՂԱՄ

Մեղի ապահովութիւն չտուած՝ դուրս մ'ելլեք:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Քիչ մը հոս կեցէք. ես հիմա կու գամ: (ԱԵՐԻԱԿ:)

ՏԵՍԻԼ ԺԵ.

ԳԵՂԱՄ, ԳՐԻԳՈՐԻՍ, ՍԱՀԱԿ

ՍԱՀԱԿ՝ ԳՐԻԳՈՐԻՆ

Հիմա ի՞նչ պիտ'որ ընէք, Պարոն. արդէն բանտառապահն եկած է. հիմա զձեղ պիտ'որ առնէ տանի:

ԳՐԻԳՈՐԻՍ

Աիրով կ'երթամ, միայն թէ հայրս ազատի:

ՍԱՀԱԿ՝ ԳԻՎԻ

Դուք ալ չեք ուղեր մէկտեղ բանտ երթալ: Թէ որ հարկ կ'ըլլայ նէ, ձեզի համար ալ հօրս միջնորդ կ'ըլլամ. կը տեսնէք որ աս Պարոնին (ԳՐԻԳՈՐԻՆ իւ ցուցընէ:) համար ըրած միջնորդութիւնս ի՞նչպէս ընդունելի եղաւ:

ԳԵՂԱՄ

Կարծեմ թէ հարկաւոր չըլլար : Հօրս պարտքն արդէն վճարուած է :

ՍԵՎԵՐ

Ստուգիւ : Վճարողն ալ անշուշտ դուք էք : Անինչ աղէկ հայր պիտ'որ եղած ըլլայ ձեր հայրը, որն որ զաւկըներուն այնչափ ստակ կու տայ՝ որ կարող կ'ըլլան իր պարտքերը վճարել, եւ ինք քովին՝ իր պարտքը վճարելու չափ ստակ չխպահեր : Ալ չեմ զարմանար որ իրեն այսչափ սէր ունիք :

ՏԵՍԻԼ ԺԻ.

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐԸ, ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ, ՊՐ. ԲԱԲԿԵՆ, ՊԱՃՈՅՑ

ԳՐԻԳՈՐԻԱՆ ՀՕՐԸ ՀՐԱՄ ՀԱՇՎԵԴ:

Ե՛ս, իմ սիրելի հայրս :

ԳԵՂԱՄ ԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ :

Ի՞նչ, հայրս արդէն ազատեր է :

ՊՐ. ԲԱԲԿԵՆ

Իմ սիրելի զաւկըներս : (ԶԱՐԵՆ+ իւ ժրէն :)

ԳԵՂԱՄ ԱՒՋԱՆԻՆ ՀՐԱՄ ԵԼԱՇ ԱՊՀԻՆ ԱՌՐՈՒՇ ՊՐ. ՀԱՅՐԵՆԻՆ
ՉՈՎԵՋՆԵԼՈՒ :

ԱՀԱՅԱՍԻԼ, ՊՐ. ՀԱՄԱՅԵԱԼ, Առէք, ամէնն ալ աւ ու էք :

ՊՐ. ԲԱԲԿԵՆ՝ ԳԻՂԱՐԴԻՆ :

Ա՛ս ինչ է, ի՞նչ ես ըրեր, ԳԵՂԱՄ :

ԳԵՂԱՄ

Մի սրդողիք, սիրելի հայր. պարտքս կատարեցի,
իմ սիրոյս ինծի ցուցըցածն ըրի : Ի՞նչ, անանկ բան
մ'ունենամ՝ որովհ կարող ըլլամ հրամանքնիդ ազա-
տել, եւ քովս պահեմ ու հրամանքնիդ բանտի մէջ
մնաք : Զէ, չէ, սիրելի հայր. հարկ ըլլայ նէ՝ մինչեւ
արեանս վերջին կաթիլը պատրաստ եմ տալու :

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Քու բարի սիրտդ կը ճանշնամ: Աակայն աս ըրածդ
խոհեմութեան դործք չէ:

ԳԵՂԱՄ

Բայց արդար է: Թողութիւն տուեք, հայր. հրա-
մանքնիդ ինձի օրինակ եղաք: Ինք զինքնիդ կը զո-
հեք՝ որպէս զի զաւկըներնիդ ունեցածնին պահեն.
մենք ուրիշ կերպ կրնայինք մի վարուիլ:

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Ըրածդ իրաւանց ալ գեմ է: ... ՊՐ. Հմայեակ, կը
յուսամ որ յանձն չեք առներ. դուք ալ զաւկի տէր էք
...: Մտիկ ըրէք եւ դատաստանը դուք կտրեցէք:
ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ

Հարկ չկայ որ նորէն լսեմ, ամէն բան դիտեմ:

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Ուրեմն զաւկըներուս գթացէք եւ զիս նորէն իմ
բանաս դարձուցէք, մինչեւ որ կարենամ պարուքս ...:

ԳՐԻԳՈՐԻԱՆ

Զէ, սիրելի՛ հայր. ՊՐ. Հմայեակ զիս պատանդ
կ'առնէ: Հրամանոցը տեղ ես բանտ պիտ'որ երթամ.
անոր համար հոս եկած եմ:

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Սիրելի՛ Գրիգորիս, քու կամքդ՝ կատարուածի
պէս կ'ընդունիմ: Բայց հիմա գնա ուսումդ յառաջ
տար, որպէս զի ժամանակին եղբօրդ հետ մէկտեղ
ինձի միսիթարութիւն կարող ըլլաս տալ եւ օդնու-
թիւն ընել:

ՊՐ. ՀՄԱՅԵԱԿ սաստիւ լարժած

Բաւական է, բաւական է, ալ չեմ կրնար դիմա-
նալ: (Գեղաժնի:) Առէք, զաւակս, առէք բոլոր բե-
րածնիդ: Մեղք կը սեպեմ մէջեն կտոր մը բան
քովս պահելը, թող թէ բոլորն առնելը:

ԳԵՂԱՄ

Իսկ հայրս չեմ առներ, մինչեւ որ . . . :

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Առեւք, առեւք: (Պատճյան յեւեր իշնէ հօրը, որ իրեն նայէ. Պր. Հմայեակ միու զիդներ: Պր. Բաբէինին:) Պարոն, ձեր որդւոցը սիրոյն համար՝ ամբողջ տարի մը ժամանակ կու տամ: (Գեղամ՝ ու Գլեխորին՝ ուրախութեամբ յեւեւըները իւ պատճնեն:)

ԳԵՂԱՄ

Ի՞նչպէս շնորհակալ ըլլամ հրամանոցը բարութեան համար:

ԳՐԻԳՈՐԻՍ

Խօսքերնուս տեղ արցունքնիս իմացընեն զդացածնիս:

Պր. ԲԱԲԿԵՆ Պր. Հմայեակին յեւեւը իւ բունէ:

Ես ալ գործքով կը ցուցընեմ իմ երախտագիտութիւնս: Թէ որ Աստուած կ'ուզէ նէ, շատ չ'անցնիր՝ կը վճարեմ:

ՊԱՇՈՅՃ

Սա ազնիւ զարդերը մէջ մ'ալ տեսնեմ:

ԳԵՂԱՄ իւ շատընէ, եւ մէիս մէիս նայած ապէն՝ սոին շմային սունեցած բազանուը պետական՝ հօրմէն հրաման չ'առնէ եւ նոյն իրէն իսու ուոյ:

Ընդունեցէք, Պարոն, աս շնչին նուերը՝ իբրեւ ձեր հօրը բարութեան համար ունեցած երախտագիտութեանս փոքր նշանակ մը:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Զէ, բայցարձակապէս չեմ ուզեր որ առնես. շուտով ետ տուր:

ՊԱՇՈՅՃ

Պարոնն ինծի պարդեւ տուաւ, անանկ չէ՞ մի:

ԳԵՂԱՄ

Հրամեր էք, որտանց եւ ուրախութեամբ կու տամ:

ՊԱՇՈՅՃ

Մարդս պարդեւ առած բանին վրայ իրաւունք ունի: Շղթան իմս է, չեմ թողուր:

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Բայց ես՝ իբրեւ հայր՝ կ'արգելեմ, չեմ ուզեր որ
առնես։

ՊԱՇՈՅԱ

Առած եմ, ետ չեմ տար։ (Վաղելով դանձն դուքս
էելլէ։ Հայրը երեւէն իը վաղէ։)

ՍԱՀԱԿ Ի՞՞ իրեն։

Ես ալ կը յուսայի որ ինձի ալ բան մը կ'երթէ,
բայց պարապ է։ Չեմ գիտեր հայրս այսօր ի՞նչ է
եղեր։ (Կ'երթայ։)

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ ներս դաշտ արեն իրեն պատահելով։

Եզրօրդ ըսէ որ առածը ետ տայ, ապա թէ ոչ
ծայրը շատ գեշի կ'երթայ։ . . . Ստուգիւ զիս կիրք
հանեց։ . . . Երանի ձեղի, ՊՐ. Բարկէն, որ այս-
պէս բարի ու կրթուած զաւկըներ ունիք։

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Թէ որ հրաման կու տաք նէ՝ համարձակ խօսիմ։

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Խօսեցէք, խօսեցէք, համարձակ խօսքը կ'ախոր-
ժեմ։

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Շատ կը վախնամ որ զաւկըներնուդ ասանկ ըլլա-
լուն պատճառը դուք էք։

ՊՐ. ՀՄԱՑԵԱԿ

Ի՞նչ, ես մի պատճառ ըլլամ։ Իրենց ի՞նչ բանի
պակսութիւն կրել տուած եմ. բոլոր հոգս, մտած-
մունքս ան է որ իմ կենդանութեանս ատեն եւ
մեռնելէս ետեւ ամենեւին նեղութիւն մը չկրեն։

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Արտերնիդ չնեղանայ, Պարոն. աս սխալմունքը
շատ ծնողքներ կ'ընեն. իրենց զաւկըներուն՝ միայն
հարստութիւն ձգելու կ'աշխատին, եւ բոլորովին ան-
փոյթ կ'ըլլան զիրենք ըստ պատշաճի կրթելու։ Ա-
սով տղօց սրտին մեջ պղտիկուց հարստութեան վրայ

Այծ սէր ու Համարում կը ծնանի . եւ մտքերնին դնելով որ Հարստութեամբ ամէն բան կրնան ստառնալ եւ ամէն պակառութիւններնուն տեղը լցըրնել , ամեննեւին ուրիշ բան չեն մտածեր : Աստուծոյ , իրենց ծնողաց եւ ուրիշ մարդիկներուն ունեցած պարտքերնին կատարելու հոգ չեն ունենար : Ուստի ասանկ տղաց վրայ Հասարակօրէն ոչ աստուածսիրութիւն , ոչ ծնողասիրութիւն , ոչ Հայրենասիրութիւն կը տեսնուի :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Ստոյդ է , իրաւունք ունիք : . . . Զաւկըներս ինծի զրեթէ սէր չունին : . . . Բայց ըսէք ի՞նչ պէտք եմ ընել՝ որ իմ զաւկըներս ալ օր մը ձերիններուն նմանին , կամ թէ դուք ի՞նչպէս ըրիք՝ որ զաւկըներնիդ այսպէս աղէկ եղան :

ՊՐ . ԲԱԲԿԻՆ

Պղտիկ տարիքներնեն միշտ ջանացած եմ սրտերնուն մէջ Աստուծոյ եւ առաքինութեան սէր տնկելու . ձեռքէս եկածին չափ ետեւէ եղած եմ մտքերնուն մէջ աղէկ Հաստատելու որ թէ աս եւ թէ անդիի աշխարհք երջանիկ ըլլալու Համար՝ ասիկա եւ միայն ասիկա Հարկաւոր է : Միանդամայն ջանացած եմ սորվեցընելու որ Հարստութիւնն ու պատիւր՝ ան ատեն օդտակար կ'ըլլան , երբ որ մարդ զանոնք աղէկի կը գործածէ : Ասկից զատ՝ զիրենք դատարկութենէ եւ չար ընկերներէ Հեռացընելու եւ իրենց վիճակին պատշաճ եղած ուսումները սորվեցընելու փոյժ տարած եմ : Մէկ կողմանէ ամէն Հրամաններուս հնազանդել տալու եւ մէկալ կողմանէ ամէն առթի մէջ իրենց ունեցած սէրս ցուցընելու ջանք ըրած եմ : Կրնամ ալ ըսէլ որ միշտ վրանին գոհ եղած եմ :

ՊՐ . ՀՄԱՑԵԱԿ

Ես ալ ամօթովս կը խոստովանիմ որ աս բաներէն

ամենեւին մէկը մտքես ալ անցած չունի : . . . Բայց
ասոր վրայ ուրիշ անգամ խօսելու առիթ՝ կ'ունենանք :
Հիմա մեր գործքին գալով՝ ամէն բանէն յառաջ
թողութիւն կը խնդրեմ թէ ձեզի եւ թէ ձեր բա-
րի զաւկըներուն հասցուցած վշտիս համար : Եւ ա-
սոր փոքր հաստոցում մ'ընելու համար՝ հիմա իրենց
առջեւը կը յայտնեմ որ ամենեւին ձեզմէ առնելիք
մը չունիմ:

ՊՐ. ԲԱԲԿԻՆ

Ձէ, չէ . պարտքս՝ պարտք է . եւ ինչպէս ըսի՝ կը
յուսամ որ քիչ մը ետքը ամբողջ կը վճարեմ :

ՊՐ. ՀՄԱՅԵՎԱԿ՝ առանց ամենիւնին խօսու մ'ըսելու նորու-
թուն մէջ ինուրելով՝ պարտականութեան նուշնեւ էւ հանէ, ու
իւ պարուեւ :

Մինչեւ հիմա ցուցուցած խստասրտութեանս հա-
մար զիս մի պատժէք : Ահաւասիկ պարտականու-
թեան թղթերնիդ պատուեցի : . . . Ո՛հ, ձեր զաւ-
կըներովը որչափ հարուստ էք : Հիմա կը տեսնեմ որ
հօր մը ամենէն մեծ հարստութիւնն իր բարեկիրթ-
եւ առաքինի զաւկըներն են :

Պ Ե Ր Ա

Կ Ա Մ

ՊԵՏԱԿԱՆ ՅԵՒԶԵՎԵՈՒՆԵ

Ա Ն Զ Ի Ն Ք

ՊՐ + ՎԱՀԵ :

ՏԻՐԱՆՆ }
ՊԵՐԱ } իր որդիքը :

ՆԵՐՍԻՍ ,

ՀԱՄԱՁԱԾՈԳ , ԿԵՐԱՒ-

ԱԻՆ պղտիկ եղբայրը }
ՎԱՀԵԱՆ : } Տիրանին ու Պէրճին աշակերտա-
կիցներն ու բարեկամները :

ՄԵՍՐՈՊ , ՎԱՀԵԱՆԻՆ

պղտիկ եղբայրը ,

ԳԵԼՈՒՏՈՏ , ՊՐ + ՎԱՀԵԻՆ ծառան :

Տեսարանը ՊՐ + ՎԱՀԵԻՆ առան մէկ խցին մէջն է , որն որ
երկու դռւու ունի :

ՊԵՐՃ

ԿԱՄ

ՊԵՏԺՈՒՄՅՈ ՅԵՆՉԵՎՊԵՍԵՐ

ՏԵՍԻԼ Ե.

ՊԵՐՃ ՊԵՐՃ :

Այսօր ծննդեանս օրն է. անշուշտ հայրս պարգեւ
մը կու տայ: Ես ալ պէտք է որ խելօք ձեւանամ,
որպէս զի մարդու պէս բան մ'առնեմ: Արդեօք քիչ
մ'առաջ Գալուստին՝ զգեստին տակ բերածն ինչ
էր: Հը. թէ որ այսօր ստահակութիւն ընելը բանիս
ձեռք տար նէ ինչ ըլլալը կ'իմանայի, պէտք էր որ
ուզեր չուզեր՝ ցուցընէր. բայց ինչ ընեմ՝ այսօր աղեկ
կենալ ձեւացընելու է: Հա՛, հայրս ահաւասիկ կու
դայ, ես հիմա իրմէ կ'իմանամ:

ՏԵՍԻԼ Ի.

ՊԻ. ՎԱՀԵԿ ԱՒՐԵ ԱՐԱՀ Է: ՊԵՐՃ

ՊԻ. ՎԱՀԵԿ

Իսուն հոն ես եղեր, Պերճ: ... Արդէն քեզի շատ
տարիներ մաղթեցի, բայց ան բաւական չէ, այնպէս
չէ մի:

ՊԵՐՃ

Ո՞հ, հայր, հրամանոցը սէրն ինծի բաւական է: ...
Բայց ձեռքի սրերնիդ ինչ պիա՞որ ըլլայ ・・・ ու
ըստն համար է:

ՊԻ. ՎԱՀԵԿ

Գիտնալով որ շատոնցուընէ խիստ կը բաղձաս
սուր մ'առնենալ, ուզեցի ծննդեանդ օրը զքեզ
ու բախացընել:

ՊԵՐՃ

Ի՞նչ, ինձի համար է: Տուեք, տուեք, տուեք.
ալ ասկէ ետեւ փոյթեռանդ եւ հնազանդ կըլլամ,
միշտ հանդարտ կը կենամ:

ՊՐ. ԱԱՀԵ

Ես ալ ան յուսով որ աս շատ անգամ ըբած
խոստմանդ մէջ ասկէ ետեւ հաստատուն կը կենամ՝
բաղձանքդ կը կատարեմ:

ՊԵՐՃ

Ի՞նչ երջանկութիւն: Բարեկամներս հիմա վրաս
ինչպէս մեծ համարում պիստոր ունենան:

ՊՐ. ԱԱՀԵ

ՊԵՐՃ, հպարտութենէդ ու յանձնապաստանու-
թենէդ վախցիր, եւ աղէկ գիտցիր թէ կը պահան-
ջեմ որ ընկերներուդ եւ քեզմէ վար ըլլողներուն
հետ սիրով ու քաղցրութեամբ վարուիս, ապա թէ
ոչ տուած պարզեւիս անարժան կըլլաս: Առ աւա-
սիկ սուրդ: բայց յիշէ որ . . . :

ՊԵՐՃ

Ապահով եղէք, սիրելի հայր, որ խրատնիդ եր-
բեք չեմ մոռնար:

ՊՐ. ԱԱՀԵ ԴԱԿԻԼԻՆ ԵՎԻՆ:

Շատ աղէկ վայլեց: Նայիմ որ ընկերներուդ հետ
մանաւանդ այսօր ըստ պատշաճի վարուիս, եւ գոնէ
այսօր քու պատճառաւդ գլխու ցաւ մը չունենամ:

ՊԵՐՃ հօրը ՅԵՐԵՒ ՊԱՐԻՆԵԼ:

Սիրելի հայր, խոստումն խոստում է. չէ թէ միայն
այսօր հապա ասկէ վերջը երբեք հրամանոցը սրտնե-
ղութիւն չեմ պատճառեր:

ՊՐ. ԱԱՀԵ

Աստուած տայ: (ԴԱԿԻԼԻՆ Ի'ԵԼԷ:)

ՏԵՍԻԼ Գ.

ՊԵՐՃ առաջնային : Այսեւին մէջ շահուստները մը իւ պատճիք ,
և երբեմ երբեմ իւ դաւանայ երեւը իւ նայի :

Այսպէս . Հիմա ընկերներս ալ կ'իմանան իմ ով
ըլլալս : . . . Ասկէ վերջը հետո ալ այնչափ ընտա-
նութեամբ վարուիլ չըլլար . եւ եթէ սրտերնին կը
նեղանայ նէ՝ թող մարդ ըլլողը դիմացս ելլէ : « ախ
մէյ մը տեսնենք սա սրոյն բերանն ինչպէս է : (Առա-
ռը իւ հանէ եւ զարհուրելք իւրագանդ մը իւ յեւացընէ :)
Կարծեմ զիս ծաղը ընել կ'ուզես , արմարդի . զգու-
շացիր , չե նէ կը զարնեմ . . . : Մէկդի կ'ըսեմ
կոր , ապա թէ ոչ սրոյս զօրութիւնն ամենէն յա-
ռաջ դուն կը զգաս :

ՏԵՍԻԼ Գ.

ՊԵՐՃ ՏԻՐԱՆ

ՏԻՐԱՆ՝ ո՞ր եղօրը Արևին խօսերը դրանք լսած
եր , վաղելուն ներս իւ հրանէ :

Աս ի՞նչ է , ՊԵՐՃ . Խելքդ կորսընցուցելը ես :
ՊԵՐՃ

Ի՞նչ , զո՞ւն ես :

ՏԻՐԱՆ

Ես եմ , ով պիտ'որ ըլլար : Բայց քու կոիւդ ո-
քուն հետ է : . . . Ան ի՞նչ է . ձեռքի սուրդ ի՞նչ
պիտ'որ ընես :

ՊԵՐՃ

Ի՞նչ պիտ'որ ընեմ : Աս ալ հարցընելու բան է :
Ան պիտ'որ ընեմ ի՞նչ որ քաջասիրտ մարդ մը
կ'ընէ :

ՏԻՐԱՆ

Բայց սա ամենէն յառաջ սրոյդ զօրութիւնն իմա-
ցողն ով է :

ՊԵՐՃ

Ինձի դէմ դնելու յանդզնողը :

ՏԻՐԱՆ

Ան ատեն քեզմէ աղէկ զգուշանալու է, չըսես :
ՊԵՐՃ

Կատակ մ'ըներ, Տիրան . ապա թէ ոչ ինք զինքս
յարգել կու տամ :

ՏԻՐԱՆ

Ճնորհք ըսէ սորվեցուր թէ ինչ ընելու եմ, որ
պէս զի հետդ յարգութեամբ վարուիմ :

ՊԵՐՃ

Նախ եւ յառաջ պէտք է որ մեծարանքով բարեւ
տաս :

ՏԻՐԱՆ հետապնդան իւրուշ իսորին յարդութեամբ բարեւ
իւր դայ :

Ամենախոնարհ ծառանիդ եմ, Տէր իմ :

ՊԵՐՃ

Քեզի մէյ մ'ըսի որ կատակ չեմ ուղեր :

ՏԻՐԱՆ

Մարդ ինչպէս կրնայ յանդգնիլ հրամանոցը պէս
երեւելի անձ մը կատակել : Բայց պէտք է մեր ըն-
կերներուն ալ աղդ ընել, որ չըլայ թէ յարգու-
թեան մէջ պակսութիւն մ'ընեն :

ՊԵՐՃ

Անոր հոգն ինծի թող, անիկա իմ դործքս է . եւ
թէ որ աս բանիս մէջ պակսին նէ չափերնին կը
ճանչցընեմ :

ՏԻՐԱՆ

Ստուգիւ ամեն մարդ պէտք է որ առկէ ետեւ առ-
ջեւդ խոնարհի . . . : Աակայն, ՊԵՐՃ, սրոյդ էական
մէկ զարդը պակաս է :

ՊԵՐՃ սուրբ իւ ժամի եւ ամեն իսու դարձնելով հրամանա-
կանը իւ նայի :

Ի՞նչ պակաս է, ես ամենեւին պակաս բան մը
չեմ տեսներ :

ՏԻՐԱՆ

Զարմաննք . . . ուր է դաստապանին ծոսը : Թէ

որ վրան ոսկիեւ աղուոր ծոպ մ'ըլլար նէ՝ ինչ աղեկ
կը վայլէր:

ՊԵՐՃ

Աղեկ ըսիր. ա՛հ, աղուոր ծոպ մ'ունենայի: . . .
Բայց հիմա ուսկից գտնեմ:

ՏԻՐԱՆ

Ա'ուզես նէ՝ մօրերնուս աղաչեմ. ապահով եմ որ
Հէ չըսեր:

ՊԵՐՃ

Քեղի շատ երախտագէտ կ'ըլլամ: Ես ալ ուրիշ
անդամ քեղի համար բան մը կ'առնեմ:

ՏԻՐԱՆ

Միայն թէ երախտագիառութիւնդ ցուցընելու հա-
մար՝ սրոյդ զօրութիւնն ամենէն յառաջ իմ վրաս
չփորձես:

ՊԵՐՃ

Ի՞նչ կ'ըսես. ահաւասիկ ձեռքս՝ որ միշտ մէկտեղ
աղեկ կը մնանք: Բայց շուտ ըրէ: Կ'ուզեմ որ սա մեր
պղտիկները գան նէ՝ զիս իմ փառաւորութեանս մէջ
գտնեն:

ՏԻՐԱՆ

Ամենէն հարկաւոր բանը կը մոռնաս. սուրդ առուր
որ երթամ:

ՊԵՐՃ

Ահաւասիկ, առ: Շուտով գնա: Լմբննալէն ետեւ
խուցս, զրասեղանիս վրայ դիր, որ հարկ եղած ա-
տեն գտնեմ:

ՏԵՍԻԼԵ.

ՊԵՐՃ, ՏԻՐԱՆ, ԳԱԼՈՒՍ

ԳԱԼՈՒՍ

Պարոնայք, ձեր բարեկամներէն չորս հոգի ե-
կած են:

ՊԵՐՃ

ԹԱՊՂ ՎԵՐ ԴԱՆ :

ԳԱԼՈՒՍ

Տիկինը պատուիրեց հրամանոց ըսելու որ իշնաք՝
զիրենք դիմաւորեք :

ՊԵՐՃ

Շիտակը հետերնին այնչափ քաղաքավարութեամբ
վարուելու մարդ են : Բայց հիմա մօրս անհնազան-
դութիւն ընելու ատեն չէ : (Տիրանին :) Դուն ալ ինչ
կ'ընես . շուտով դնա, սուրս կարդի դիր . դրասե-
ղանիս վրայ պատրաստ ըլլայ : (Գալուստովն հետ-
քուրս իւլլէ :)

S E U T I . 9.

ՏԻՐԱՆ ՊՐՈԿՐԻՑԻ :

Փա՛ռք Աստուծոյ, սուրը ձեռքս է : Ի՞նչ վախ քա-
շեցի . կը վախնայի որ վեաս մը չելլէ : Ո՛չ, ՊԵՐՃ,
ՊԵՐՃ . թէ որ հայրս այսպէս յանձնապաստան ու-
կոււասէր ըլլալդ գիտնար, ստուգիւ քեզի ասանկ
վտանգաւոր պարդեւ մը չէր տար : Բայց պէտք է որ
բանն իրեն հասկըցընեմ : . . . Հա՛, ինք կու գայ :
(Դիմացը իւ խողէ :)

S E U T I . 1.

ՊՐ . ՎԱՀԱՀԻ . ՏԻՐԱՆ

ՏԻՐԱՆ

Աիրելի՛ հայր, ես ալ հրամանոցը կը վազէի :
ՊՐ . ՎԱՀԱՀԻ

Կայինք արդեօք ինչ ստիպողական բան ունիս ըսե-
լու . . . : Բայց եղբօրդ սուրը քու ձեռքդ ինչ
գործք ունի :

ՏԻՐԱՆ

Իրեն խոստացայ որ աղուոր ծոպ մը դնեմ. բայց
դիսաւոր պատճառս ան էր որ մէյ մը ձեռքէն առանեմ: Կ'աղաչեմ, հայր, առելք ու մէյ մ'ալ ձեռքը
մի տաք:

ՊՐ. ՎԱՀԵ

Ի՞նչ բանի համար մէյ մը տուած պարգեւս ձեռքէն առնեմ:

ՏԻՐԱՆ

Աիրելի հայր, կ'աղաչեմ, զիս խօսելու մի ստիւպէք:

ՊՐ. ՎԱՀԵ

Չէ, կ'ուզեմ որ ըսես:

ՏԻՐԱՆ

Չէի ուզեր զբուցել, բայց վերջին հարկը կը ստիւպէ: Գիտցած ըլլաք որ Պերճ եղբայրս սաստիկ յանձնապատճան ու կռուոտ է. քիչ մը յառաջ վրան հասայ որ հոստեղս առանձին կեցած ատեն՝ մէկու մը հետ կռուելու պէս սրախաղութեան ձեւ եր կ'ընէր, եւ կը սպառնար որ ընկերներուն մէջէն զինքը պէտք եղածին չափ չպատուղին՝ իր սրոյն զօրութիւնը կը ցուցընէ:

ՊՐ. ՎԱՀԵ

Անմիտ տղան. թէ որ ան սուրն իր յանձնապատճանութիւնն յագեցընելու համար գործածել ուղէ նէ, ստուգիւ ամօթով կ'ելլէ: Ինձի տուր նայիմ սուրը:

ՏԻՐԱՆ ԴԱ ԴԱՅ:

Հրայեցէք առելք: Բայց եղբօրս ձայնը սանդղին վրայէն կը լսուի:

ՊՐ. ՎԱՀԵ

Մենք դուրս ելլենք: (Քայլք դանէն դասրս իւլլեն:)

ՏԵՍՏԻ Բ.

ՊԵՐԱ՝ ՎԱՀԱՆ, ՄԵՍՐՈՊ, ՆԵՐՍԻՍ, ՀԱՄԱԶԱՍՊ
ՊԵՐԱ ՔՈՐՈՉՈՒՆԻՇԻ Ի ՍՐՎԵԿԻՆ ՆԵՐՈ Ի ՄՐԱԿ, ԹԻՄՈՆԻՇ
ԼՐԵԿԻՆ :

ՎԱՀԱՆ ՔԱԾՆ ՅԱՅՆՈՂ՝ ՆԵՐՈՒԻՆԻ :

Շիտակը, Պր. Պերճ զմեղ շատ քաղաքավարութեամբ կընդունի :

ՆԵՐՍԻՍ ԿԱՅՆ ՔԵՐՊՈՂ :

Ո՞վ գիտէ, գուցէ հիմակուան նոր սովորութիւնն
ասիկա է :

ՊԵՐԱ

ՔԺԻԴԻԴ տակէն ի՞նչ կը խօսիս :

ՎԱՀԱՆ

Քեզի հետ չեի խօսեր :

ՊԵՐԱ

Արդեօք անանկ բան մըն է որ ես չեմ կընար
իմանալ :

ՆԵՐՍԻՍ

Կընայ ըլլալ :

ՊԵՐԱ

Ապա ուրեմն կ'ուզեմ իմանալ, եւ պէտք է որ ի-
մանամ :

ՆԵՐՍԻՍ

Բայց պէտք է որ յառաջադոյն ցուցընես թէ ի-
րաւունք ունիս իմանալու :

ՎԱՀԱՆ

Կամաց, կամաց, Ներսէս, Պր. Աւաշէն տունն է
եղեր :

ՆԵՐՍԻՍ

Չեմ գիտեր արդեօք Պր. Վահէ իր որդւոյն հրա-
ման կու տայ որ իր ընկերներուն հետ տմարդութեամբ
վարուի :

ՊԵՐԱ

Տմարդութիւն մի . . . : Աըւոր ըսած խօսքը նայէ

մէյ մը : . . . Տմարդութիւն, հա՛ : . . . Զձեղ տունս
ընդունելս ալ ձեզի մեծ պատիւ է:

ՎԱՀԱՆ

Ուրեմն պէտք չէիր հրաւիրել:

ՊԵՐՃ

Բանս գործքս հատեր էր որ զձեղ հրաւիրէի :
Գիտցած ըլլաս որ հրաւիրողն ես չեմ, հայրս հրաւի-
րել տուառ :

ՆԵՐՍԻՍ

Ուրեմն ինչ կեցեր ենք, երթանք Պր. Վահեին
շնորհակալ ըլլանք, եւ նոյն առթիւ միանգամայն իր
քաղաքավար որդւոյն մեզի ըրած աղէկ ընդունելու-
թիւնն իմացընենք :

ՊԵՐՃ +ԻՆ ԻՇ ՊՅՈՒՅԾ :

Ա՛, դուն ալ միշտ անդիի կողմը կ'անցնիս : . . .
Ես կատակ կ'ընէի : . . . Այսօր ծննդեանս օրն է .
կեցէք աղէկ մը զբօնունք :

ՆԵՐՍԻՍ

Ա՛ ինչ որ է նէ . բայց ասկէ վերջը նայէ որ ըն-
կերներուդ հետ քիչ մը աւելի քաղաքավարութեամբ
վարուիս :

ՎԱՀԱՆ

Դուն ալ հանդարտէ . բարեկամութիւննիս պա-
րապ աեղ չաւրենք :

ՄԵՍՐՈՊ

Ուրեմն այսօր ծննդեանդ օրն է եղեր, չէի գի-
տեր . շնորհաւո՞ր ըլլայ :

ՀԱՄԱԶԱՍՊ

Շատ տարիներու համնիս : Անշուշտ աղէկ պար-
դեւներ առած պիտ'որ ըլլաս : Ըսէ նայիմ՝ հայրդ
ինչ տուառ :

ՄԵՍՐՈՊ

Անտարակոյս խել մը շաքարեղէն գնած պիտ'որ
ըլլայ :

ՊԵՐՃ

Չաքարեղէն . մէջ բան : Չաքարեղէն ամէն օր ու զածիս չափ ունիմ :

ՀԱՄԱԶԱՍՊ

Ուրեմն ստակ տուած պիտ'օր ըլլայ :

ՊԵՐՃ

Կարծեմ դուք զիս տղու տեղ կը դնէք : Հայրս անանկ բան մը տուաւ, որն որ միայն ես կրնամ գործածել :

ՀԱՄԱԶԱՍՊ

Ի՞նչ որ ըլլայ նէ ըլլայ, կարծեմ թէ ինծի ալ տային նէ ես ալ կրնայի գործածել :

ՊԵՐՃ արհամարհելով ճ:

Դուն . նայինք մէյ մը հասակդ երկու թիզ ըլլայ : (Ներսիսն ու Վահանին՝ որոնտ արանցին իը իօսին :) Դուք մէջերնիդ ի՞նչ կը մրմռաք : . . . Ահաւասիկ Գալուստ ուտելու բան կը բերէ : Աթոռ առէք, նստեցէք : (Գալուստ սեղանին վրայ անուշընէն իը դնէ ու դուրս ի՞ելլէ : Պերճ երկու պղպէիներուն ժեկը բան իսու բայ, եւ իսու այնչափ շատ կ'առնեէ որ երկու մէջերուն ամենեւին բան մը չիմար :) Անշուշտ մայրս ուրիշ բան ալ կը խաւրէ :

ՆԵՐՍԻՍ

Մենք բան մը չենք ուտեր :

ՊԵՐՃ

Կ'ուզէք կ'երէք, կ'ուզէք մ'ուտեք . հոգս չէ, հասկըցար :

ՆԵՐՍԻՍ

Ասոր վրայ տարակոյս չունէի : Բայց որովհետեւ դուն համարձակ խօսեցար, ես ալ պէտք է որ սըրտինս զրուցեմ : Թէպէտ զքեզ կը ճանչնայի, բայց այսչափ բիրտ ու անքաղաքավար ըլլալդ չէի դիտեր :

ՊԵՐՃ

Բիրտ ու անքաղաքավար, հաւ . հիմա քեզի ուլ

ըլլալս կը սորվեցընեմ։ (Բարիս-Ռետարդ վեր իւ շատիէ,
դուրս էլլում։)

ՏԵՍԻԼ Թ.

ՆԵՐՍԻՄ, ՎԱՀԱՆ, ՀԱՄԱԶԱՍՊ, ՄԵԽՐՈՊ
ՎԱՀԱՆ

Ի՞նչ ըրիր, Կերսէս։ Առանց կարծեաց պիտ'որ
երթայ հօրը՝ վրանիս հազարումէկ խօսք պիտի խօ-
սի, եւ զմեզ յանցաւոր պիտի ձգէ։ Ըիտակը այս-
օր աղէկ զբօսանէք մը կ'ընենք։

ՆԵՐՍԻՄ

Ամենեւին չեմ վախնար։ Պր. Վահէն աղնիւ ու
արդար մարդ մըն է, եւ անշուշտ իր որդւոյն ի՞նչ
տեսակ բնութեան տեր ըլլալն ալ աղէկ կը ճանչնայ։
Ես հիմա իրեն կ'երթամ, ամենայն ի՞նչ տեղն ի տե-
ղը կը հասկըցընեմ, թող ի՞նք դատաստան ընէ որ
յանցաւորն ովլ է։

ՏԵՍԻԼ Թ.

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՊԵՐՃ Ի-ԷՐԵՑ ՊՐ. ՎԱՀԵ

Պերճ սուրբ Յերեց Հայութը ներս իւ հրակ։ Երիսու պատի-
ները Հայութը է՛ւրենու անիւն իւ իւ պահութին, իսէ
մէծերը ուղղընին հասպատառն իւ իւնու։ 'Ներսինին։

Հիմա քեզի բիրտն ու անքաղաքավարը կը ցու-
ցընեմ. . . . (Սուրբ պատիւնին հանել է՛նուղը. Բայց
սրբ ուեղ՝ հնդիսահանուի ենցոր գրել ու դուրս է՛նելու։
Երիսու պատիւները իւ սիսն բարյերայան ծիծաղիւ ե-
մօր գուլ։)

ՆԵՐՍԻՄ

Յառաջ եկէք նայինք, Պարոն, քաջութիւննիդ
ցուցընէք։

ՎԱՀԱՆ

Արդէն ինք բաւական ամըչցած է, առելի մի՛ խոնարհեցըներ :

ՄԵՍՐՈՊ

Իր աս զարհուրելի զէնքովը մէկու մը վնաս չիկըսնար տալ :

ՎԱՀԱՆ

Եկէք, բարեկամք, մենք երթանք, որ ինք իրմէ սրախաղութիւն ընէ :

ՆԵՐՄԻՍ

Խելքը գլուխը կրնայինք բերել. բայց կը յուսամ որ առած դասը բաւական է :

ՀԱՄԱԶԱՍՊ

Մնաս բարով, Պարոն Հնդկահաւեանց :

ՄԵՍՐՈՊ

Ստոյդ է որ իրեն պէս զարհուրելի ու մեծ մարդու հետ ընտանութեամբ վարուիլը մեզի չեյնար :

ՆԵՐՄԻՍ

Բայց չգացած՝ երթանք բանը Պր. Վահեին հասկըցնենք, ապա թէ ոչ՝ բոլոր յանցանքը մեր վրայ կ'իյնայ :

ՎԱՀԱՆ

Այնպէս է: Վրանիս ինչ համարում կ'ունենար, թէ որ առանց մնաք բարով ըսելու՝ ձգեինք երթայինք :

Պր. ՎԱՀԱՆ ԿԵՐՈ ԹՐԱՆԵԼՎ:

Աս ինչ է, ինչ պատահեր է: (ՊԵՐՖ ԷԿՐԻԿՈՒՆԻՆԻ ՀԱՅ:)

ՆԵՐՄԻՍ

Թողութիւն առեք, Պարոն, եղած անկարդութեան. ամէնքս ալ ասանկ բան պատահելուն վրայ կը ցաւինք :

Պր. ՎԱՀԱՆ

Դուք թողութիւն խնդրելու պատճառ մը չունիք.

ամէն իրան խմացայ, որդւոյս խօսած անպատշաճ խօսքերը բոլոր լսեցի: Սիրտս աւելի անոր կը նեղանայ՝ որ քիչ մը յառաջ խոստումներ ըրած էր որ մարդու պէս վարուի: Շատոնց է իրեն յանձնապաստանութեան ու բրտութեան նշանները տեսած էի. բայց կ'ուղէի անձամբ փորձել թէ ինչ աստիճանի հասած է: Որպէս զի դժբախտութիւն մը չպատահի, ինչպէս կը տեսնէք՝ սուրն անանկ վիճակի մէջ դրուած է, որ վնաս մը չկիրնար ընել:

ՆԵՐՄԻՒ

Մեղի հրաման տուէք, Պարոն որ երթանք: Անտարակոյս մեր ներկայութիւնը հրամանոց որդւոյն հաճելի չէ:

ՊՐ. ՎԱՀԵ

Չէ. չէ, կեցէք, որդիքս. կրնաք մէկտեղ զբունուլ. հիմա Տիրանը կը խաւրեմ, որ քովերնիդ կենայ: Եկէք ուրիշ խուց մ'երթանք:

ՎԱՀԵ

Հրաման տուէք որ Պերճն ալ քովերնիս մնայ. այսօրուան դէպքն անշուշտ ուրիշ անդամ չիպատահիր:

ՊՐ. ՎԱՀԵ

Միայն աս պայմանով կը հաւանիմ, որ բոլոր օրը գրչէ սուրը վրան կը:





